ԲԱԺԻՆ Դ

ՄՇԱԿՈՒՅԹԸ
1946 - 1965

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո սովետական ամբողջ ժողովուրդը կրկին ձեռնամուխ եղավ խաղաղ ստեղծագործական աշխատանքի։ Սոցիալիզմի կառուցման ավարտման և կոմունիստական շինարարության տարիները Սովետական Հայաստանի համար արտադրողական ուժերի աննախընթաց զարգացման, արդյունաբերության վերելքի և սոցիալիստական գյուղատնտեսության հետագա ամրապնդման ժամանակաշրջան էին։ Հանրապետության էկոնոմիկայի զարգացմանը զուգընթաց էական փոփոխություններ տեղի ունեցան հասարակության սոցիալական կառուցվածքում։ Հայ ժողովրդի պատմության մեջ կարևորագույն իրադարձություն էր հայրենադարձության, այս անգամ արդեն մասսայական չափերով, վերսկսումը՝ աշխարհով մեկ սփռված հայերի ներգաղթը Սովետական Հայաստան։ Ստալինյան տարիներին հայ ժողովուրդը, սովետական ամբողջ ժողովրդի հետ միասին, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում խաղաղության և մարդկության առաջադիմության համար մղվող պայքարին։

Անցած ժամանակաշրջանը նշանավոր էր նաև հայ ժողովրդի մշակութային կյանքում տեղի ունեցած աննախընթաց վերելքով։ Հայ ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք բերեց նշանակալից հաջողություններ հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում՝ ժողովրդական կրթության զարգացման, մասնագիտական կադրերի պատրաստման, գիտության և ազգային գրականության ու արվեստի ծաղկման գործում։ Սովետահայ մշակույթի զարգացման հիմքում ընկած է կոմունիստական կուսակցության ծրագրում առաջ քաշված հետևյալ խնդիրը. «Բոլոր աշխատավորներին դաստիարակել բարձր գաղափարայնության և կոմունիզմի նկատմամբ նվիրվածության, աշխատանքի ու հանրային սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով, լիովին հաղթահարել բուրժուական հայացքների ու բարքերի մնացուկները, բազմակողմանիորեն, ներդաշնակորեն զարգացնել անհատին, ստեղծել հոգևոր կուլտուրայի իսկական հարստություն»[1]։

---

[1] «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», Երևան, 1961, էջ 140։

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Եռպատերազմյան տարիները, հատկապես 50-ական թվականների երկրորդ կեսը և 60-ական թվականները, նշանավորվեցին զգալի փոփոխություններով ժողովրդական կրթության բնագավառում։ Այդ փոփոխությունները վերաբերում էին սովետահայ դպրոցի թե՛ նյութական բազային և թե՛ ամբողջ ուսումնա-դաստիարակչական աշխատանքի դրվածքին։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանի (1946—1950) հաջող կատարումը սովետական պետությանը հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնելու ֆինանսական հատկացումները կուլտուրային ու լուսավորությանը, ծավալել դպրոցական լայն շինարարություն։ 1946—1950 թվականներին կառուցվեց 28 դպրոցական շենք, որից 10-ը՝ քաղաքներում, 18-ը՝ գյուղական վայրերում։ Հաջորդ հնգամյակում շահագործման հանձնվեց դպրոցական 56 շենք, որից 43-ը՝ քաղաքներում, 13-ը՝ գյուղական վայրերում։ Հետագա տարիներին դպրոցական շինարարության տեմպերը գնալով աճեցին։ 1956 թվականին հանրապետությունում կառուցվեց 12 դպրոցական շենք, 1959 թվականին՝ 31, 1961 թվականին՝ 29[1]։ 1965 թվականին կառուցվեց 72 դպրոցական շենք, 1966 թվականին՝ 150։

Բարելավվեցին դպրոցական շենքերի տիպային նախագծերը։ Ճարտարապետները ձգտում էին օգտագործել հայրենական ճարտարապետության լավագույն նվաճումները, աշակերտներին տալ լավ կահավորված ու սարքավորված ժամանակակից շենքեր։ Նորակառույց դպրոցական շենքերն ունեն հատուկ կաբինետներ, ֆիզկուլտուրայի սրահներ, իսկ որոշ մասը՝ նաև լողավազաններ։ Որպես կանոն, բոլոր դպրոցներն ունեն սպորտային հրապարակներ։

Սկսած 1950-ական թվականների կեսերից կոլտնտեսությունները, տընտեսապես հզորանալով, գյուղական շատ վայրերում իրենց միջոցներով կառուցեցին դպրոցական շենքեր։

Դպրոցաշինարարության ծավալման շնորհիվ հանրապետության մեջ դպրոցների թիվը նշանակալից չափով աճեց։ 1967 թվականի սեպտեմբերին Հայաստանում դպրոցների թիվը հասնում էր 1596-ի, ուր սովորում էր 593.395 աշակերտ։ Չնայած դրան, այնուամենայնիվ, դեռևս զգացվում է դպրոցական շենքերի զգալի պակաս։ Դա առաջին հերթին վերաբերում է քաղաքներին, որտեղ պարապմունքները տարվում են երկհերթ։ Այդ պատճառով էլ քաղաքներում դպրոցական շինարարության հետագա ընդլայնումը մնում է ժողովրդական կրթության բնագավառի կարևորագույն խնդիրներից մեկը։

Տակավին մինչև Հայրենական մեծ պատերազմը Հայաստանում աշխատանք էր տարվում անցնելու պարտադիր ուսուցման՝ ոչ-լրիվ միջնակարգ (7 դասարան) դպրոցի սահմաններում։ Եռպատերազմյան առաջին տարիներին այդ աշխատանքը շարունակվեց և հաջողությամբ իրականացվեց։ Այս առնչությամբ, գոյություն ունեցող դպրոցների ընդհանուր թվի մեջ սկսեց ավե-

---

[1] *Տե՛ս* «Культурное строительство Армянской ССР. Статистический сборник», *Երևան, 1962, էջ 14։*

լանալ ոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների քանակը։ Այսպես, եթե 1945—46 ուսումնական տարում հանրապետության մեջ գործում էր 615 յոթնամյա և 300 լրիվ միջնակարգ դպրոց, ապա հետագայում դրանց թիվը մեծացավ՝ 1950—51 ուսումնական տարում համապատասխանաբար հասնելով 670 և 309, 1955—56 ուսումնական տարում՝ 626 և 382, 1960—61 ուսումնական տարում՝ 632 և 405 դպրոցի[1]։

Ոչ-լրիվ միջնակարգ դպրոցի ծավալով ընդհանուր պարտադիր ուսուցման իրականացումը հնարավորություն տվեց հանրապետության ժողովրդական կրթության առջև դնելու նոր խնդիրներ, որոնք սահմանված էին Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարի որոշումներով։ Սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը անհրաժեշտ համարեցին անցնել միջնակարգ ընդհանուր պարտադիր ուսուցման կենսագործման։ Այդ խնդիրը հիմնականում իր լուծումը պետք է ստանար ժողովրդական տնտեսության զարգացման նոր հնգամյակի (1966—1970) ընթացքում։ Այդ նպատակով պահանջվում էր դպրոցական շինարարության հետագա ընդլայնում։ Հիմնական տենդենցը, որ նկատվում է վերջին տարիներին, լրիվ միջնակարգ դպրոցների քանակի ավելացումն է, մանավանդ քաղաքներում։ Առ մեկը սեպտեմբերի 1967 թվականի դրանց թիվը հասել էր 712-ի։ Դպրոցական շինարարության տեմպերի հետագա զարգացումը նախադրյալներ կստեղծի միջնակարգ դպրոցի ծավալով ընդհանուր պարտադիր ուսուցման իրականացման համար։

Ժողովրդական լուսավորության նյութական բազայի ընդլայնումը ետպատերազմյան տարիների սովետահայ դպրոցի զարգացման կողմերից մեկն է միայն։ Դրան զուգընթաց, լուրջ փոփոխություններ տեղի ունեցան նաև ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում։ Որոնումներ կատարվեցին ժողովրդական կրթությունը կատարելագործելու, ուսուցման դրվածքը երկրի տնտեսական զարգացման խնդիրներին համապատասխանեցնելու նպատակով։

1950-ական թվականներից ավելի լուրջ ուշադրություն դարձվեց պոլիտեխնիկական կրթությանը։ Միջնակարգ դպրոցի ոչ բոլոր շրջանավարտներն էին կարող շարունակել իրենց կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Ուստի հարց էր առաջանում՝ աշխատանքի տեղավորել երիտասարդության այն մասը, որը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո չէր ընդունվում բարձրագույն ուսումնական հաստատություն։ Մինչդեռ գոյություն ունեցող ժողովրդական կրթության սիստեմը հիմնականում երիտասարդությանը նախապատրաստում էր բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու համար։ Նոր պայմաններում պահանջ էր առաջացել դպրոցների ուսումնական դրվածքը վերափոխել այնպես, որ շրջանավարտները նախապատրաստվեն ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց կրթությունը շարունակելու, այլև աշխատանքային գործունեության անցնելու, հանրօգուտ աշխատանքով զբաղվելու համար։

---

[1] Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 16։

Մեծ ուշադրություն էր դարձվում դպրոցական արհեստանոցների և լաբորատորիաների սարքավորման վրա, որոնք պետք է հնարավորություն տային իրականացնելու աշակերտների արտադրական ուսուցումը։ Այդ նպատակով ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1955 թվականի մայիսի 16-ի որոշմամբ՝ ձեռնարկություններին թույլատրվեց դպրոցներին անվճար տրամադրել ուսումնական նպատակների համար պիտանի սարքավորումներ։ Նույն թվականին համանման որոշում ընդունեց նաև Հայկական ՍՍՀ կառավարությունը։ Ի կատարումն այդ որոշման, հանրապետության շատ գործարաններ ու ֆաբրիկաներ միջնակարգ դպրոցների նկատմամբ ստանձնեցին շեֆություն, օգնելով նրանց՝ արհեստանոցներ ստեղծելու, ինչպես նաև դպրոցականների աշխատանքային ուսուցման գործում։ Դպրոցներին հատկացվեցին հաստոցներ, շարժիչներ, ավտոմեքենաներ, գործիքներ, զանազան սարքավորումներ։ Կառավարությունը դպրոցներին բաց թողեց լրացուցիչ միջոցներ՝ արտադրական ուսուցման արհեստանոցներ հիմնելու համար։ Գյուղական դպրոցները կազմակերպում էին աշակերտական բրիգադներ, որոնք մասնակցում էին գյուղատնտեսական աշխատանքներին։ Կազմակերպվեց նաև գյուղատնտեսական տեխնիկայի ուսուցում։

Այդ միջոցառումները տվեցին որոշակի արդյունքներ։ Աշակերտները ծանոթանում էին արտադրությանը, ձեռք բերում աշխատանքային որոշ հմտություն, իսկ ուսումնական պրոցեսը մերձեցվում էր կյանքի պահանջներին։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության XX համագումարը ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի (1956—1960) մասին դիրեկտիվներում ժողովրդական լուսավորության կարևոր խնդիրը համարեց պոլիտեխնիկական կրթության լայն իրագործումը հանրակրթական դպրոցներում։ Համագումարի առաջադրած այդ խնդիրը բխում էր պոլիտեխնիկական ուսուցման ուղղությամբ փաստորեն արդեն կատարված որոշակի աշխատանքի արդյունքներից։ Դպրոցի պոլիտեխնիզացման արդյունքները ցույց տվեցին, որ դա ճիշտ ուղի է։ Եվ հիրավի, միջնակարգ դպրոցի աշակերտները, հանրակրթական առարկաներից ստացած գիտելիքներին զուգընթաց, սկսեցին գիտելիքների որոշակի պաշար ձեռք բերել նաև տեխնիկայից, ծանոթանալ արտադրական պրոցեսներին։ Դպրոցներում մտցվեցին նոր առարկաներ՝ հանրօգուտ աշխատանք, տնավարություն, ձեռքի աշխատանք։

Ի զարգացումն ժողովրդական կրթության վերաբերյալ կուսակցության XX համագումարի որոշումների՝ ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը մշակեցին թեզիսների նախագիծ՝ «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին»։ 1958 թվականի նոյեմբերին ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը հավանություն տվեց թեզիսների նախագծին և որոշեց այն դնել համաժողովրդական քննարկման։

Թեզիսների հիմնական բովանդակությունը հանգում է դպրոցի պոլիտեխնիզացմանը այն նպատակով, որպեսզի դպրոցն ի վիճակի լինի երիտասարդությանը նախապատրաստել ոչ միայն ուսուցումը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու, այլև այն բանի համար, որպեսզի

որոշակի հասակից սկսած ամբողջ երիտասարդությունն ընդգրկվի հանրօգուտ աշխատանքի մեջ և գիտությունների հիմունքների ուսուցումը կապվի արտադրական աշխատանքի հետ։ Թեզիսներում նշված է, որ առաջներում «դպրոցը գլխավոր ուշադրությունը նվիրում էր այն բանին, որ ապահովեր սովորողների բուհ ընդունվելու անհրաժեշտ հանրակրթական պատրաստությունը։ Դա հանգեցրեց երիտասարդության ուսուցման միակողմանիության, որոշ վերացականության, կյանքից դպրոցի կտրվելուն, որ պայմանավորեց նաև դասախարակչական աշխատանքի լուրջ թերությունները»[1]։ Դրա հետևանքով, նշված է թեզիսներում, դպրոցների շատ շրջանավարտներ որպես իրենց համար ընդունելի կյանքի միակ ուղի համարում էին կրթության շարունակումը բուհերում կամ միջնակարգ մասնագիտական դպրոցներում, տհաճությամբ էին գնում գործարան ու ֆաբրիկա, կոլտնտեսություն ու սովխոզ։ Մինչդեռ, միջնակարգ կրթության անընդհատ ընդլայնումն ու զարգացումը, բնականաբար, հանգեցնում է նրան, որ երիտասարդության ճնշող մեծամասնությունը, ավարտելով դպրոցը, պետք է անմիջականորեն ընդգրկվի արտադրական աշխատանքի ոլորտը։ Դրան զուգընթաց, տեխնիկական առաջընթացը պահանջում է արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը համալրել այնպիսի երիտասարդ կադրերով, որոնք ունեն բարձր հանրակրթական նախապատրաստություն։ Թեզիսներում ընդգծված է դպրոցի աշխատանքի վերակառուցման հրամայական անհրաժեշտությունը։ Այդ վերակառուցումը պետք է հանգեր միջնակարգ դպրոցում ընդհանուր, պոլիտեխնիկական և մասնագիտական կրթության ճիշտ հարաբերակցության հաստատման, կրթություն, որը պետք է հիմնված լինի աշխատանքի ու ուսուցման հետ երեխաների և երիտասարդության հանգիստն ու ֆիզիկական նորմալ զարգացումը խելացի կերպով զուգակցելու վրա[2]։ «Այսպիսով, դպրոցում գիտությունների հիմունքների ուսումնասիրման առաջատար սկզբունքը, որը որոշի դասավանդման բովանդակությունը, կազմակերպումն ու մեթոդները, պետք է դառնա ուսուցման սերտ կապը կյանքի հետ, արտադրության հետ, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ»[3]։

Վաստակավոր ուսուցիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Ա. Դաղբաշյան

---

[1] «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին», Երևան, 1958, էջ 18—19։

[2] Տե՛ս «КПСС о культуре, просвещении и науке», էջ 71։

[3] «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին», էջ 20։

Ըստ թեզիսների, միջնակարգ կրթությունը բաժանվում էր երկու էտապի։ Դրանցից առաջինում՝ ութամյա դպրոցում, որը ստեղծվելու էր գոյություն ունեցող յոթնամյա դպրոցի փոխարեն, ուսուցումը պետք է լիներ պարտադիր, իսկ երկրորդ էտապը՝ միջնակարգ դպրոցն էր և լրիվ միջնակարգ կրթությունը։ Նախատեսվում էր գիշերօթիկ դպրոցների հետագա զարգացում։

1958 թվականի դեկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետը քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի թեզիսները՝ կյանքի հետ դպրոցի կապը ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին։ Գերագույն սովետն ընդունեց օրենք «Կյանքի հետ դպրոցի կապը ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման» վերաբերյալ։ Այդ օրենքը հաստատեց ժողովրդական կրթության զարգացման նոր հիմունքներ և ուղիներ։

1959 թվականի ապրիլին կայացած Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հինգերորդ գումարման առաջին նստաշրջանը հավանություն տվեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մեջ ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքի նախագծին։ Հանրապետության մեջ սահմանվեց պարտադիր ութամյա ուսուցում, իսկ լրիվ միջնակարգ դպրոցում ուսման տևողությունը դարձավ 11 տարի։ Այսպիսով, ուսուցման առաջին էտապը՝ ոչ լրիվ միջնակարգ կրթությունը, ընդգրկում էր 1-ից 8-րդ դասարանները, իսկ ուսուցման երկրորդ էտապը՝ միջնակարգ դպրոցը՝ 9-ից 11-րդ դասարանները։ Նախատեսվում էր, որ երիտասարդության մի մասը, աշխատելով արտադրության մեջ, միջնակարգ կրթություն կստանա բանվորական և գյուղական դպրոցներում։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի թեզիսների քննարկման և սեսիայում ժողովրդական կրթության մասին օրենքի ընդունման ժամանակ հանրապետական մամուլում, ժողովներում, ինչպես նաև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի սեսիայում աշխույժ ելույթներ եղան դպրոցում մայրենի և ռուսերեն լեզուների ուսումնասիրման շուրջը։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի թեզիսներում նշվում էր, որ սովետական դպրոցում ուսուցման պրոցեսն իրականացվելու է մայրենի լեզուներով։ Դրա հետ միասին, միութենական և ինքնավար հանրապետությունների դպրոցներում ուսուցանվում է նաև ռուսաց լեզու։ Լեզուների ուսուցման ուղղությամբ այդ դպրոցներում գոյություն ունի երեխաների մեծ ծանրաբեռնում, քանի որ ազգային դպրոցներում երեխաները սովորում են երեք լեզու՝ մայրենի, ռուսերեն և որևէ օտար լեզու։ Թեզիսներում առաջարկվում էր, «որ ծնողներին իրավունք տրվի վճռելու, թե ինչ լեզվով դպրոց տալ իրենց երեխաներին։ Եթե երեխան սովորելու է այն դպրոցում, որտեղ դասավանդումը տարվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետություններից մեկի լեզվով, ապա նա, ըստ ցանկության, կարող է սովորել նաև ռուսաց լեզուն։ Եվ, ընդհակառակը, եթե երեխան սովորելու է ռուսական դպրոցում, ապա նա կարող է ըստ ցանկության սովորել միութենական կամ ավտոնոմ հանրապետություններից մեկի լեզուն»[1]։ Այդ

[1] «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին», էջ 27—28։

դրույթն իր արտահայտությունը գտավ նաև Հայկական ՍՍՀ դպրոցական ռեֆորմի նախագծում։

Այսպիսով, հանրապետության ռուսական դպրոցներում հայերենի դասավանդումը և հայկական դպրոցներում ռուսերենի դասավանդումը համարվում էր ոչ-պարտադիր, դրանց լուծումը թողնվում էր ծնողների կամքին։ Այդ դրույթը հանդիպեց լուրջ առարկության։

Դպրոցական շենք Երևանում

Այսուհանդերձ, ՀՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանի ընդունած օրենքում ասված էր. «Այն դպրոցներում, որտեղ ուսուցումը տարվում է հայերեն կամ այլ լեզուներով, ռուսաց լեզու սովորելը, ինչպես նաև այն դպրոցներում, որտեղ ուսուցումը տարվում է ռուսերեն և այլ լեզուներով, հայոց լեզու սովորելը թողնվում է ծնողների հայեցողությանը»[1]։ Սակայն իրականում, դպրոցական ռեֆորմի իրականացման ընթացքում, ռուսերենի դասավանդումը հայկական դպրոցներում և հայերենի դասավանդումը ռուսական դպրոցներում կրում էր պարտադիր բնույթ, այդ առարկաների գծով դրվող գնահատականները թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում դրանցվում էին հասունության ատեստատում։ Ավելին, միջոցառումներ մշակվեցին հայերենի և ռուսերենի դասավանդման դրվածքը հանրակրթական դպրոցներում բարելավելու համար։ Դպրոցի մասին օրենքի կենսագործման առաջին իսկ տարիներին երևան եկան այդ ռեֆորմի թե՛ առավելությունները և թե՛ թերությունները։ Կյանքը ճշտում-

[1] «Սովետական Հայաստան», 1959, № 93։

ներ մտցրեց ռեֆորմի մեջ, մի կողմ նետելով այն, ինչը դուրս եկավ ոչ ճիշտ, չդիմացավ ժամանակի և կյանքի փորձությանը։

Անկասկած, պետք է միանգամայն ճիշտ համարել այն մեծ ուշադրությունը, որ դարձվեց միջնակարգ մասնագիտական կրթությանը։ Եթե օրենքի ընդունման տարում հանրապետությունում գործում էր 37 տեխնիկում՝ 14 հազար սովորողներով, ապա 1965 թվականին տեխնիկումների թիվը հասավ 42-ի, իսկ սովորողների թիվը աճեց մեկ և կես անգամ, հասնելով 23,1 հազարի։

Լայն զարգացում ստացավ երեկոյան ուսուցումը միջնակարգ մասնագիտական հաստատություններում։ Գրեթե բոլոր տեխնիկումներում կազմակերպվեցին երեկոյան բաժիններ։ 1965 թվականին տեխնիկումների ցերեկային բաժանմունքներում սովորում էր 11,9 հազար, իսկ երեկոյան բաժիններում՝ 11,2 հազար ուսանող։ Մեծ ուշադրություն էր դարձվում մասնագետների պատրաստմանը այն մասնագիտությունների գծով, որոնք համապատասխանում էին հանրապետության արդյունաբերության նոր ուղղություններին, ինչպիսիք են՝ հաշվիչ մեքենաների արտադրությունը, էլեկտրոնիկան ու ռադիոտեխնիկան, կապի միջոցները, սարքաշինությունը և այլն։

Դպրոցի մասին նոր օրենքի ընդունումից հետո Հայաստանում շարունակվեց աշխատանքը պոլիտեխնիկական կրթության զարգացման ուղղությամբ։ Միջոցառումներ ձեռնարկվեցին արտադրական արհեստանոցները նոր սարքավորումներով հագեցնելու, դրանք որակյալ մասնագետներով ապահովելու համար։ Այս բոլորի հետ միասին, այդ բնագավառում դեռևս կային էական թերություններ։ Այսպես, Հայաստանում որոշ տարածում էին գտել դպրոցների պրոֆիլացման պրակտիկան և մասնագետների պատրաստումը զանազան նեղ մասնագիտությունների գծով, մի բան, որը փաստորեն հանգեցնում էր պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության սիստեմի կրկնությանը, այն նույն «արհեստի» ուսուցմանը, որի դեմ իր ժամանակին հանդես էր եկել Ն. Կ. Կրուպսկայան։ Փորձը ցույց էր տվել, որ այն մասնագիտությունները, որոնք ընտրվում էին այս կամ այն դպրոցի կողմից, հաճախ կրում էին պատահական բնույթ։ Դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտները, աննշան բացառությամբ, չէին աշխատում դպրոցում ձեռք բերած մասնագիտությամբ։

Տակավին սովետական դպրոցական շինարարության արշալույսին, Վ. Ի. Լենինը հանդես էր գալիս վաղաժամ մասնագիտացման և պրոֆեսիոնալացման դեմ, պոլիտեխնիզացումը մոնոտեխնիկացումով փոխարինելու դեմ։ Պոլիտեխնիկական կրթության՝ մասին Ն. Կ. Կրուպսկայայի թեզիսների առթիվ արած իր դիտողություններում Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս խուսափել վաղաժամ մասնագիտացումից, իսկ արհեստակցական-տեխնիկական դպրոցներում ընդլայնել և ուժեղացնել հանրակրթական առարկաների դասավանդումը։

1963—64 ուսումնական տարում վերացվեց դպրոցների մասնագիտացումը, 1964—65 ուսումնական տարում միջոցներ ձեռնարկվեցին դպրոցական կրթությունը երկու շրջանի տեղափոխելու ուղղությամբ. առաջին շրջան՝ ոչ լրիվ միջնակարգ դպրոց՝ յոթ դասարանի ծավալով և լրիվ միջնակարգ դպրոց՝ 10 դասարանի ծավալով։ 1966—67 ուսումնական տարվանից դպրոցներում

մտցվեցին քննություններ՝ ոչ-լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողների համար՝ 7-րդ դասարանում և լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողների համար՝ հասունության ատեստատի քննություններ 10-րդ դասարանում։

Ուշադրության արժանի է հանրապետության այն դպրոցների փորձը, ուր բարձր դասարաններին տրվում է լայն պրոֆիլի մասնագիտական թեքում։ Այսպես, Երևանի և Հայաստանի այլ քաղաքների մի շարք դպրոցների բարձր դասարաններում ուսուցումը տարվում է մաթեմատիկայի կամ ֆիզիկայի թեքումով։

Մանկավարժական միտքը շարունակում է իր որոնումները, ձգտելով հասնել դպրոցական ուսուցման առավել կատարելագործված ձևերի։

Մոսկվայի և Նովոսիբիրսկի օրինակով 1960-ական թվականների սկզբին Երևանի դիշերոթիկ դպրոցներից մեկին տրվեց մաթեմատիկական թեքում։ Դպրոցը կապված է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի հետ։

Տարեցտարի հանրապետությունում աճում էին մանկավարժական կադրերը։ 1958—59 ուսումնական տարում Սովետական Հայաստանի դպրոցներում աշխատում էր 19.950 ուսուցիչ, 1960—61 ուսումնական տարում՝ 21.257, 1963—64 ուսումնական տարում՝ 24.806 ուսուցիչ։ 1966 թվականին ուսուցիչների թիվը Հայաստանում հասավ 26 հազարի։ Քանակական աճին զուգընթաց, դնալով բարձրանում էր մանկավարժական կադրերի որակավորումը։ Սովետական Հայաստանում աշխատող ուսուցիչների 60 տոկոսից ավելին ուներ բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն։ Մանկավարժական բարձրորակ կադրեր էին պատրաստում Երևանի պետական համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների, Լենինականի մանկավարժական և հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտները։

Իրենց մանկավարժական լավագույն աշխատանքով աչքի ընկան Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի անվան դպրոցի դիրեկտոր Մ. Հայկազունին, Կամո քաղաքի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Ա. Դ. Ղազանչյանը, Ալավերդու շրջանի Թումանյանի ավանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Մ. Ա. Թումանյանը, Կալինինոյի շրջանի Պրիվոլնոյե գյուղի դպրոցի ուսուցիչ Ն. Լ. Գոլուբյատնիկովը, Հոկտեմբերյան քաղաքի դպրոցի ուսուցչուհի Ա. Ե. Մկրտչյանը, Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի ուսուցիչ Գ. Ա. Նահապետյանը և շատ ու շատ ուրիշներ։

Հանրապետության ուսուցչության կյանքում մեծ իրադարձություն էր Հայաստանի ուսուցիչների 1960 թվականին կայացած համագումարը։ Համագումարը քննարկեց դպրոցի վերակառուցման առաջին տարվա արդյունքները, երիտասարդ սերնդի դաստիարակության գործում Հայաստանի կոմերիտմիության մասնակցության հարցը։ Համագումարին հղած ողջույնի մեջ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմն ու Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը նշեցին հանրապետության ուսուցիչների մեծ ու անձնվեր աշխատանքը։ Համագումարի մասնակիցները կոչ ուղղեցին բոլոր ուսուցիչներին, ժողովրդական լուսավորության աշխատողներին, ծնողներին և հանրապետության հասարակությանը՝ իրենց ուժերը տրամադրել դպրոցական կրթության բարե-

լավման, երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության գործին։

Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը բարձր գնահատեցին Հայաստանի ուսուցչության աշխատանքը։ Մատաղ սերընդի ուսուցման ու դաստիարակման ասպարեզում բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար հանրապետության մի խումբ ուսուցիչներ 1960 թվականին պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով։ Լենինի շքանշանի արժանացան Թ. Ս. Աղաջանյանը (Ղափանի դպրոցի ուսուցչուհի), Բ. Ա. Բաղդասարյանը (Երևանի Ա. Ս. Պուշկինի անվան դպրոցի դիրեկտոր), Հր. Ս. Բոյաջյանը (Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցի դիրեկտոր), Մ. Ս. Զոփուռյանը (Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղի դպրոցի ուսուցչուհի), Բ. Ա. Սիլիկյանը (Սևանի շրջանի Լճաշեն գյուղի դպրոցի ուսուցիչ), Ա. Ն. Ոսկանյանը (Ապարանի դպրոցի ուսուցչուհի), հանրապետության ժողովրդական լուսավորության հնագույն գործիչ, Երևանի պետական համալսարանի դոցենտ Ս. Ն. Շահվերդովան և ուրիշներ, թվով 34 մարդ։ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով պարգևատրվեցին 68, «Պատվո նշան» շքանշանով՝ 106 և «Աշխատանքային արիության համար» մեդալով՝ 267 ուսուցիչ։ 1969 թվականին Երևանի Մանուկ Աբեղյանի անվան դպրոցի ուսուցիչ Ս. Ա. Դաղբաշյանը արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման։ Հանրապետության ավելի քան 900 մանկավարժներ կրում են Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում։ Մանկավարժական կադրերի աշխատանքը խթանելու գործում մեծ նշանակություն ունեցավ կառավարության որոշումը ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ։

Ընդհանուր պարտադիր միջնակարգ ուսուցման մասին ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումը կարևոր խնդիր դրեց նաև Սովետական Հայաստանի ժողովրդական կրթության աշխատողների առջև։ Ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթությանն անցնելուց զատ՝ անհրաժեշտ էր բուն կրթության բովանդակությունը համապատասխանեցնել ժամանակակից գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի զարգացման պահանջներին։ Դա ինքնըստինքյան խնդիր էր դնում՝ նշանակալից փոփոխություններ կատարել գոյություն ունեցող ուսումնական ծրագրերում և պլաններում։ Սովետական մանկավարժական գիտության շատ ներկայացուցիչներ բազմիցս արտահայտվել են հոգուտ աշակերտների ծանրաբեռնվածության թեթևացման։ Հայտնի է նաև, որ ժամանակակից գիտական ու տեխնիկական առաջընթացի բազմաթիվ հարցեր դպրոցական դասագրքերից դուրս են մնում։ 1966—67 ուսումնական տարվանից աշխատանք ծավալվեց տիպային ուսումնական պլանի նախագծի վերանայման ուղղությամբ։ Միաժամանակ պետք է ավարտվեին ուսումնական ծրագրերի կատարելագործման աշխատանքները։ Ուսումնական նոր ծրագրերն ու պլանները կոչված են ապահովելու դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների գիտական-տեսական բարձր մակարդակը, օժանդակելու աշակերտության մտավոր զարգացմանը։ 1966—67 ուսումնական տարվանից երկրի մի շարք դպրոցներում մտցվեցին ֆակուլտատիվ դասընթացներ, որոնց նպատակն է՝ աշակերտությանը ավելի խոր գիտելիքներ հաղորդել բնական ու հասարակական գիտություններից, սովորողների մեջ զարգացնել այս կամ այն ունակությու-

նը։ Դա հնարավորություն տվեց պարզելու յուրաքանչյուր աշակերտի նախասիրությունն ու հակումները, նրանց օգնեց ընտրելու ապագա մասնագիտությունը։ ՍՍՀՄ լուսավորության մինիստրության որոշմամբ աշխատանքներ էին տարվում միջնակարգ դպրոցի կանոնադրության մշակման ուղղությամբ։ Այդ միջոցառումները կոչված էին բարձրացնելու ուսումնա-դաստիարակչական գործի մակարդակը և աջակցելու մատաղ սերնդի աշխատանքային գործունեության նախապատրաստմանը։

Շախմատի գծով 1963—1969 թթ. աշխարհի չեմպիոն
Տ. Վ. Պետրոսյան

Սովետահայ դպրոցը, հենվելով ձեռք բերած հաջողությունների վրա, թևակոխել է զարգացման նոր ժամանակաշրջան. «Կոմունիզմին անցնելը ենթադրում է դաստիարակել ու պատրաստել կոմունիստորեն դիտակից և բարձր կրթված մարդիկ, որոնք ընդունակ են ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքի, ակտիվ գործունեության՝ հասարակական և պետական կյանքի բոլոր բնագավառներում, գիտության և կուլտուրայի բնագավառում»[1]։

Ծտպատերազմյան շրջանում իրականացված մի շարք միջոցառումների շնորհիվ որոշակիորեն բարձրացավ ժողովրդի նյութական բարեկեցությունը. կրճատվեց աշխատանքային շաբաթը, լայն հնարավորություններ ստեղծվեցին ավելի բովանդակալից օգտագործելու քաղաքի և գյուղի աշխատավորնե-

[1] «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», էջ 147—148։

րի ազատ ժամանակն ու Հանգիստը։ Այս բոլորի հետևանքով գյուղում մեծ վերելք ապրեց նաև ֆիզիկական կուլտուրան, ստեղծվեց մարզային ընկերությունների լայն ցանց։ 1965 թվականին Հայաստանում գործում էին ավելի քան 20 մարզադաշտ, մոտ 3000 մարզային տարբեր հրապարակ։

Սովետական Հայաստանի մարզիկները զգալի հաջողություններ ձեռք բերեցին ֆիզիկական կուլտուրայի տարբեր ընագավառներում։ 1953 թվականից սկսած Երևանի «Արարատ» ֆուտբոլային խումբը մասնակցում է ՍՍՀՄ ֆուտբոլի գծով առաջնությանը, հանդիպումներ ունենում արտասահմանյան ֆուտբոլային խմբերի հետ (Իրան, Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա և այլն)։ Հայ լավագույն մարզիկները մասնակցեցին օլիմպիական խաղերին՝ 1952 թվականին (Հելսինկի), 1956 թվականին (Մելբուրն), 1960 թվականին (Հռոմ), 1964 թվականին (Տոկիո), 1968 թվականին (Մեխիկո), բարձր պահելով սովետական սպորտի դրոշը։ Աշխարհով մեկ հայտնի են աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոններ Հրանտ Շահինյանի և Ալբերտ Ազարյանի (մարմնամարզություն), Վլադիմիր Ենգիբարյանի (բռնցքամարտ), Իգոր Նովիկովի (ժամանակակից հնգամարտ) անունները։ Հայկական շախմատային դպրոցի սան, Հայաստանի նախկին չեմպիոն Տիգրան Պետրոսյանը 1959 թվականին նվաճեց ՍՍՀՄ շախմատի չեմպիոնի կոչումը, իսկ 1963 թվականին՝ հաղթելով Միխայիլ Բոտվիննիկին, դարձավ աշխարհի չեմպիոն։ 1966 թվականին գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանը պահպանեց շախմատի գծով աշխարհի չեմպիոնի բարձր կոչումը՝ հաղթելով Բ. Սպասկուն։ Տիգրան Պետրոսյանը վեց տարի անընդմեջ հանդիսանում էր աշխարհի չեմպիոնը։

* *
*

Սովետական Հայաստանի տնտեսության արագ զարգացումը և արդյունաբերական նոր ճյուղերի ստեղծումը մեծապես խթանեցին բարձրագույն կրթության սիստեմի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը։ Ժողովրդական տնտեսության համար բարձրորակ մասնագիտական կադրերի պատրաստումը կարևոր պետական խնդիր է, որի հաջող լուծումով զգալիորեն պայմանավորված են տնտեսական զարգացման տեմպերն ու մակարդակը։ Բարձրագույն կրթության սիստեմի զարգացման խնդիրները մշտապես գտնվում են կուսակցության և կառավարության ուշադրության կենտրոնում։

Ետպատերազմյան տարիներին բարձրագույն կրթության զարգացումը Սովետական Հայաստանում աչքի էր ընկնում ուսանողության քանակական աճով և երեկոյան ու հեռակա բարձրագույն ուսուցման սիստեմի ընդլայնմամբ, ինչպես և նոր մասնագիտությունների ավելացմամբ։ Փոփոխություններ կատարվեցին նաև ուսումնական աշխատանքի դրվածքում։

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո ընդլայնվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող ընդունելությունները։ Անհրաժեշտ էր բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն տալ նրանց, ովքեր պատերազմի ընթացքում զրկվել էին դրանից։ Նախկին ճակատայիններ համար կառավարությունը սահմանեց արտոնություններ։ Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսա-

նողների թիվը սկսեց անընդհատ աճել։ 1950—51 ուսումնական տարում Սովետական Հայաստանի 15 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր 15 հազար ուսանող։ Հաջորդ տարիներին կատարվեց մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացում, իսկ ուսանողության թիվը գնալով աճում էր։ Այսպես, 1953—54 ուսումնական տարում Հայաստանում գործում էր 13 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 17,8 հազար ուսանողներով, 1955—56 ուսումնական տարում՝ 12 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 19,4 հազար ուսանողներով, 1957—58 ուսումնական տարում՝ 11 բուհ, 20,3 հազար ուսանողներով[1]։

Մեծ ուշադրություն էր դարձվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական բազայի ընդլայնմանը։ 1950-ական թվականներին ծավալվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի նոր ուսումնական շենքերի շինարարությունը, ավարտվեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ուսումնական շենքերի կառուցումը։ Ուսումնական շենքերի շինարարությունն ավելի մեծ ծավալ ընդունեց 1960-ական թվականներին։ Շահագործման հանձնվեց Երևանի պետական համալսարանի նոր շենքը, ավարտվեց պոլիտեխնիկական ինստիտուտի և Հայկական մանկավարժական ինստիտուտի նոր շենքերի շինարարությունը։ Նույն տարիներին Երևանի նորաստեղծ շրջաններում բարձրացան ուսանողական հանրակացարանների բազմահարկ շենքեր։

Պատերազմից անմիջապես հետո Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ։ 1945 թվականին առաջին ուսանողներն ընդունեց Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը։ Հետագա երկու տասնամյակների ընթացքում այդ ֆակուլտետի շրջանավարտները կազմեցին Հայաստանի երկրաբան կադրերի կորիզը։ 1949 թվականին երկրաբանական ֆակուլտետ կազմակերպվեց նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ 1950—60-ական թվականներին կազմակերպվեց կադրերի պատրաստում՝ ավելի քան 50 նոր մասնագիտությունների՝ այդ թվում աստղագիտության, հաշվիչ մեքենաների, էլեկտրոնիկայի, սիլիկատային քիմիայի, ֆիզիկայի, ռադիոտեխնիկայի, սարքաշինության, ավտոմատիկայի, պոլիմերների տեխնոլոգիայի, արհեստական մետաքսաթելի, միջազգային հարաբերությունների պատմության, կիբեռնետիկայի, արդյունաբերության էկոնոմիկայի, սննդարդյունաբերության տեխնոլոգիայի, մանկաբուժության, ատամնաբուժության գծով և այլն։

Նշված ժամանակաշրջանում Հայաստանում բարձրագույն կրթության զարգացման մյուս աչքի ընկնող գիծը կրթության աշխարհագրական տեղաբաշխման որոշ ընդլայնումն էր։ 1959 թվականին Լենինականում և Կիրովականում ստեղծվեցին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիլիալներ, որոնք կադրեր են պատրաստում մեքենաշինության, արդյունաբերական ու քաղաքացիական շինարարության և այլ մասնագիտությունների գծով։ Պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի և Կիրովականի ֆիլիալների ստեղծումը կարևոր իրադարձություն էր հանրապետության կուլտուրական կյան-

[1] Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 63։

քում և զգալի չափով նպաստեց այդ քաղաքների ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

Հանրապետության բարձրագույն կրթության սիստեմում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և Հայկական ՍՍՀ-ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» (1959) օրենքի ընդունումից հետո։ Այդ օրենքով բարձրագույն դպրոցի խնդիրն էր համարվում՝ «բարձրորակ մասնագետների պատրաստումը, որոնք դաստիարակված լինեն մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա, տիրապետեն հայրենական գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումներին, լավ գիտենան գործի պրակտիկան»[1]։ Օրենքը սահմանեց բուհերի ընդունելության նոր կանոններ, որոնք արտոնություն են տալիս աշխատանքի ստաժ ունեցողներին։

Նշանակալից քայլեր կատարվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման ու ծավալման ուղղությամբ։ Այսպես, 1960-ական թվականներին Երևանի պետական համալսարանում կազմակերպվեց 3 պրոբլեմային և 7 գիտահետազոտական լաբորատորիա։ Ստեղծվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի միացյալ հաշվողական կենտրոնը, ուր մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի ուսանողները անցնում են հատուկ պրակտիկա և կատարում իրենց դիպլոմային աշխատանքները։ Համալսարանի գիտնականները նշանակալից հաջողությունների հասան մաթեմատիկայի, առաձգականության և պլաստիկության տեսության, փորձնական ֆիզիկայի, կենսաբանության, քիմիական թերմոդինամիկայի և գիտական այլ պրոբլեմների մշակման մեջ։ Մի շարք պրոբլեմային լաբորատորիաներ կազմակերպվեցին նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Դրանցից շատերը կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են հանրապետության արդյունաբերության զարգացման խնդիրներին։ Գիտահետազոտական աշխատանքները նշանակալից չափով ընդլայնվեցին Երևանի գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտներում։ Այդ ինստիտուտներում մշակվող գիտական պրոբլեմները ենթարկված են հանրապետության գյուղատնտեսության զարգացման խնդիրներին։

Մեծ աշխատանք կատարվեց Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները պրոֆեսորա-դասախոսական բարձրորակ կադրերով համալրելու ուղղությամբ։ 1967 թվականին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոսում էր 2865 մարդ, այդ թվում՝ գիտության 190 դոկտոր ու պրոֆեսոր, 1120 գիտության թեկնածու։ Բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծամասնությունն ունի ասպիրանտուրա։ Ասպիրանտների մի մասը գիտական պատրաստություն է ստանում երկրի առաջատար գիտական կենտրոններում՝ Մոսկվայում, Լենինգրադում, Նովոսիբիրսկում և այլուր։ Սովետական իշխանության տարիներին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները երկրին

[1] «Սովետական Հայաստան», 1959, № 93։

տվել են 68 հազար մասնագետ-շրջանավարտներ։ 1960-ական թվականներին սովետահայ մտավորականության ճնշող մեծամասնությունը նրանք էին, ովքեր մասնագիտություն էին ստացել սովետական իշխանության օրոք։

Դպրոցի մասին նոր օրենքի ընդունումից հետո անցած տարիները ցույց տվեցին, որ բարձրագույն որակավորում ունեցող կադրերի պատրաստման հիմնական ձևը, այնուամենայնիվ, պետք է հանդիսանա բարձրագույն ուսումնական հաստատությունների ցերեկային ստացիոնար ցանցը։

Ուսումնական լայն բազայի շինարարության, նոր ամբիոնների կազմակերպման և ինստիտուտներում գիտահետազոտական սեկտորների ստեղծման շնորհիվ հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները աճեցին և ընդհանուր ճանաչում գտան ամբողջ Սովետական Միության մեջ։ 1967 թվականի սեպտեմբերին Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր 44 հազար մարդ, որոնք կրթություն էին ստանում 134 մասնագիտությունների գծով։ Սովետական Հայաստանի բարձրագույն դպրոցները հաջողությամբ են կատարում բարձրորակ մասնագետների՝ կոմունիստական հասարակության առաջավոր կառուցողների, պատրաստման իրենց խնդիրը։

2. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1950—1960-ական թվականները Սովետական Հայաստանի համար գիտական մտքի բուռն զարգացման ժամանակաշրջան էին։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության շնորհիվ այդ տարիներին հանրապետության մեջ ստեղծվեցին մի շարք գիտահետազոտական կազմակերպություններ, որոնք ի վիճակի էին լուծելու տեսական ու կիրառական նշանակություն ունեցող կարևոր խնդիրներ։ Հայաստանում գիտական հետազոտությունների և առհասարակ գիտական աշխատանքների ընդլայնումը չի սահմանափակվում միայն հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներով։

Հայտնի է, որ 1950-ական թվականներից սովետական երկիրը թևակոխեց գիտատեխնիկական հեղաշրջման նոր ժամանակաշրջան։ Այդ հանգամանքն իր կնիքը դրեց նաև Հայաստանում գիտության զարգացման վրա։ Ինչպես սովետական ամբողջ գիտության, այնպես էլ սովետահայ գիտության համար բնորոշ էր գիտության տարբեր բնագավառների ավելի ու ավելի ճյուղավորումը։ Մաթեմատիկայից, քիմիայից, ֆիզիկայից, կենսաբանությունից և մյուս գիտություններից սկսեցին ճյուղաղատվել նոր ուղղություններ, որոնք արագորեն ձևավորվում էին որպես գիտական ինքնուրույն բնագավառներ։ Հետազոտություններ էին ծավալվում գիտությունների ընդհանուր կապակցություններում։

Լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև տեխնիկայի բնագավառում, որտեղ սկսեցին առաջատար դեր խաղալ ավտոմատիկան ու կիբեռնետիկան։

Գիտական աշխատանքի ծավալումը և նոր ուղղությունների առաջացումը թելադրեց գիտական կադրերի արագ աճի, նրանց որակավորման բարձրացման անխուսափելի պահանջ։ Դա առավել ընդգծված կարելի է տեսնել հան-

բապետության գիտությունների ակադեմիայի օրինակով։ Եթե իր հիմնադրման տարում գիտությունների ակադեմիան ուներ ընդամենը 410 աշխատող, որոնցից գիտական աշխատողներ էին միայն 150-ը, ապա 1953 թվականին ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկներում աշխատում էր 1350 մարդ, այդ թվում 500 գիտական աշխատողներ։ 1963 թվականին ակադեմիայի հիմնարկներում աշխատում էր 3021 մարդ, այդ թվում ավելի քան 950 գիտական աշխատողներ, 1967 թվականին՝ 4100 մարդ, որոնցից 1330-ը գիտական աշխատող, այդ թվում՝ 84-ը գիտությունների դոկտոր, 524-ը՝ թեկնածու։

Ընդլայնվեց գիտահետազոտական հիմնարկների ցանցը։ 1958 թվականին Հայաստանում գործում էր 69 գիտահետազոտական հիմնարկ, 1961 թվականին՝ 84, 1963 թվականին՝ 103, իսկ 1967 թվականին՝ 112։ 1967 թվականին այդ հիմնարկներում ընդգրկված աշխատողների ընդհանուր թիվը անցնում էր 20 հազարից, որից ավելի քան 8 հազարը գիտական աշխատողներ էին։

1950—1960-ական թվականներին Հայաստանում գիտության զարգացման բնորոշ գիծն այն էր, որ գիտական հետազոտությունների արդյունքներն ստացել էին մեծ նշանակություն և լայն ճանաչում գտել մեր երկրի սահմաններից դուրս։ Առաջատար ուղղություններ էին դարձել ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական և տեխնիկական գիտությունները, ինչպես նաև հայագիտությունը։

Ետպատերազմյան տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան դարձավ Հայաստանի գիտական մտքի իսկական շտաբը և երկրի գիտական առաջատար կենտրոններից մեկը։ 1947 թվականին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը հարգեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խնդրանքը՝ Լենինգրադի Էրմիտաժի ղեկավարությունը ստանձնելու կապակցությամբ իրեն հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնից ազատելու վերաբերյալ։ 1944 թվականին, վերադառնալով Լենինգրադ, Հ. Ա. Օրբելին ղեկավարում էր Էրմիտաժի վերականգնման աշխատանքները։ Ընդհանուր ժողովը շնորհակալություն հայտնեց Հ. Օրբելուն, ընդգծելով նրա ներդրած մեծ ավանդը հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնադրման ու զարգացման գործում։ Ընդհանուր ժողովը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընտրեց ականավոր գիտնական ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանին։

Ետպատերազմյան տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան համալրվեց նոր իսկական անդամներով ու թղթակից-անդամներով։ 1945 թվականին առաջին անգամ անցկացվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամների ընտրություններ։ Ընտրվեցին հնագետ Բ. Բ. Պիոտրովսկին, որը գլխավորում էր Կարմիր բլուրի պեղումների գիտական արշավախումբը, անվանի բուսաբաններ Ա. Լ. Թախթաջյանը և Մ. Կ. Զայլախյանը։ 1947 թվականին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրվեցին մաթեմատիկոս Ա. Լ. Շահինյանը, ֆիզիոլոգ Է. Ա. Հասրաթյանը, պատմաբան Ա. Ռ. Հովհաննիսյանը։ 50-ական թվականներին ակադեմիկոսներ ընտրվեցին Ն. Խ. Հարությունյանը (մեխանիկա), Գ. Ա. Դավթյանը (ագրոքիմիա), Մ. Գ. Ներսիսյանը (պատմություն), Ա. Գ. Իո-

սիֆյանը (էլեկտրատեխնիկա), Ա. Լ. Մնջոյանը (քիմիա), Մ. Մ. Ջրբաշյանը (մաթեմատիկա), Գ. Խ. Աղաջանյանը (ագրոտեխնիկա), Ա. Բ. Կարինյանը (գրականագիտություն), Մ. Վ. Կասյանը (մեքենաշինություն), Ս. Ն. Մերգելյանը (մաթեմատիկա), Ս. Ս. Մկրտչյանը (երկրաբանություն) և ուրիշներ։ 1960-ական թվականներին ակադեմիկոսներ ընտրվեցին Ա. Ս. Ղարիբյանը (լեզվաբանություն), Ա. Գ. Հովհաննիսյանը (պատմություն), Ա. Գ. Նազարովը (շի-



Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյան

նարարական մեխանիկա), Ս. Տ. Երեմյանը (պատմություն), Մ. Գ. Մանվելյանը (անօրգանական քիմիա), Ա. Բ. Նալբանդյանը (քիմիական ֆիզիկա), Ս. Ա. Համբարձումյանը (մեխանիկա), Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը (գրականագիտություն) և ուրիշներ։ Ակադեմիկոսներ ընտրվեցին ականավոր գեղանկարիչ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, մեր ժամանակի ականավոր կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանը, գրող Ստեփան Զորյանը։ Գիտնականների մի մեծ խումբ ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։

Մինչև 1961 թվականը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի սիստեմի մեջ մտնում էին ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, բժշկական, քիմիական և հումանիտար ուղղության գիտահետազոտական հիմնարկները։

1961 թվականի ապրիլ ամսին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեցին երկրում գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեության բարելավման մասին։ Այդ որոշման համաձայն անհրաժեշտ համարվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գործունեությունը կենտրոնացնել գիտության առավել հեռանկարային և արագ զարգացող ուղղությունների վրա, որոնք ամենից շատ են նպաստում երկրի ժողովրդական տնտեսության և մշակույթի վերելքին։ Որոշման մեջ նշված էր, որ գիտությունների ակադեմիան պետք է ապահովի բնական և հասարակական գիտությունների գծով գիտական ու մեթոդական ղեկավարությունը և հետազոտական աշխատանքների ժամանակին ու բարձրորակ կատարումը[1]։ Միութենական հանրապետությունների, այդ թվում Հայաստանի գիտությունների ակադեմիայում, կատարվեց վերակառուցում, որի հետևանքով տեխնիկական ու բժշկական ուղղության մի շարք գիտահետազոտական հիմնարկներ ակադեմիայի սիստեմից դուրս բերվեցին և հանձնվեցին զանազան գերատեսչությունների։ Հայաստանում համապատասխան գերատեսչություններին հանձնված հիմնարկների թվում էին ֆիզիկայի, ջրային պրոբլեմների, էներգետիկայի, ռենտգենոլոգիայի և ուռուցքաբանության, սրտաբանության և այլ ինստիտուտներ։ Դրանից առաջ գիտությունների ակադեմիայի սիստեմից դուրս էին բերվել գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները՝ գինեգործության և խաղողագործության, պտղաբուծության, բույսերի գենետիկայի ու սելեկցիայի և այլ ինստիտուտներ, որոնք հանձնվել էին Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությանը։

1961 թվականին կատարված վերակառուցումից հետո Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի սիստեմում մնացել էին հետևյալ բաժանմունքները՝ ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, քիմիական գիտությունների, կենսաբանական գիտությունների, հասարակագիտական և երկրի մասին գիտության բաժանմունքները։ 1960-ական թվականներից Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի սիստեմում որոշ աշխատանքներ սկսվեցին տեխնիկական գիտությունները զարգացնելու ուղղությամբ։

Վերջին տարիներին Հայաստանում մեծ զարգացում են ստացել մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները։ Այդ մարզում ավանդական ուղղություն է հանդիսանում մոտավորության տեսությունը կոմպլեքսային բնագավառում։ Այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոսներ Ա. Լ. Շահինյանի, Մ. Մ. Ջրբաշյանի և Ս. Ն. Մերգելյանի անունների հետ։ 1950-ական թվականների կեսերից սկսած մաթեմատիկայի բնագավառում ծավալված գիտահետազոտական աշխատանքների շրջանակը աստիճանաբար լայնանում է, սկզբում ընդգրկելով կլա-

[1] Տե՛ս «КПСС о культуре, просвещении и науке», М., 1963, էջ 497—498։

սիկ անալիզի նոր ուղղությունները, իսկ այնուհետև՝ ֆունկցիոնալ անալիզը և դիֆերենցիալ հավասարումները։

Մեխանիկայի ուղղությամբ նշանակալից արդյունքներ են ձեռք բերվել սողքի ընդհանուր գծային և ոչ-գծային տեսության, կառուցումների և նրանց տարրերի սողացման հաշվարկման էֆեկտիվ մեթոդների, միատարր և ոչ միատարր նյութերի (բետոնի, ապակե պլաստիկների, գրունտի և այլն) սողացման



Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության շենքը

փորձնական հետազոտությունների մշակման բնագավառում։ Հայտնի է, որ սողացումը էապես ազդում է մեքենաների և կառուցումների մասերի ամրության, դիմացկունության և դինամիկության վրա։ Հայաստանում սողացման տեսության զարգացման մեջ մեծ է գիտնական մաթեմատիկոսների և մեխանիկների ներդրումը, որոնց գլխավորում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանը։ Հայաստանի մեխանիկների ուսումնասիրությունները մեծ ճանաչում են գտել ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

1950-ական թվականների կեսերից հետազոտական աշխատանքներ ծավալվեցին հաշվողական մաթեմատիկայի և կիբեռնետիկայի բնագավառում։ Հաշվողական մաթեմատիկայի հիմնական կենտրոն դարձավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնը։ Այստեղ կարևոր արդյունքներ են ձեռք բերվել մաթեմատիկական և կիրառական խնդիրների լուծման մեթոդների ուղղությամբ։ Գիտնականներն ու ինժեներները մշակեցին սկզբունքային սխեմաներ և նախագծեցին «Հրազդան», «Նաիրի» և այլ տիպի էլեկտրոնային հաշվիչ բարդ մե-

քենաները, որոնց օգնությամբ լուծվում են գիտական ու ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող խնդիրներ։ Հաշվողական կենտրոնը դարձավ գիտական այն հիմնարկը, որտեղ մաթեմատիկական մեթոդների, կիբեռնետիկայի և ավտոմատացման կիրառման շնորհիվ մշակվում են կարևոր պրոբլեմներ գիտությունների ընդհանուր կապակցություններում։ 1960-ական թվականներին հետազոտություններ էին տարվում մաթեմատիկական լեզվաբանության, գիտատեխնիկական գրականության թարգմանության և այդ նպատակով մասնագիտացված էլեկտրոնային մեքենաներ ստեղծելու ուղղությամբ։ Այդ աշխատանքների շնորհիվ ունիվերսալ մեքենաների վրա ստացվեց հայերենից ռուսերեն թարգմանություն։ Գիտնական լեզվաբանները կազմեցին, իսկ մաթեմատիկոսները կրճատագրեցին մաթեմատիկական տեքստերի բառարան՝ 6.000 բառ ծավալով։ 1960-ական թվականների ընթացքում մեքենայական թարգմանության գծով Երևանում անցկացվեցին խորհրդակցություններ և սիմպոզիումներ, որոնց մասնակցում էին Սովետական Միության տարբեր քաղաքների մասնագետներ։

Զարգացում ստացավ մաթեմատիկական մեթոդների ու հաշվողական տեխնիկայի միջոցների կիրառումը տնտեսագիտության և բժշկության բնագավառում։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում գիտահետազոտական աշխատանքներն ընդլայնվել և կարևոր հաջողություններ են ձեռք բերվել նաև ֆիզիկայի բնագավառում։ 1940-ական թվականների կեսերից հանրապետության մեջ մշակվող միջուկային ֆիզիկայի պրոբլեմներին ավելացան տեսական ֆիզիկայի, պլազմերների ֆիզիկայի, մետաղաֆիզիկայի, մագնիսային երևույթների ֆիզիկայի բնագավառների խնդիրները։

1958 թվականից ֆիզիկայի ինստիտուտում սկսվեցին աշխատանքները ՍՍՀՄ-ում խոշորագույն էլեկտրոնային արագացուցչի նախագծման, ապա կառուցման ուղղությամբ՝ 6 միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայով։ Աշխատանքները կատարվում էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ի. Ալիխանյանի ղեկավարությամբ։ 1967 թվականին էլեկտրոնային արագացուցչի կառուցումն ավարտվեց։ Նրա շահագործմամբ Հայաստանի և Սովետական Միության շատ ֆիզիկոսներ հնարավորություն ստացան բարդ փորձեր կատարելու միջուկային ֆիզիկայի բնագավառում։ 1967 թվականի սեպտեմբերին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետը ողջույնի հեռագիր ուղարկեցին Երևանի ֆիզիկայի ինստիտուտի կոլեկտիվին, բարձր գնահատելով սովետահայ ֆիզիկոսների նվաճումը՝ Երևանում էլեկտրոնային արագացուցչի գործարկումը։ Արագածի և Նոր Ամբերդի կայաններում շարունակվեցին հետազոտությունները գերբարձր էներգիաների մասնիկների միջուկային փոխազդեցությունների հետազոտման գծով՝ կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման ասպարեզում։ 1950—1960-ական թվականների ընթացքում ֆիզիկայի ինստիտուտի համար կառուցվեց շինությունների մի ամբողջ կոմպլեքս։ Ավանդական են դարձել «Ֆիզիկոսների գարնանային դպրոցները», որոնք անցկացվում են Նոր Ամբերդում։ Գարնանը այստեղ են ժամանում Սովետական Միության խոշորագույն ֆիզիկոսներ և արտասահմանյան հյուրեր։ Բանավեճեր են տեղի ունենում ֆիզիկայի

պրոբլեմների շուրջը, որոնց ակտիվ մասնակցում է գիտական երիտասարդությունը։

Տեսական ֆիզիկան երիտասարդ այն գիտություններից է, որի զարգացումը Հայաստանում սկսվել է 1950—1960-ական թվականներին։ Նրա մի շարք բնագավառներում՝ կոսմիկական ճառագայթման տեսություն, միկրոսկոպիկ էլեկտրադինամիկա, արագացուցիչների տեսություն և այլն, հայ ֆիզիկոսները հասել են նշանակալից հաջողություններ։ Երիտասարդ տեսաբան-ֆիզիկոսների մի խումբ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Դ. Ս. Սահակյանի ղեկավարությամբ, մի շարք աշխատանքներ կատարեց գերխիտ երկնային մարմինների տեսության զարգացման բնագավառում։ Տեսական ֆիզիկայի մարզում կատարված հետազոտությունների զարգացումը հնարավորություն տվեց 1967 թվականին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի սիստեմում կազմակերպել ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտ։

Սովետական Հայաստանի գիտության զարգացման համար բոլորովին նոր ուղղություն է պոլիմերների ֆիզիկայի ուսումնասիրությունը։ Նրա հիմնական խնդիրն է՝ ստեղծել պոլիմերներ, որոնք տարբեր գործոնների ազդեցության ներքո ձեռք են բերում ֆիզիկական նոր հատկություններ։ Միաժամանակ հետազոտություններ են կատարվում՝ պարզելու համար պոլիմերների քիմիական կառուցվածքի և նրանց քիմիական հատկությունների միջև եղած կապը։ Դա հնարավորություն կտա սինթեզելու այս կամ այն պոլիմերը՝ ցանկացած ֆիզիկական հատկություններով։ Այդ աշխատանքներն իրագործվում են մասնավորապես Երևանի պոլիմերների գիտահետազոտական ինստիտուտում։

Մետաղաֆիզիկայի բնագավառում ուսումնասիրություններ ծավալվեցին մետաղների պլաստիկական հատկությունների, ինչպես նաև մետաղների սառը մշակման ժամանակ փոքր ու մեծ ճեղքվածքների առաջացման ուսումնասիրության գծով։ 1960-ական թվականներին լեռնային մետալուրգիայի գիտահետազոտական ինստիտուտում հետազոտություններ էին կատարվում Հայաստանում արդյունահանվող մոլիբդենի մեխանիկական և էլեկտրաֆիզիկական հատկությունները պարզելու համար։

Համաշխարհային ճանաչում են գտել աստրոֆիզիկայի բնագավառում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները։ Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանը, որի առաջին աշխատանքային շենքերը սկսեցին կառուցվել Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո, անցած քսան տարիներին դարձավ աստրոֆիզիկայի գիտահետազոտական խոշոր կենտրոններից մեկը աշխարհում։

Բյուրականի աստղադիտարանի գիտական ուսումնասիրությունները, որոնք ղեկավարում է խոշորագույն աստրոֆիզիկոս Վ. Հ. Համբարձումյանը, 1950—1960-ական թվականներին ընթանում էին երկու հիմնական ուղղությամբ՝ գալակտիկայի (Մեր Կաթինի) կառուցվածքի օրինաչափությունների, աստղերի և աստղային համակարգությունների ծագման ու զարգացման և կոսմիկական նյութի հետազոտությունների գծով։

Ետպատերազմյան առաջին տարիներին Բյուրականի աստղադիտարանում մեծ արդյունքներ ձեռք բերվեցին տեսական հարցերի, մասնավորապես լույսի տարալուծման նոր տեսության և լույսի կլանման միջաստղային երևույթի ուսումնասիրության գծով։ Այդ տեսակետը առաջ է քաշել ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ 1947 թվականին Գալակտիկայում հայտնաբերվեցին նոր տիպի աստղային համակարգություններ, որոնց տրվեց աստղային ասոցիացիաներ կամ աստղասփյուռներ անվանումը։ Աշխարհայացքային նշանակություն ունեցող այդ հայտնագործությունը խթանեց աստղային կոսմոգոնիայի զարգացմանը և կանխորոշեց Բյուրականի աստղադիտարանի հետազոտությունների զարգացման հետագա ընթացքը։ Աստղասփյուռների հայտնաբերման համար 1950 թվականին ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը և Բյուրականի աստղադիտարանի դիտական աշխատակից Բ. Ե. Մարգարյանը արժանացան ՍՍՀՄ Պետական մրցանակի։

Աստղասփյուռների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտելու աստղերի և աստղային համակարգությունների ծագման ու զարգացման կարևոր օրինաչափություններ։ Այդ մարզում կատարված հետագա ուսումնասիրությունները բերեցին այն նոր հետևությանը, որ տիեզերքում գոյություն ունեն դիտություններ տակավին անհայտ գոնդվածային խիտ մարմիններ, որոնք ծնում են աստղեր և օժտված են ներքին էներգիայի հսկայական պաշարներով։

1950—1960-ական թվականներին Բյուրականում ստեղծվեց դիտական օբյեկտների մի ամբողջ համալիր և աստղադետների ավան։ 1956 թվականի սեպտեմբերին, երբ ավարտվել էր հիմնական շենքերի շինարարությունը, տեղի ունեցավ Բյուրականի աստղադիտարանի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին նաև սովետական և արտասահմանյան հյուրեր։

Բյուրականի աստղադիտարանը դարձել է միջազգային գիտական սեսիաների ու խորհրդակցությունների հավաքատեղի։ Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը 1962—1965 թվականներին Աստղագետների միջազգային միության պրեզիդենտն էր։ Այդ միության սեսիաներից մեկը անցկացվեց Երևանում, 1964 թվականին։ 1967 թվականը նշանավոր տարի էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի կյանքում։ Աստրոֆիզիկայի զարգացման բնագավառում ձեռք բերված հաջողությունների համար աստղադիտարանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Երկրի աստղագիտական հիմնարկներից Բյուրականի աստղադիտարանն առաջինն արժանացավ այդ բարձր պարգևին։

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառում Բյուրականի աստղադիտարանում սկսված ուսումնասիրություններն իրենց հետագա զարգացումն ստացան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, որը հիմնադրվեց 1960 թվականին։ Աշտարակում ինստիտուտի համար կառուցվեց շենքերի մի ամբողջ համալիր՝ բազմաթիվ լաբորատորիաներ, բնակելի տներ։ Ինստիտուտում դիտահետազոտական աշխատանքներ են տարվում դերբարձր հաճախականության ռադիոֆիզիկայի, քվանտային ռադիոֆիզիկայի, էլեկտրոնային ավտոմատիկայի, քվանտային օպտիկայի բնագավառներում։

1950—1960-ական թվականներին մեծ ծավալ ընդունեցին քիմիայի բնագավառի հետազոտական աշխատանքները, որոնց սկիզբը դրվել էր դեռևս սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիներին։ Այդ բնագավառում Հայաստանում զարգանում են հետևյալ հիմնական ուղղությունները՝ օրգանական նուրբ սինթեզ, ացետիլենի և նրա ածանցյալների քիմիա, ամոնիումի միացությունների քիմիա, ֆիզիկական քիմիա, քիմիական տեխնոլոգիա, անօրգանական քիմիա։

Սոցիալիստական աշխատանքի հերոս,
ՀՍՍՀ ԳԱ-ի իսկական անդամ Ա. Լ. Մնջոյան

1956 թվականին Հանրապետության գիտությունների ակադեմիայի սիստեմում ստեղծվեց նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որը զբաղվում է կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզով։ Ինստիտուտը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի գլխավորությամբ, նշանակալից հաջողություններ է հասել դեղանյութերի ստեղծման, ինչպես նաև կենսաբանական ակտիվ միացությունների նպատակասլաց սինթեզման ասպարեզում։ Քիմիկոսների և դեղագործների համատեղ ջանքերով ստացվեցին և բժշկության մեջ ներդրվեցին նոր դեղանյութեր (գանգլերոն, կվատերոն, դիտիլին, սուբեխոլին, բրոտիլին, արպենալ և այ-

լը)։ Այդ դեղանյութերը լայն տարածում գտան սրտանոթային, նյարդային-հոգեկան և այլ հիվանդությունների բուժման համար։ Սինթեզի բնագավառում նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին հիմնելու Երևանի քիմիական ռեակտիվների գործարանը։ 1950—1960-ական թվականներին նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի կոլեկտիվը բժշկական նոր դեղանյութերի և քիմիական միացությունների ստեղծման համար ստացավ 24 հեղինակային վկայական։ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի համար կառուցվել է լաբորատոր շենքերի մի ամբողջ համալիր, որը սարքավորված է գիտության ու տեխնիկայի վերջին խոսքով։

1957 թվականին հիմնվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտը։ Այստեղ գիտահետազոտական աշխատանքներ ծավալվեցին ացետիլենի և նրա ածանցյալների քիմիայի, ինչպես նաև ամոնիումի միացությունների բնագավառում։ Անցած տարիներին ինստիտուտում մշակվել են մի շարք նոր սինթեզներ, որոնք տեխնիկա-տնտեսական արժեքավոր նշանակություն ունեն։ 1960-ական թվականներին ինստիտուտի կոլեկտիվը լուծել է քիմիական տեխնոլոգիայի մի շարք կարևորագույն խնդիրներ, որոնք ունեն պրակտիկ նշանակություն։ Նոր սինթեզների մշակման և քիմիկո-տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման համար ինստիտուտի կոլեկտիվը ստացել է ավելի քան 30 հեղինակային վկայական։

Քիմիական ֆիզիկայի բնագավառի հետազոտությունների կենտրոն դարձավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի քիմիական ֆիզիկայի լաբորատորիան, որը հիմնադրվել է 1959 թվականին։ Այստեղ, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանի ղեկավարությամբ, մշակվում է պրոբլեմների մի ամբողջ կոմպլեքս՝ կապված քիմիական պրոցեսների մեխանիզմների հետ։

Լայնորեն ծավալվեցին նաև 1957 թվականին կազմակերպված քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքները։ Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունը լեռնային հանքատեսակների կոմպլեքսային մշակումն է։ Նրա աշխատակիցները, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Մանվելյանի գլխավորությամբ, հետազոտում էին նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման մեթոդը։ Ինստիտուտի և նրան առընթեր ստեղծված փորձնական գործարանի աշխատանքների արդյունքների հիման վրա սկսվեց Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատի շինարարությունը։

Նշանակալից են բիոքիմիայի բնագավառում կատարված հետազոտությունները, որոնց կենտրոնը դարձավ 1961 թվականին հիմնադրված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի ինստիտուտը։ Ուսումնասիրությունների հիմնական ուղղությունը, որոնք ղեկավարում է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանը, հանդիսանում է գլխուղեղի ֆունկցիոնալ բիոքիմիան։

Եռապատերազմյան տարիները նշանավորվեցին գիտական հետազոտությունների զարգացմամբ նաև երկրաբանության բնագավառում։ Դրանք տարվում էին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաբանական գի-

տությունների ինստիտուտում, Հանրապետության երկրաբանական վարչությունում, Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում և լեռնա-մետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտում։ Կարևոր պրոբլեմներից էր հանրապետության երկրաբանական քարտեզների ստեղծումը։ Անհրաժեշտ էր կազմել Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիական, մետաղածագումաբանական, հիդրոերկրաբանական քարտեզներ, հանքային նյութերի առանձին տեսակների կանխագուշակման քարտեզներ և այլն։ Գիտական կարևորագույն այն պրոբլեմը, որի վրա աշխատում էին Հայաստանի երկրաբանները, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Ի. Գ. Մաղաքյանի և Ս. Ս. Մկրտչյանի ղեկավարությամբ, օգտակար հանածոների հանքավայրերի կազմավորման և տեղաբաշխման պայմանների ուսումնասիրությունն էր՝ օգտակար հանածոների հանքավայրերի հայտնաբերման և երկրաբանական արդյունավետ հետազոտությունների համար։ 1950 թվականին Սովետական Հայաստանի մի խումբ առաջատար երկրաբաններ՝ Ս. Ս. Մկրտչյանը, Պ. Ս. Սահակյանը, Ս. Ա. Մովսիսյանը, Գ. Մ. Հարությունյանը, Ի. Գ. Մաղաքյանը և ուրիշներ արժանացան ՍՍՀՄ Պետական մրցանակի։ ՍՍՀՄ Պետական մրցանակ շնորհվեց նաև Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Կ. Ն. Պաֆֆենհոլցին՝ «Հայաստանի երկրաբանությունը» հետազոտության համար։

Օգտակար հանածոների կանխագուշակման գծով Հայաստանի երկրաբանների կողմից կատարված հետազոտությունները հնարավորություն ընձեռեցին նպատակասլաց ուղղություն տալու երկրաբանական-հետազոտական աշխատանքներին և հայտնաբերելու պղնձի, մոլիբդենի, կապարի, ոսկու, երկաթի, ցինկի և այլ մետաղների մի շարք արդյունաբերական հանքավայրեր։ Լայն ծավալ ստացան աշխատանքները ոչ հանքային օգտակար հանածոների՝ աղի, գիպսի, բարիտի, հանքաներկերի, շինարարական տարբեր նյութերի հանքավայրերի ուսումնասիրության գծով։ Հայաստանում հայտնաբերված օգտակար հանածոների բազայի վրա ստեղծվել ու աշխատում են լեռնահանքային, քիմիական, շինանյութերի արդյունաբերության և այլ ձեռնարկություններ։ 1960-ական թվականներին սկսվեցին աշխատանքները նավթի ու գազի հանքավայրերի հետախուզման ուղղությամբ։

1950—1960-ական թվականներին լուրջ ուսումնասիրություններ կատարվեցին հիդրոերկրաբանության բնագավառում։ Հանրապետության տարբեր շրջաններում հայտնաբերվեցին բուժական նշանակություն ունեցող հանքային ջրեր։

Հայաստանում երկրաբանական գիտության բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացված են «Հայկական ՍՍՀ երկրաբանությունը» բազմահատոր աշխատությունում։

1961 թվականին Լենինականում կազմակերպվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի (երկրաշարժագիտության) ինստիտուտը՝ անդրանիկ ակադեմիական հիմնարկը հանրապետության երկրորդ քաղաքում։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Գ. Նազարովի գլխավորությամբ ինստիտուտի աշխատակիցները հետազոտություններ են ծավալել օգտակար հանածոների

հետախուզման դեոֆիզիկական մեթոդների օգտագործման ուղղությամբ, ինչպես նաև սեյսմոլոգիայի մի շարք պրոբլեմների գծով, որոնք ունեն կիրառական նշանակություն։ Ինստիտուտում մշակվում ու կատարելագործվում են սեյսմիկական սարքավորումներ՝ ուժեղ երկրաշարժերի գրանցման համար։

Զգալի ծավալ են ընդգրկել կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառներում կատարված հետազոտությունները։ Եռապատերազմյան առաջին տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, հետագայում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Լ. Թախթաջյանի ղեկավարությամբ նշանակալից աշխատանքներ տարվեցին բուսաբանության ուսումնասիրության բնագավառում։ Լայն ծավալ ընդունեցին Հայաստանի բուսական աշխարհը հետազոտելու աշխատանքները, որոնց արդյունքներն ամփոփվեցին «Հայաստանի բուսական աշխարհը» բազմահատոր աշխատության մեջ։ Մեծ ուշադրություն էր դարձվում բուսական հումքի ուսումնասիրման և օգտագործման վրա, աշխատանքներ էին տարվում քաղաքների ու գյուղերի կանաչապատման ուղղությամբ։

Կենսաբանության բնագավառի հետազոտությունների ընդհանուր վիճակի վրա խիստ բացասաբար ազդեց այն դրությունը, որը 1940-ական թվականների վերջերից ստեղծվել էր սովետական ամբողջ կենսաբանական գիտության մեջ։ Ամենից առաջ այդ վիճակը բնութագրվում էր գիտական քննադատության ճնշմամբ և հակագիտական տեսակետների տարածմամբ։ Այդ պատճառ դարձավ կենսաբանական գիտությունների այնպիսի կարևոր բնագավառների ետ մնալուն, ինչպիսիք են՝ գենետիկան, ագրոբիոլոգիան, բույսերի ու կենդանիների ֆիզիոլոգիան և այլն։ Բանն այնտեղ հասավ, որ այդ տարիներին սովետական կենսաբանական գիտության մեջ մենաշնորհ դիրք ունեցող ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն ժխտեց կլասիկ գենետիկայի նվաճումները, իսկ այդ գիտությունը հայտարարվեց կեղծ-դիտական, իդեալիստական տեսություն։ 1948 թվականին կենսաբանության հարցերի վերաբերյալ բանավեճի ընթացքում Տ. Դ. Լիսենկոն ու նրա կողմնակիցները հաշվեհարդար էին տեսնում իրենց գիտական հակառակորդների հետ՝ գիտական բանավեճի փոխարեն առաջ քաշելով անհիմն քաղաքական մեղադրանքներ։ Կենսաբանության հարցերին նվիրված բանավեճ կազմակերպվեց նաև Հայաստանում։ Այստեղ նույնպես Տ. Դ. Լիսենկոյի կողմնակիցներն իրենց հակառակորդներին մեղադրում էին «իդեալիզմի», «վեյսմանիզմ-մորգանիզմի» մեջ։ Արդյունքը եղավ այն, որ կենսաբանական գիտության մի շարք կարևոր բնագավառների հետազոտություններ փաստորեն դադարեցվեցին։

Կենսաբանական գիտության մեջ ստեղծված այդ աննորմալ վիճակի շրջումը սկսվեց միայն 1960-ական թվականներին։ Թույլ տրված սխալներն ուղղվեցին։ Սկսեցին զարգանալ կենսաբանական գիտության նորագույն ուղղությունները՝ բիոնիկան, հիդրոպոնիկան, ռադիացիոն գենետիկան և այլն։

1960-ական թվականներին մեծ ուշադրություն դարձվեց անտառատեսակների և անտառագիտության գծով տարվող հետազոտություններին, որոնց նպատակն էր պահպանել և ճիշտ օգտագործել հանրապետության անտառային զանգվածները, ստեղծել նոր անտառաշերտեր։

Կենդանաբանության բնագավառում աշխատանքներ էին տարվում հանրապետության կենդանական աշխարհի ուսումնասիրման ուղղությամբ, մշակվում էին գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարի կենսաբանական միջոցառումներ։ Հետազոտություններ էին կատարվում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարելու ուղղությամբ։ Այդ հետազոտությունների արդյունքներն ունեցան գործնական կարևոր նշանակություն։

Նշանակալից զարգացում ստացան միկրոբիոլոգիայի բնագավառի հետազոտությունները։ 1961 թվականին կազմակերպված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիայի ինստիտուտը ուսումնասիրություններ էր կատարում միկրոօրգանիզմների սելեկցիայի ասպարեզում։ Այդ ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին ստեղծելու միութենական նշանակության մի քանի պատրաստուկներ (պրեպարատներ)։ 1960-ական թվականներին աշխատանքներ էին տարվում Հայաստանում միկրոբիոլոգիական արդյունաբերություն կազմակերպելու ուղղությամբ։ Միկրոբիոլոգիական արդյունաբերությունը՝ անասնապահության համար բակտերիալ պատրաստուկների արտադրությունը, ըստ էության, գիտության իսկական զավակն է։ Հայաստանում ստեղծվում է խոշոր բակտերիական գործարան, որն արտադրելու է նիտրատներ (ազոտաթթվի աղեր), ազոտաբակտերիաներ, սիլոսային մակարդներ։ Աշխատանքներ են ձեռնարկվել Հայաստանում լիզինի արտադրություն կազմակերպելու համար։ Այդ նպատակով կառուցվում է գործարան։

Լուրջ աշխատանքներ կատարվեցին Հայաստանի հողերի ուսումնասիրման գծով։ Այդ հետազոտություններն սկսված էին դեռևս Հայրենական մեծ պատերազմից առաջ, իսկ վերջին տարիներին դրանք ծավալվեցին հետազոտման նոր մեթոդներով։ 1966 թվականին կազմակերպվեց ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը, որի աշխատանքները գլխավորում է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանը։

Հանրապետության գյուղատնտեսական մինիստրության մի շարք գիտահետազոտական հիմնարկներ՝ հողագործության, բույսերի պահպանման, գյուղատնտեսության էկոնոմիկայի, խաղողագործության և գինեգործության, անասնաբուծության և այլ ինստիտուտներ ծավալեցին գիտական ու պրակտիկ լայն գործունեություն, որի նպատակն է կատարելագործել գյուղատնտեսական էկոնոմիկան, բարձրացնել գյուղատնտեսական մշակույթների բերքատվությունը և անասնապահության մթերատվությունը, աճեցնել գյուղատնտեսական կուլտուրաների նոր տեսակներ և անասունների նոր ցեղեր։

Հանրապետության մեջ ուշագրավ աշխատանքներ էին կատարվում ֆիզիոլոգիայի բնագավառում։ Հայկական ՍՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը զբաղվում էր վեգետատիվ նյարդային համակարգության ուսումնասիրությամբ, զարգացնելով սովետական ականավոր ֆիզիոլոգ, աշխարհահռչակ գիտնական Լ. Ա. Օրբելու ուսմունքը։ Այդ բնագավառում ինստիտուտը վերջին տարիներին դարձել է Միության առաջավոր կենտրոններից մեկը։ 1965 թվականին Երևանում անցկացվեց ֆիզիոլոգների հերթական համամիութենական համագումարը։

Հայաստանի ֆիզիկոսներն այդ ընթացքում ուսումնասիրություններ են կատարում նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը բարձրացնելու ուղղությամբ։ Այդ ուսումնասիրությունները, որ տարվում են Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ Ս. Կ. Կարապետյանի ղեկավարությամբ, ունեն ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն։

Ծտպատերազմյան տարիներին հասարակական գիտությունների զարգացումը բնորոշվում է խոշոր տեղաշարժերով, անցյալի լուրջ սխալների հաղթահարմամբ և ստեղծագործական այն վերելքով, որ առաջ եկավ Սովետական Միության կոմունիստական կուսակցության XX համագումարից հետո։ Անհատի պաշտամունքի հետևանքով, հատկապես 1940-ական թվականների վերջերին և 1950-ական թվականների սկզբներին, հասարակական գիտությունների զարգացումն ընթանում էր ծանր պայմաններում։ Անհատի պաշտամունքի մթնոլորտը հատկապես վնասակար ազդեցություն ունեցավ պատմական, տնտեսագիտական և փիլիսոփայական գիտությունների վրա։ Հասարակական գիտության համար ստեղծված այդ ընդհանուր վիճակը ակներև էր նաև Հայաստանում։ Պատմական հետազոտությունների հեղինակները, մասնավորապես նորագույն շրջանի պատմաբանները, որոնք զբաղվում էին հեղափոխական շարժման և սոցիալիստական շինարարության հարցերով, ստիպված էին պատմական դեպքերն ու իրադարձությունները հարմարեցնել այն ժամանակ տիրապետող դոգմաներին, անտեսել մի շարք հեղափոխական գործիչների դերը, ստեղծելով ըստ էության անդեմ պատմություն։ Հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր ժամանակաշրջաններ արժանանում էի՛ սխալ, կանխակալ լուսաբանման, իսկ պրոբլեմների մի ամբողջ շարք առհասարակ անտեսվում և չէր լուսաբանվում։ Պատմական հետազոտությունները տառապում էին սխեմատիզմով, հաճախ հանգում էին «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» դրույթների կրկնության։ Խառնաշփոթություն էր տիրում տնտեսագիտության, հատկապես սոցիալիզմի քաղաքատնտեսության մի շարք արմատական հարցերում։ Հասարակական գիտությունների համար այդ տարիներին բնորոշ էր տիրացությունը, սխեմատիզմը, ինքնուրույն վերլուծության բացակայությունը։

Հասարակական գիտությունների զարգացմանը մեծապես վնասեցին պատմության, լեզվաբանության, գրականագիտության և տնտեսագիտության վերաբերյալ Հայաստանում 1948—1952 թվականներին կազմակերպված բանավեճերը։ Պատմության և գրականագիտության զարգացմանը հատկապես լուրջ վնաս հասցրեց այսպես կոչված «միասնական հոսանքի» տեսության շուրջը ծավալված բանավեճը։ Յուրաքանչյուր մշակույթի սոցիալական երկվության մասին լենինյան ուսմունքի դիրքերից ճիշտ կերպով քննադատելով «միասնական հոսանքի» տեսությունը, Հայաստանում այդ բանավեճը կազմակերպողները ճգնում էին ինչ գնով էլ լինի պատմաբանների և գրականագետների շրջանում գտնել այդ տեսության «համախոհներ» և «մերկացնել» նրանց։ Դա, բնականաբար, հասցրեց նրան, որ գիտական կարծիքների ազատ փոխանակման և ստեղծագործական բանավեճ մղելու փոխարեն սովետական շատ գիտնականներ առատորեն մեղադրվեցին կոսմոպոլիտիզմի, միասնական հոսանքի տեսության համախոհի և այլ «մեղքերի» մեջ, իսկ անցյալի

մի շարք գրական-հասարակական գործիչներ հայտարարվեցին «նացիոնալիստներ»։ Երկար տարիներ արգելքի տակ դրվեց XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական մտքի պատմության հետազոտումը։ Գիտնականների հասցեին անհիմն մեղադրանքներ և նշավակումներ թույլ տրվեցին նաև լեզվաբանությանը նվիրված բանավեճերի ժամանակ։

Կուսակցության XX համագումարը նշանավորեց հասարակական գիտությունների զարգացման նոր փուլ ամբողջ երկրում։ Ազատվելով անցյալի բեռից ու դոգմաներից՝ հասարակական գիտությունների բնագավառի աշխատողներն ստացան ստեղծագործական լայն հնարավորություններ։

1950—1960-ական թվականներին պատմագիտության բնագավառում ուսումնասիրություններ ծավալվեցին հայ ժողովրդի պատմության, ինչպես նաև հնագիտության, ազգագրության ու արևելագիտության գծով։ Անցած տարիների ընթացքում սովետահայ պատմաբանները ձեռք բերեցին նշանակալից հաջողություններ։ Մշակվել են հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային պրոբլեմներ՝ Ուրարտական պետության ծագումն ու պատմությունը, Հայաստանի հին և միջին դարերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությունը, օտարերկրյա զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, հայ ժողովրդի՝ ռուսական կողմնորոշման սկզբնավորումն ու զարգացումը և հայ-ռուսական քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերությունները, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Հայաստանում և այլն։

1950-ական թվականների վերջերից և մանավանդ 1960-ական թվականներին, հայագիտության մեջ սկսեց լուրջ ուշադրության առարկա դառնալ մի բնագավառ, որը մինչ այդ գրեթե անտեսված էր։ Խոսքը վերաբերում է գաղութահայության և սփյուռքի պատմությանը։

Մեծ ուշադրություն էր դարձվում Հայաստանի սովետական ժամանակաշրջանի պատմության հարցերի, մասնավորապես հեղափոխական շարժումների և սովետական իշխանության հաստատման, Հայկական ՍՍՀ-ում սոցիալիստական ու կոմունիստական շինարարության, մշակույթի բնագավառում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների պատմության լուսաբանմանը։

Հայաստանի XIX դարի հասարակական-քաղաքական մտքի ուսումնասիրման և հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսության լուսաբանման գործում մեծ է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանի վաստակը։

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը լուսաբանված է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի մի շարք աշխատություններում։ Սովետահայ պատմագրության մեջ նա առաջիններից մեկը ձեռնարկեց թուրքական բռնապետության դեմ XIX դարում և XX դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությանը։

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու հարցերը միջազգային հարաբերությունների տեսանկյունից և հայ-ռուսական հարաբերությունների մի քանի կարևոր պրոբլեմներ քննարկվել են Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմի-

կոս Ա. Ռ. Հովհաննիսյանի հետազոտություններում։ Դրան զուգընթաց, Ա. Ռ. Հովհաննիսյանը բեղմնավոր աշխատանք է կատարում ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ժամանակաշրջանի սոցիալիստական գաղափարների պատմության լուսաբանման ուղղությամբ։

Միջնադարյան Հայաստանի պատմության, հայ ժողովրդի ծագման, ինչպես նաև Հայաստանի և նրան սահմանակից երկրների պատմական աշխարհագրության ուսումնասիրության գործում մեծ է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի ծառայությունը։

Մի շարք կարևոր հետազոտություններ նվիրվեցին Հայաստանում հեղափոխական շարժումների պատմությանը, սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի աշխատավորների մղած պայքարին, Հայաստանում կոմունիստական կազմակերպությունների գործունեությանը, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմությանը։ Այս ասպարեզում հայտնի դարձան Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Ծ. Աղայանի և թղթակից-անդամ Գ. Ղարիբջանյանի աշխատությունները։

1950—1960-ական թվականներին նշանակալից հաջողությունների հասավ հնագիտությունը։ Հայաստանի բազմահարուստ հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը տվեց գիտական մեծ նշանակություն ունեցող արդյունքներ ոչ միայն Հայաստանի պատմության, այլև համաշխարհային քաղաքակրթության ուսումնասիրման առումով։ Նշված շրջանում հատկապես արդյունավետ էին համաշխարհային ճանաչում ստացած ուրարտական հուշարձանների (Թեյշեբաինի, Էրեբունի), ինչպես նաև հին շրջանի հուշարձանների (Գառնի) պեղումները։ Վերջին տարիներին հաջողությամբ շարունակվում էին դեռևս Հ. Ա. Օրբելու կողմից սկսված աշխատանքները հայերեն արձանագրությունների հավաքման և հրատարակման ուղղությամբ։ Սովետական Հայաստանում հնագիտության զարգացման գործում մեծ ներդրում ունեն Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը, պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանը, և մյուս հնագետները։ 1959 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտ, որը գլխավորում է հնագիտության բնագավառի բոլոր աշխատանքները։ Նույն թվականին կազմակերպվեց պատմագիտության գիտահետազոտական մի այլ կենտրոն՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության բաժինը։ Անցած տարիներին Հայաստանի արևելագետները հրատարակել են մի շարք աշխատություններ նվիրված Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Մերձավոր Արևելքի այլ երկրների պատմությանը։

1950—1960-ական թվականներին նշանակալից հաջողությունների հասավ հայ գրականագիտությունը։ Այդ նվաճումների հիման վրա հաղթահարվեցին այն սխալները, որոնք թույլ էին տրվել անցյալում մի շարք հայ գրողների գրական ժառանգության գնահատման հարցում։ Կուսակցության XX համագումարից հետո հայ ժողովուրդը կրկին տեր դարձավ իր մեծ գրողներ Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի գրական ժառանգությանը, նշանակալից աշխատանք կատարվեց Ռաֆֆու, Պարոնյանի և մյուս գրողների ստեղծագործության ուսումնասիրության ուղղությամբ։ Հայ գրականագետներն ստեղծե-

ցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ հայ գրականության պատմության գծով։ Մասնավորապես, 1960-ական թվականներին հրատարակվեցին «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորները, «Սովետահայ գրականության պատմության» երկհատորյակը և այլ աշխատություններ։ Միաժամանակ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը իրականացրեց հայ գրականության դասականների՝ Հ. Պարոնյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Աբեղյանի, Մ. Նալբանդյանի, Ե. Չարենցի, Հ. Հովհաննիսյանի երկերի հրատարակությունը։ Ավագ սերնդի գրականագետների՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի, թղթակից-անդամ Մ. Մկրյանի և ուրիշների հետ մեկտեղ սովետահայ գրականության զարգացման մեջ իրենց ներդրումը կատարեցին երիտասարդ սերնդի գրաքննադատներն ու գրականության պատմաբանները։

1950-ական թվականներին որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին լեզվաբանության բնագավառում։ Հայոց լեզվի պատմությունը (քերականությունը, բառարանագրությունն ու բառագիտությունը) գտնվում էր սովետահայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում։ 1960-ական թվականների կեսերին մեծ հետաքրքրություն առաջացավ մանավանդ կիրառական լեզվաբանության նկատմամբ՝ կապված հետազոտության մաթեմատիկական մեթոդների կիրառման հետ։ Հայաստանում լեզվաբանության զարգացման գործում գիտական մեծ վաստակ ունեն Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, թղթակից-անդամներ Գ. Սևակը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ։

Նկատելի նվաճումներ ձեռք բերվեցին նաև արվեստագիտության, փիլիսոփայության և հումանիտար մյուս գիտությունների մարզերում։

1950-ական թվականների կեսերից նշանակալից ծավալ ստացան կոնկրետ էկոնոմիկայի բնագավառի հետազոտությունները։ 1960-ական թվականներին ստեղծվեցին տնտեսագիտական բնույթի մի շարք ինստիտուտներ, որոնք մշակում էին արդյունաբերության ու գյուղատնտեսության էկոնոմիկայի բազմաթիվ հարցեր, զբաղվում Հայաստանի նյութական և աշխատանքային ռեզերվների ուսումնասիրությամբ։ Ժողովրդական տնտեսության կառավարման նոր մեթոդների և տնտեսական ռեֆորմի անցկացման կապակցությամբ վերջին տարիներին հանրապետության առաջատար շատ ձեռնարկություններին կից ստեղծվեցին տնտեսագետների խմբեր, որոնք զբաղվում են ձեռնարկությունների շահութաբերության խնդիրներով։

Այսպիսով, սոցիալիստական շինարարության ավարտման և կոմունիզմի կառուցումն սկսելու ետպատերազմյան տարիները Սովետական Հայաստանում գիտության բուռն զարգացման ժամանակաշրջան էին։ Գիտության բոլոր բնագավառներում հանրապետության գիտնականները հասան մեծ հաջողություններ։ Որպես արտադրողական ուժ, գիտությունը Սովետական Հայաստանում ակտիվ մասնակցում է կոմունիստական շինարարության մեծ խնդիրների լուծման համաժողովրդական գործին։

1950—1960-ական թվականներին հանրապետության մեջ արդյունաբերական նոր ճյուղերի կազմակերպման և դրանց արագ աճի կապակցությամբ լայն ծավալ ընդունեցին տեխնիկայի բնագավառի աշխատանքները։ Այդ տա-

րիներին Սովետական Հայաստանում կազմակերպվեց նախագծային ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների լայն ցանց, որտեղ ինժեներական պրոֆիլն միտքը լուծում է տեխնիկական կարևորության շատ հարցեր՝ կապված արդյունաբերության ավտոմատացման, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման և զարգացման հետ։ Տեխնիկական մտքի զարգացման առանձնահատուկ կողմերից մեկն էլ հանրապետության առաջատար արդյունաբերական ձեռնարկություններում հատուկ կոնստրուկտորական բյուրոների ստեղծումն էր։ Հայաստանի արդյունաբերության կողմից թողարկվող արտադրանքի անվանատեսակների ընդլայնումը,—սկսած տրանսֆորմատորներից մինչև սառնարանները, ավտոմատիկայի և կառավարման միջոցներից մինչև ավտոմեքենաները, շարժական էլեկտրակայաններից մինչև ինքնաբեռնարկիչները,—խթանեց տեխնիկական մտքի առաջընթացը հանրապետության մեջ։

Հայկական ՍՍՀ-ում տեխնիկական առաջատար ուղղություններից է հիդրոէներգետիկան, որի զարգացումն սկսվել էր դեռևս նախքան պատերազմը։ Եռապատերազմյան առաջին տարիներին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ջրային էներգետիկայի ինստիտուտը, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Եղիազարյանի գլխավորությամբ, հետազոտություններ ծավալեց Սևան-Հրազդան կասկադի հիդրոտեխնիկական հանգույցների, Կույբիշևի և մի շարք այլ խոշոր հիդրոէլեկտրակայանների մոդելավորման ուղղությամբ։ Տեխնիկական այդ համարձակ լուծումը հնարավորություն կտա փոքրացնելու և մինիմումի հասցնելու Սևանի ջրերի ծախսումը և պահպանելու լճի մակարդակը բավարար բարձրության վրա։ 1963 թվականից սկսվեցին Սևան-Արփա ջրային ուղու հետազոտական, ապա շինարարական աշխատանքները։ Այդ ջրուղով Արփայի ջրերը պիտի հոսեն դեպի Սևան։

«Հիդրոնախագիծ» ինստիտուտի հայկական բաժանմունքի ինժեներները մեծ աշխատանք կատարեցին Հայաստանի նոր էլեկտրակայանների և մասնավորապես Որոտանի կասկադի նախագծման ուղղությամբ։

Եռապատերազմյան առաջին տասնամյակում նշանակալից աշխատանք կատարվեց էլեկտրաէներգիայի և էլեկտրատեխնիկայի բնագավառում։ Այդ աշխատանքները գլխավորում էր Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Իոսիֆյանը։ Այնուհետև Երևանում ստեղծվեց կոմպլեքսային էլեկտրասարքավորման համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ, որը պոլիտեխնիկական ինստիտուտի մի շարք կոնստրուկտորական բյուրոների հետ միասին զբաղվում էր էլեկտրամեքենաշինության խնդիրների համակողմանի մշակմամբ։ 1960-ական թվականներին ծնունդ առան տեխնիկական բնագավառի նոր ուղղություններ՝ ջերմաէներգետիկան և հելիատեխնիկան, էներգոսիստեմների մաթեմատիկական մոդելավորումը և այլն։

1950—1960-ական թվականներին Սովետական Հայաստանում գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ զգալիորեն ավելացավ գիտատեխնիկական բնագավառի աշխատողների թիվը։ Գիտա-տեխնիկական մտավորականությունը սովետահայ մտավորականության առաջատար ջոկատներից մեկն է։

3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Սովետական մշակույթը ինտերնացիոնալ մշակույթ է։ Նա հաստատում է ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ազնիվ գաղափարները։ Ժառանգելով բազմադարյան անցյալի լավագույն, առաջավոր ավանդույթները, որոնք արտահայտում են ազատության և հավասարության գաղափարներ, սովետական կուլտուրան զարգանում է որպես եղբայր-ժողովուրդների կուլտուրա։

Սովետական կուլտուրան մեր երկրի բոլոր ժողովուրդների սեփականությունն է, քանի որ ամեն մի ժողովուրդ իր ավանդն է ներդնում նրա գանձարանը։ Ժողովուրդների միջև մշակութային կապերի գոյությունը նոր երևույթ չէ։ Հայ ժողովրդի և մյուս ժողովուրդների մշակույթների, նրանց առաջավոր ներկայացուցիչների փոխադարձ կապերը գալիս են հեռավոր անցյալից։ Բայց իրենց դրական նշանակությամբ հանդերձ, անցյալում այդ կապերը կրել են միայն պատահական բնույթ։ Այս կամ այն ժողովրդի կուլտուրական նվաճումների մասին առաջներում տեղյակ էին միայն մյուս ժողովուրդների առանձին ներկայացուցիչներ։

Սոցիալիզմի դարաշրջանում դրությունը բոլորովին փոխվում է։ Կուլտուրական հեղափոխության իրականացման շնորհիվ ստանալով իրենց սեփական մշակույթին տիրապետելու բոլոր հնարավորությունները, ժողովրդական մասսաները միաժամանակ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում համաշխարհային մշակույթի նվաճումների նկատմամբ։ Կուլտուրական մերձեցման պրոցեսը սոցիալիզմի ժամանակ խորանում է, ընդլայնվում, նրա զարգացման տենդենցը տանում է դեպի սովետական ժողովուրդների միասնական մշակույթի ստեղծումը։

Նախապատերազմյան շրջանում դեռևս նոր էր սկսվում սոցիալիստական բոլոր ազգերի կուլտուրաների փոխադարձ ազդեցությունը։ Այդ շրջանում տիրապետողը ռուսական սովետական մշակույթի ազդեցությունն էր ՍՍՀՄ մյուս ժողովուրդների մշակույթների վրա, մի երևույթ, որը պայմանավորված էր պատմականորեն։ Կուլտուրական շինարարությանը զուգընթաց, որը հանգեցրեց ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական մակարդակների հավասարեցման, գնալով ավելի որոշակիորեն էր արտահայտվում մշակույթների փոխադարձ հարստացման տենդենցը։ Կոմունիզմի շինարարության ժամանակաշրջանում այդ տենդենցը դարձավ ՍՍՀՄ ժողովուրդների մշակույթների զարգացման աչքի ընկնող գիծը։ Արդեն կարելի է նշել ոչ միայն ռուսական մշակույթի ազդեցությունը մյուս սոցիալիստական կուլտուրաների վրա, այլև մեր երկրի բոլոր ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացման ու մերձեցման ձևավորված պրոցեսը։ Հարկ է ընդգծել, որ մեր երկրի ժողովուրդների հարաբերությունները կրել են որակական փոփոխություններ։ Մշակութային կապերից, որպիսիք կային առաջներում, դրանք արդեն վերածվել են մշակութային կատարյալ համագործակցության։

Սովետական ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը հենվում է ՍՍՀՄ բոլոր ազգերի աշխատավորների՝ գնալով ամրապնդվող տնտեսական ու քաղաքական միասնության վրա։ Դեռևս «Կոմունիստական կուսակ-

ցության մանիֆեստում» Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը մատնանշում էին, որ պատմական զարգացման ընթացքում ընդլայնվում են կապերը ժողովուրդների միջև, ուժեղանում է նրանց փոխազդեցությունը ինչպես տնտեսության, այնպես էլ մշակույթի ասպարեզում։ «Հին տեղական և ազգային կղզիացածության և սեփական արտադրության արդյունքների հաշվին գոյությունը պահպանելուն փոխարինելու է գալիս ազգերի փոխադարձ բազմակողմանի կապն ու բազմակողմանի կախումը։ Սա հավասարապես վերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արտադրությանը։ Առանձին ազգերի հոգևոր գործերի արգասիքը դառնում է ընդհանուր սեփականություն։ Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունն ավելի ու ավելի անհնար են դառնում»[1]։

ՍՍՀՄ ազգային մշակույթները զարգանում են սոցիալիստական գաղափարախոսության ընդհանուր հիմքի վրա։ Սոցիալիստական գաղափարախոսությունը, որը սովետական մշակույթի բովանդակությունն է, ընդհանուր է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների համար։ Ունենալով սոցիալիստական ընդհանուր բովանդակություն, յուրաքանչյուր ազգային մշակույթ միաժամանակ տարբեր է իր ազգային առանձնահատկություններով, ազգային ձևով։ Մշակույթի ազգային առանձնահատկությունը երևան է գալիս ազգային ավանդույթների, ազգային ոճի ու երանգի մեջ, որոնք հատուկ են տվյալ ազգի մշակույթին։ Ընդհանուր, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ժամանակաշրջանում այդ ազգային առանձնահատկությունները չեն համահարթվում, չեն վերանում։ Ավելին, սովետական այս կամ այն ժողովրդի ազգային առաջադիմական առանձնահատկությունը ժողովուրդների կուլտուրաների մերձեցման շնորհիվ դուրս է գալիս ազգային շրջանակներից և ընդունվում մյուս ժողովուրդների կողմից։ Հենց այդ առանձնահատկությունն է նշված Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրում. «Ազգային ձևերը չեն քարանում, այլ կերպարանափոխվում, կատարելագործվում և մերձենում են միմյանց, ազատվելով հնացած այն ամենից, ինչը հակասում է կյանքի նոր պայմաններին»[2]։

Այսպիսով, ազգային մշակույթի զարգացումը կոմունիստական շինարարության պայմաններում նախատեսում է ոչ միայն մշակույթի սոցիալիստական համագործակցության ըստ ամենայնի զարգացում, այլև նրա ազգային ձևերի ու ազգային առանձնահատկության հետագա կատարելագործում։ Ընդ որում, մշակույթի ազգային առաջադիմական գծերն ու ավանդույթները պահպանվում և լայն տարածում են ստանում, իսկ հին, իրենց դարն ապրած ձևերը վերանում են։ Այդ հիմքի վրա էլ մշակվում են Սովետական Միության ժողովուրդների ազգային մշակույթների ընդհանրության գծերը, որոնք, ազգային կուլտուրաներից յուրաքանչյուրի ամբողջ յուրօրինակությամբ հանդերձ, իրենց ամբողջության մեջ կազմում են միասնական սովետական մշակույթ։

Կուլտուրական շինարարության հարուստ փորձը ՍՍՀՄ-ում, այդ թվում Սովետական Հայաստանում, վկայում է, որ ազգային մշակույթների փոխա-

---

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1952, էջ 40։

[2] «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», էջ 138։

դարձ հարստացումն իրենից ներկայացնում է բեղմնավոր մի պրոցես, որը տանում է ոչ թե դեպի ազգային կուլտուրաների առանձնահատկությունների վերացում, այլ, ընդհակառակը, դեպի այն ամեն լավագույնի բացահայտումը, որով հարուստ է տվյալ ազգի կուլտուրան, դեպի այդ լավագույնի մասսայականացումը, այսինքն՝ նաև մյուս ազգերի սեփականություն դարձնելը։ Բոլոր ժողովուրդների կուլտուրական նվաճումների վրա խարսխված ինտերնացիոնալ մշակույթը ամենևին էլ ապազգային չէ։ Այն իրենից ներկայացնում է մի միասնություն՝ բազմազանության մեջ։ Եվ այդ բազմազանությունը սոցիալ-քաղաքական ու տնտեսական զարգացմանը զուգընթաց դառնում է բոլոր ժողովուրդների սեփականությունը։

Կոմունիստական կուսակցությունն ամեն կերպ օժանդակում է մեր երկրի ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացմանը, դրա մեջ տեսնելով կոմունիստական հասարակության մշակույթի ստեղծման հիմնական ուղին։ Ընդ որում, առաջ է քաշվում սովետական բոլոր ազգերի ընդհանուր մշակույթի ինտերնացիոնալ հիմքի հետագա զարգացման, սոցիալիստական ազգերի կուլտուրաների ազգային ձևերի կատարելագործման ու մերձեցման, յուրաքանչյուր ազգի առաջադիմական ավանդույթները սովետական մյուս ազգերի սեփականությունը դարձնելու խնդիրը։

Հայ ժողովրդի մշակութային կապերը, որոնք 1950—1960-ական թվականներին հասան աննախընթաց զարգացման, վկայում են, որ հայկական մշակույթի զարգացումը բնորոշվում է ոչ միայն իր ծաղկմամբ, այլև մյուս ժողովուրդների մշակույթների հետ գնալով ընդլայնվող փոխադարձ հարստացմամբ ու մերձեցմամբ։ Այս տենդենցն իր արտահայտությունն է գտել հայ ժողովրդի հոգևոր ստեղծագործության բոլոր բնագավառներում՝ գիտության, գրականության ու արվեստի մեջ։

Ժամանակակից գիտության զարգացումն անհնար է առանց նվաճումների փոխանակման։ Սովետական մյուս հանրապետությունների գիտնականների հետ Հայաստանի գիտնականների համագործակցությունը արտահայտվում է ժողովրդա-տնտեսական կարևոր պրոբլեմների և տեսական հետազոտությունների մշակման, միասնական արշավախմբերի, գիտական սեսիաների ու կոնֆերանսների անցկացման, փորձի, գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակման և այլ ձևերով։ Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտական պրոբլեմների համատեղ մշակման բազմապիսի օրինակներից է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գիտնական-էներգետիկների ստեղծագործական համագործակցությունը։ 1950—1960-ական թվականներին այդ հանրապետությունների էներգետիկները նախապատրաստեցին և գիտականորեն հիմնավորեցին Անդրկովկասի էներգասիստեմի միավորման անհրաժեշտությունը։ Այդ աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ ստեղծել Անդրկովկասի միասնական էներգասիստեմ, որը մեկ ընդհանուր ցանցի մեջ է ընդգրկում Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի էլեկտրակայանները, ժողովրդական տնտեսությունը ապահովելով էլեկտրաէներգիայի ավելի հուսալի մատակարարմամբ։

Ստեղծագործական սերտ կապերով են բնորոշվում աստրոֆիզիկայի բնագավառի ուսումնասիրությունները։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադե-

միայի Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանը գիտական կոնֆերանսների ու սիմպոզիումների կենտրոն է։ Բյուրականի աստղադիտարանը նշանակալից օգնություն է ցույց տվել Ադրբեջանական ՍՍՀ Շամախիի աստղադիտարանի կոլեկտիվին՝ հետազոտության նոր մեթոդների յուրացման գործում։ Բյուրականի աստղադիտարանի տերիտորիայում է գտնվում Լենինգրադի համալսարանի աստղագիտական բազան։ Այստեղ Լենինգրադի և Հայաստանի գիտնականները կատարում են համատեղ հետազոտություններ։ Իրենց հերթին Բյուրականի աստղադիտարանի շատ աշխատակիցներ Լենինգրադի համալսարանում են անցնում ուսուցման դասընթացը։

Ընդարձակվել ու զարգացել են հասարակական գիտությունների աշխատողների կապերը։ 1950—1960-ական թվականներին Հայաստանի գիտնականներն ակտիվ մասնակցություն ունեցան գիտական շատ կոնֆերանսների և սեսիաների՝ նվիրված պատմության, տնտեսագիտության, հնագիտության, ազգագրության, արևելագիտության, լեզվաբանության, գրականագիտության և հասարակական մյուս գիտությունների զանազան հարցերին։ Հատկապես բեղմնավոր էին Հայաստանի և Ուկրաինայի պատմաբանների ստեղծագործական կապերը։ Նրանք զբաղվում են հայ և ուկրաինական ժողովուրդների դարեր ի վեր հաստատված պատմական կապերի և Ուկրաինայում գոյատևած հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրությամբ։ 1959 թվականին՝ Երևանում, 1962 թվականին՝ Կիևում և Լվովում, իսկ 1967 թվականին՝ կրկին Երևանում կազմակերպվեցին հայ և ուկրաինական պատմաբանների համատեղ գիտական սեսիաներ։

Սովետահայ գիտության նվաճումները ճանաչում են գտել նաև մեր երկրի սահմաններից դուրս։ Ընդարձակվել են հայ գիտնականների միջազգային կապերը։ Արտասահմանյան մի քանի երկրներում թարգմանվել ու հրատարակվել են ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ն. Խ. Հարությունյանի, Ի. Գ. Մաղաքյանի, Վ. Ա. Ֆանարջյանի և այլ գիտնականների աշխատությունները։ 1965 թվականից Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան սկսել է հրատարակել «Աստրոֆիզիկա» հանդեսը։ Այնուհետև այդ հանդեսը սկսեց լույս տեսնել նաև անգլերեն՝ ԱՄՆ-ում։ Հայագետների միջազգային շրջաններում մեծ համբավ ունի «Պատմա-բանասիրական հանդեսը», որ հրատարակում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան՝ 1958 թվականից սկսած։ Նրան աշխատակցում են արտասահմանյան շատ երկրների հայագետներ։ 1960-ական թվականներին Երևանում, արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ, կազմակերպվեցին Աստղագետների միջազգային միության սեսիան, միջազգային սիմպոզիում մաթեմատիկայի գծով, ֆիզիոլոգների կոնգրես և այլ կոնֆերանսներ ու սիմպոզիումներ։

Սովետական ժողովուրդների կուլտուրական համագործակցության զարգացման մեջ մեծ է գեղարվեստական գրականության դերը։ Գրականությունը բարերար ներգործություն և ազդեցություն ունի նոր մարդու հոգեկան կերպարի ձևավորման վրա։ Սովետական գեղարվեստական գրականությունը ժողովրդին մոտ է և հասկանալի հենց նրանով, որ արտահայտում է նրա շահերն ու նպատակները, հաստատում է կոմունիստական հասարակության գաղա-

փարները։ Սովետական Հայաստանի գրողներն իրենց լուման են մտցնում ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Ընդհանուր աշխարհայացքը, միևնույն նպատակներն ու խնդիրները այն հիմքն են, որի վրա խարբսխվում է Սովետական Միության ժողովուրդների օրըստօրե զարգացող ու ծաղկող գրական բարեկամությունը։

Մեր երկրի ժողովուրդների կուլտուրաների փոխադարձ հարստացման ցայտուն ցուցանիշներից մեկն էլ այն է, որ բոլոր ժողովուրդների գրական ժառանգությունն ու ժամանակակից գրական երկերը գնալով ավելի ու ավելի են դառնում սովետական յուրաքանչյուր ժողովրդի սեփականությունը։ Հայ ժողովուրդը, մասնավորապես, հնարավորություն է ստացել իր մայրենի լեզվով կարդալու ռուս մեծ գրողների անմահ գործերը, մեր երկրի մյուս ժողովուրդների գրական լավագույն երկերը։

Գեղարվեստական գրականության թարգմանությունը գրականությունների մերձեցման, փոխադարձ ծանոթացման և հարստացման ամենագործնական ուղիներից մեկն է։ 1950—1960-ական թվականներին հայերեն հրատարակվեցին ռուս, ուկրաինական, վրացական, ադրբեջանական, լիտվական և մյուս ժողովուրդների գրականությունների դասական գործերը, ինչպես նաև ժամանակակից գրողների ստեղծագործությունները։ Մեր երկրի լավագույն գրողները միշտ էլ ընդգծել են փոխադարձ շփումների, ազգային գրականությունների լավագույն գործերը ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով թարգմանելու անհրաժեշտությունը։ Վրացական ականավոր գրող Կոստանդին Գամսախուրդիան իր «Վարպետաց-վարպետի աջը» վեպի հայերեն հրատարակման կապակցությամբ 1960 թվականին գրել է. «Ես մեծ հուզմունքով եմ վերցնում գրիչս այս մի քանի խոսքերը գրելու համար. ինձ համար, իրոք, ուրախալի է, որ իմ վեպը հնչելու է եղբայրական հայերի նշանավոր և հնագույն լեզվով... Մենք, վրացիներս, սիրում ենք ձեզ, հայերիդ, նաև նրա համար, որ մենք, երկվորյակների պես, նման ենք մեկս մյուսիս։ Մեր ժողովուրդների ողբերգական պատմությունները նման են միմյանց։ Մեր սարերը, մեր լեռները, մեր գետերը, վերջապես մեր լեզուներն ու ճարտարապետությունը ապացուցում են այդ բարեկամության նմանությունը... Հայաստանում ես ունեմ ևս մեկ լուսավոր ու մեծ բարեկամ, որի նկատմամբ տածած սերը միշտ էլ կենդանի է իմ մեջ,—դա հայ ժողովուրդն է, որը հայտնի է իր մշակույթով, իր բազմադարյան տառապանքներով և իր արիությամբ»։

Իրենց հերթին անցյալի ու ժամանակակից հայ գրողների՝ Հովհ. Թումանյանի, Ալ. Շիրվանզադեի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի, Մուրացանի, Նար-Դոսի, Ստ. Զորյանի, Գ. Սարյանի, Վ. Անանյանի, Հր. Քոչարի, Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի և ուրիշների գործերը բազմիցս թարգմանվել ու հրատարակվել են ռուսերեն, ինչպես նաև ՍՍՀՄ այլ ժողովուրդների լեզուներով։ Եռապատերազմյան տարիները ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների հետագա մերձեցման ժամանակաշրջան էին, մի հանգամանք, որը հանդիսացավ ժողովուրդների ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման կարևոր գործոն։

Զարգանալով ու հարստանալով ստեղծագործական նոր նվաճումներով, հայ գրականությունը, սովետական ամբողջ գրականության հետ միասին,

պատվով է կատարում իր մեծ դերը։

Ժողովուրդների բարեկամության ամրապնդման և մշակույթների փոխադարձ հարստացման մեջ մեծ դեր է խաղում արվեստը։ 1950—1960-ական թվականներին նշանակալից չափով ընդլայնվեցին հայ արվեստի կապերը մեր երկրի մյուս ժողովուրդների արվեստների հետ։ Այդ կապերն արտահայտվում են բազմապիսի ձևերով՝ թատերական կոլեկտիվների և կատարողների փոխադարձ հյուրախաղեր, արվեստի ու կուլտուրայի օրեր, շաբաթների և տասնօրյակների կազմակերպում և այլն։ Ծտպատերազմյան տարիներին Հայաստանում ելույթներ ունեցան երկրի առաջատար թատերական կոլեկտիվները՝ ՍՍՀՄ Մեծ թատրոնը, Վրաստանի ու Ադրբեջանի օպերային և դրամատիկ թատրոնները, սովետական հանրապետությունների երգի-պարի անսամբլները և այլն։ Մյուս կողմից, հայ արվեստի ներկայացուցիչները հյուրախաղերով Մոսկվայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի և այլ հանրապետությունների ու մարզերի շատ քաղաքների աշխատավորությանը ներկայացրին հայ ժողովրդի արվեստը։

1965 թվականին անցկացվեցին հայ արվեստի տասնօրյակ՝ Էստոնիայում և էստոնական արվեստի տասնօրյակ՝ Հայաստանում։ 1967 թվականին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի տոնակատարության կապակցությամբ, Մոսկվայում կազմակերպվեցին հայկական մշակույթի օրեր։

Հայ մշակույթը դուրս եկավ նաև համաշխարհային ասպարեզ։ 1966 թվականին անցկացվեցին հայ արվեստի շաբաթներ՝ Չեխոսլովակիայում և Բուլղարիայում, իսկ 1967 թվականին՝ հայկական կուլտուրայի օրեր՝ Լեհաստանում։ Հայաստանը հյուրընկալորեն ընդունեց Բուլղարիայի ու Չեխոսլովակիայի արվեստի ներկայացուցիչներին։

Հայկական ՍՍՀ-ն մասնակցեց Բրյուսելի (1958) և Մոնրեալի (1967) միջազգային ցուցահանդեսներին։ Այդ ցուցահանդեսներում հայ արվեստի վարպետների ելույթները, ինչպես նաև հայ նկարիչների գործերը ունեցան մեծ հաջողություն և արժանացան մրցանակների։

Ազգային կուլտուրաների մերձեցման և փոխադարձ հարստացման գործում մեծ դեր խաղացին ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրաների աչքի ընկնող գործիչների հոբելյանների տոնակատարությունները, որոնք արդեն ավանդական ուժ են ստացել ու դարձել են մեր երկրի բոլոր ժողովուրդների մշակույթների ընդհանուր տոներ։ 1962 թվականին երկրում լայնորեն նշվեց ադրբեջանական ականավոր մտածող և լուսավորիչ Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 150-ամյակը, 1963 թվականին՝ հայ մեծ բանաստեղծ, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը, 1966 թվականին՝ վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակը։ Հայ գրողներն ու արվեստագետները գործուն մասնակցություն ունեցան այդ և մյուս հոբելյաններին։

ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը գաղափարական և ստեղծագործական հզոր ուժ է, որը նպաստում է աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը, սովետահայ մշակույթի հետագա զարգացմանն ու ծաղկմանը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

1946 թվականին, պատմական նոր իրադրության պահանջով, Համ(բ)Կ Կենտկոմը գաղափարական աշխատանքի մասին ընդունեց մի շարք որոշումներ («Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, «Դրամատիկական թատրոնների խաղացանկի և նրա բարելավման միջոցառումների մասին» և «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին)։

Այդ որոշումներում առաջադրվեցին սովետական գրականության և արվեստի զարգացման նոր շրջանի գլխավոր խնդիրները։

Առաջնահերթ խնդիր համարվեց բուրժուական գաղափարախոսության խորթ ազդեցությունների հաղթահարումը և սովետական մարդկանց գեղարվեստական լիարժեք կերպարների ստեղծումը։

Նույն թվականի սեպտեմբերին, տևական ընդմիջումից հետո, գումարվեց Հայաստանի գրողների երկրորդ համագումարը, ուր քննարկվեցին գրական-ստեղծագործական աշխատանքի արմատական հարցեր։ Պոեզիայի, արձակի, թատերագրության, քննադատության և գրականագիտության անցած ճանապարհի ու արդի վիճակի հանգամանալի վերլուծությունից բացի, համագումարում արծարծվեցին գրականության գաղափարայնության ու ժողովրդայնության, դասական ժառանգության ավանդների քննադատական յուրացման ու գեղարվեստական վարպետության, թեմատիկայի հարստացման ու ժամանակակից գրական լեզվի զարգացման խնդիրները։

Գրողների համագումարն անցավ սովետական հասարակության կյանքը գաղափարական խորությամբ ու բարձր արվեստով արտացոլելու նշանաբանով։ Այն վճռական նշանակություն ունեցավ գրականության զարգացման համար, գրողների ուշադրությունը կենտրոնացնելով արդիական թեմաների ու գրվածքների քաղաքացիական կենսական բովանդակության խորացման վրա։

Համագումարում արտահայտվեցին նաև անձի պաշտամունքի հետ կապված որոշ վարչարարական միտումներ. մասնավորապես սխալ գնահատվեցին Հայրենական պատերազմի տարիներին ասպարեզ եկած պատմական վեպերն ու մի շարք երիտասարդ բանաստեղծների (Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Մ. Մարգարյան) ստեղծագործության քնարական մոտիվները։ Այդ սխալները բխում էին սոցիալիստական ռեալիզմի մեթոդի աղանդավորական, վարչարարական մեկնաբանությունից։ Ժխտվում էր պատմական թեմայի և

անհատական ապրումների քնարի գոյության հնարավորությունը սոցիալիստական արվեստի շրջանակներում։

Համագումարին մասնակցելու համար հրավիրված էին նաև սփյուռքահայ գրականության մի շարք ներկայացուցիչներ (Զ. Որբունի, Կ. Սիտալ, Լ. Մեսրոպ, Վ. Վահյան և ուրիշներ)։ Հայաստանի գրողների միության նախագահ Ավետիք Իսահակյանը համագումարի բացման խոսքում այդ փաստը գնահատեց որպես սովետահայ և սփյուռքահայ գրականությունների մերձեցման առաջին լուրջ ձեռնարկում, որպես նշանավոր երևույթ բազմադարյան հայ գրականության պատմության մեջ։ Համագումարում հատուկ զեկուցում կարդացվեց «Արտասահմանյան ժամանակակից հայ գրականությունը» թեմայով (զեկուցող՝ Էդ. Թոփչյան)։ Առաջին անգամ խոսակցություն բացվեց մեծ եղեռնի արհավիրքներից հետո աշխարհով մեկ ցրված գաղթավայրերում զարգացող հայ գրականության ուղիների ու միտումների շուրջը։ Մասնավորապես ընդգծվեց հայ սովետական գրականության բարերար նշանակությունը սփյուռքի գրողների երկերը թափանցած հուսահատությունը հաղթահարելու և ազգապահպանման ոգին ուժեղացնելու գործում։

Ծտպատերազմյան առաջին տասնամյակը որոշ իմաստով, մանավանդ թեմատիկայով, հանդիսացավ պատերազմի տարիների գրական ընթացքի շարունակությունը։ Օգտվելով պատերազմի ուղիներում կուտակած կենսափորձից ու պատերազմի վերապրումների հարուստ պաշարից, գրողները նորից ու նորից դիմեցին ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարի անմոռանալի դրվագներին։

Ազատագրական պայքարում ժողովրդի ցուցաբերած հերոսության ու բարոյական ամրության թեմայի հիմնական յուրացնողը եղավ մեծ կտավը՝ վեպը։ Այս ժանրում հանդես եկան Հր. Քոչարը («Մեծ տան զավակները»), Հմ. Սիրասը («Արարատ»), Ս. Խանզադյանը («Մեր գնդի մարդիկ»), Քր. Թափալցյանը («Պատերազմ»-ի առաջին և երկրորդ հատորները), Մ. Շաթիրյանը («Զինվորներ») և ուրիշներ։

Հայ գրողների «առաջմական վեպերում», ինչպես և սովետական մյուս ազգերի գրողների երկերում, այս կամ այն չափով արտահայտվեցին սխեմատիկ պատկերացումներ (մասնավորապես մեր զորքերի նահանջի ողբերգական շրջանի մասին) և պատերազմը գունազարդելու միտումներ։ Անկախ այս և ուրիշ թերություններից (կենցաղային նյութի ծանրաբեռնում, հոգեբանական ճշմարտության փոխարինում հրապարակախոսական ճառերով, վիպական կոնֆլիկտների անբավարար խորություն), այդ վեպերում արտացոլվեցին «խրամատային ճշմարտության» որոշ իրական գծեր և ստեղծվեցին սովետական հայրենասերների մի շարք կերպարներ։

Պատերազմի մասին գրված վեպերից հաջողվածը Հրաչյա Քոչարի «Մեծ տան զավակները» գիրքն է (առաջին հատորը լույս տեսավ 1953 թվականին, երկրորդը՝ 1957 թվականին)։ Վեպի հիմքում դրված է հայկական այն դիվիզիայի հերոսական գործերի պատմությունը, որը ձևավորվել էր դեռևս քաղաքացիական պատերազմի օրերին։ Քոչարը նկարագրում է դիվիզիայի մասնակցությունը պաշտպանական ծանր մարտերին (առաջին հատոր) և Ստալինգրադի ճակատամարտին (երկրորդ հատոր)։

Սովետական բազմազգ զինվորների հերոսական բնավորության ձևավորման գեղարվեստական խնդիրը լուծելու համար հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ժողովուրդների գաղափարական-հոգեկան շահերի միասնության թեմային։ Ռոմանտիկական-քնարական շնչով նա պատմում է Մեծ տան զավակների արյամբ սրբագործված եղբայրության, հայրենասիրական ապրումների, հոգեկան շահերի միասնության մասին։ Վեպի միջով կարմիր թելի պես անցնում է «տարբեր են ծննդավայրերը, բայց հայրենիքը մեկ է» նշանաբանը։ Այս գիտակցությունը ամենազորեղ մարտական զենքն էր, որով հայրենիքի զինվորները համախմբվեցին՝ պաշտպանելու վտանգված երկիրն ու ժողովուրդների խաղաղ աշխատանքը։

Սովետական բանակի շարքային զինվորների, հրամանատարների, ժողովրդական վրիժառուների սխրանքների մասին պատմելուց բացի, Հր. Քոչարը «Մեծ տան զավակները» վեպում ցուցադրեց նաև պատերազմի իրադրության հետ կապված դժվարությունների առանձին կողմերը։ Ծանր պայմաններում հաղթանակի հեռանկարը կորցրած հուսահատության հոգեբանությունը նա արտացոլեց գեներալ Գալունովի, իսկ փառասիրության թեման՝ Ուխաբովի կերպարներով։ «Մեծ տան զավակները» թարգմանվեց ռուսերեն և արժանացավ ուշադրության։

Պատերազմի տարիների թիկունքի կյանքի մասին է պատմում Մ. Արմենի. «Յասվա» վեպը (1952)։ Դրամայի ասպարեզում ուշագրավ էր Գ. Բորյանի «Բարձունքներում» պիեսը (1947), ուր քնարական ջերմ շնչով ներկայացվում են Կովկասի հերոս-պաշտպանների մարտական բարեկամության դրվագները։

Անցած պատերազմի վերհուշի հիմքի վրա ձևավորվեց հայ պոեզիայի հերոսական բովանդակությունը։ Շարունակելով ռազմաճակատային քնարի ավանդները, պոեզիան դարձավ իր արյունը հայրենի հողին նվիրաբերած սերնդի կերպարին։ Հր. Հովհաննիսյանի «Իմ կյանքի երգը» (1947), Գ. Բորյանի «Վիրիկական լուսաբաց» (1945), Վ. Դավթյանի «Առաջին սեր» (1946), Հ. Սահյանի «Որոտանի եզերքին» (1946) ժողովածուների, Արշ. Սարոյանի, Վ. Արամունու, Ղ. Կոմունու և մյուս նախկին ճակատայիններ բանաստեղծությունների քնարական հերոսները այն երիտասարդներն են, որոնք իրենց ապրումներով ու երազանքներով հաստատում են հայրենի հողին հավատարիմ մնալու նվիրական գաղափարը։ Պատերազմի զինվորի հավատարմության ու հավատի բյուրեղացումն է Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը, ուր որպես կեցության բարձր չափանիշ մեծարվում է հայրենի եղերքը։

... Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց զատ,
Քեզ նման կանաչ կյանքով, քեզ համար ելած մարտի,
Կմեռնեմ, միայն թե դու դարերում աղատ խըշշաս,
Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ, նաիրյան դալար բարդի։

Սովետական երիտասարդի հերոսական բնավորությունը բացահայտելու առումով նշանակալից էին Հր. Հովհաննիսյանի սոնետներն ու բալլադները։ Հերոսական տարեգրություններին բնորոշ ոճով բանաստեղծը օրհնում է հի-

շատակն այն նահատակների, ովքեր իրենց արյամբ սրբագործեցին հայրենիքի հավերժությունը։

Իր գրական ուղին սկսելով պատերազմի տպավորություններով, Վահագն Դավթյանը գրեց «Ճանապարհ սրտի միջով» (1953) քնարական ասքը։ Նյութ դարձնելով հայ ժողովրդի խիզախ զավակ Հունան Ավետիսյանի հայտնի սխրագործությունը, Վ. Դավթյանը այդ պոեմում բացահայտել է սովետական հայրենասիրության աղբյուրներն ու հերոսության հոգեբանությունը։

Սովետական գրականության մեջ, նրա պատմության ամբողջ ընթացքում, պատերազմի թեման անբաժան է եղել խաղաղության գաղափարից։ Խաղաղության թեման հատկապես կարևորվեց հետպատերազմյան առաջին տասնամյակում՝ նոր պատերազմը կանխելու համար ծավալված խաղաղության համաշխարհային շարժման օրերին։ Հավատարիմ մնալով սովետական գրականության մարդասիրական սկզբունքներին, հայ գրողները ևս իրենց գրվածքներում արձագանքեցին այդ շարժմանը։

Նաիրի Զարյանի «Խոսք աշխարհին», «Պատասխան Ժանիս Ջուլմաշին», «Խաղաղության աղավնին» բանաստեղծություններում, Հովհաննես Շիրազի «Գիրք խաղաղության և սիրո» (1949), Պ. Սևակի «Անմահները հրամայում են» (1949), Մ. Մարգարյանի «Մոր ձայնը» (1950), Ա. Գրաշու «Երգը թռչում է աշխարհով մեկ» (1952) ժողովածուներում, Գ. Էմինի, Սարմենի, Ս. Տարոնցու ոտանավորներում հրապարակախոսական կրքոտ խոսքով պաշտպանվում է խաղաղության սովետական գաղափարախոսությունը։

Քաղաքական բանաստեղծություններից ու հրապարակախոսական հոդվածներից զատ, խաղաղության գաղափարը ներթափանցեց հայ արձակի այն երկերը (Ստեփան Ալաջաջյան՝ «Անապատում», «Պարտություն», Արիդ Ավագյան՝ «Շիկացած հողը», Գարեգին Սևունց՝ «Թեհրան»), որոնք նվիրված էին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին։ «Իրանական նոթեր» հրապարակախոսական գրքից հետո «Թեհրան» երկհատոր վեպում (1952) Գ. Սևունցը իրանական ռեակցիայի դեմ դեմոկրատական ուժերի մղած պայքարը մեկնաբանում է որպես խաղաղության շարժման յուրահատուկ արտահայտություն։ «Թեհրանը» թարգմանվեց սովետական և արտասահմանյան մի շարք ժողովուրդների լեզուներով։

Հայ ժողովրդի մոտավոր անցյալը պատկերող վեպերից ուշագրավ էին Խաչիկ Դաշտենցի «Խոդեդանը» (1949) և Աղավնու «Շիրակը» (1953)։ Մի ընտանիքի կենսագրության օրինակով Դաշտենցը ներկայացրել է 1915 թվականի մեծ եղեռնի արհավիրքները, իսկ Աղավնին ժողովրդական կյանքի հյութեղ գույներով ցուցադրեց հեղափոխական ինքնագիտակցության կազմավորման ընթացքը հայ գյուղում։ «Շիրակը», թարգմանվելով ռուսերեն, արժանացավ դրական գնահատության և համարվեց հայ արձակի նվաճումը։

Հայ գրականությունը նշված տասնամյակում չբավարարվեց միայն պատերազմի ու անցյալի նյութով։ Նրա հիմնական բովանդակությունը դարձավ ժողովրդի արդիական կյանքն ու աշխատանքը։ Ժամանակակից թեմայով գրվեցին զգալի քանակությամբ վեպեր ու պոեմներ, պիեսներ ու բանաստեղծություններ։ Բայց արդիականության պրոբլեմների գեղարվեստական յուրացումը տեղի ունեցավ բարդ ու հակասական ընթացքով։ Ռեալիստական առողջ

սկզբունքների կողքին գրականության մեջ պարարտ հող գտան մակերեսային ու սխեմատիկ արտացոլումները, գունազարդումն ու երևույթների անկիրթ արծարծումները։ Բանվոր դասակարգի և գյուղի մասին պատմող մեծաթիվ վեպերում մարդկանց իրական հարաբերություններին ու հոգեբանությանը փոխարինեցին անարյուն սխեմաներն ու հովվերգական մտացածին միջավայրը։ Վեպերի մեծ մասը ողողվեց կենցաղային մանրուքների նատուրալիստական նկարագրություններով։ Պիեսներից դուրս մղվեց դրամատիզմի կարևորագույն պայմանը՝ մարդու հոգեկան ներքին դրաման։ Քնարերգության մեջ բարգավաճեցին ներբողագրական, շքեղազարդ ոճերն ու արտահայտչության հակառեալիստական եղանակները՝ ճաղն ու խրատը։



Գրող Դերենիկ Դեմիրճյան

Այս երևույթների առաջացման պատճառը, հասարակական կյանքի զարգացման նոր ձևերի ու միտումների անբավարար ճանաչողությունից բացի, նաև այն մթնոլորտն էր, որ թելադրում էր անձի պաշտամունքը։ Գրական ընթացիկ կենցաղում սովորություն դարձան կյանքի այս կամ այն երևույթի գրոհային արձագանքի սկզբունքը, վարչարարությունն ու պատեհապաշտությունը։ Ռեալիստական գրականության զարգացմանը անհամատեղելի գունազարդումն ու անկոնֆլիկտայնությունը այնքան մեծ տարածում գտան, որ «հիմնավորվեցին» անգամ տեսականորեն։ Դա համարվեց «սոցիալիստական արվեստի ռոմանտիկական ոճի» բնորոշ արտահայտություն։

Ծտպատերազմյան տասնամյակում տեղ գտած այս երևույթները, որքան էլ տարածված ու ամուր լինեին, այնուամենայնիվ, չէին կարող կասեցնել գրականության առաջընթացը։ Ժամանակի վարչարարական դժվարությունների միջով և գեղագիտական մոլորությունները հաղթահարելով, իր իրավունքներն էր հաստատում ժամանակակից մարդու և ժողովրդի կյանքը պատկերող ռեալիստական արվեստը։ Այս շրջանում Ն. Զարյանը ամբողջացրեց «Հացավան» վեպը (1947), գրեց «Աղբյուրի մոտ» (1949) և «Փորձադաշտ» (1950) կատակերգությունները։ «Անկոնֆլիկտ դրամայի» տեսության տիրապետության պայմաններում Ն. Զարյանը բեմ հանեց սովետական հասարակության հակասությունները ներկայացնող կերպարներ, դրանց թվում դասական թատերագրությանն արժանի այնպիսի կերպար, ինչպիսին Բալաբեկն է։ Անհատապաշտական հոգեբանությունը մարմնացնող Բալաբեկը, որպես հատուկ անուն, մտավ ժողովրդի մեջ։

Գյուղի զարգացման դժվարություններն ու հոգսերը արտացոլելու դիրքավորումով ժամանակի «հովվերգական վեպերից» առանձնացավ Սերո Խան-

զադյանի «Հողը» (1954)։ Պատմելով Զանգեզուրի լեռնային գյուղերից մեկի մարդկանց դժվարին պայքարի ու աշխատանքի մասին, Ս. Խանզադյանը «Հողը» վեպում կերտեց նաև ժողովրդի բարոյական բարձր գծերը մարմնացնող մի շարք կերպարներ (Գարեգին Մովսիսյան, Մանուշ, Բաղդասար պապ)։ «Հողը» միացավ սովետահայ արձակի բնաշխարհիկ ուղղությանը։ Այդ ուղղության ամենաընդգծված դեմքը այս ժամանակաշրջանում Վախթանգ Անանյանն էր։ Նրա որսորդական ու բնասիրական պատմվածքների պրակները, ինչպես նաև համամիութենական մրցություններում մրցանակի արժանացած «Սևանի ափին» (1951) և «Հովազաձորի գերիները» (1956) վիպակները, թարգմանվեցին քսանից ավելի լեզուներով։

Այս ժամանակաշրջանի պոեզիայի զարգացումը ևս ընթացավ ստեղծագործական հակասություններով։ Բանաստեղծական ժողովածուների մեծ մասին պակասում էր ինքնուրույն հայացքը կյանքի հանդեպ։ Վերամբարձ ոճերը փոխարինեցին արտահայտման ռեալիստական ձևերին, հրապարակախոսական անկենդան դարձվածքները՝ քնարական սկզբունքին, նկարագրական երկարաբանությունը՝ հասարակական այրող հարցերի ինքնատիպ լուծումներին։ Բանաստեղծական ձիրք ունեցողները կա՛մ դժվարությամբ էին հաստատում մարդու ներքին աշխարհի հարստությունը արտահայտելու անվիճելի իրավունքը, կա՛մ, ընկնելով ծայրահեղության մեջ, կենսական բարձր սկզբունքը փոխարինում էին մանրաթեմայնությամբ ու «քնարական գեղեցկագրությամբ»։ Հայ սովետական պոեզիայի զարգացումը կաշկանդող երևույթների մասին լուրջ խոսակցություն բացվեց գրողների երրորդ համագումարին (1954, հուլիս) նախորդած բանավեճում։

Տասնամյակի քնարերգությունը, անտարակույս, ճգնաժամի մեջ չէր, ինչպես ենթադրում էին բանավեճի որոշ մասնակիցներ։ Հաղթահարելով վարչարարական արգելքներն ու գեղագիտական նախապաշարմունքները, բանաստեղծների նոր սերունդը պոեզիա բերեց ժամանակի գծերն ու հոգեբանությունը։ Ներբողագրական բանաստեղծության վերակենդանացած ձևերը հաղթահարելու և կյանքի նկատմամբ սեփական հայացք մշակելու առումով ընդգծվեցին Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի նոր գրքերը։

1951 թվականին Պետական մրցանակի արժանացավ Գ. Էմինի «Նոր ճանապարհ» բանաստեղծությունների ժողովածուն, որը վերակենդանացնում էր Ե. Չարենցի քաղաքաշինական բանաստեղծության ավանդները։

– 1952 թվականին Պետական մրցանակի արժանացավ նաև Սիլվա Կապուտիկյանի «Իմ հարազատները» (1951) ժողովածուն։ Սովետական հայրենիքի տարբեր անկյունները ճանապարհորդած բանաստեղծուհին այդ գրքում պատմում է սովետական մարդկանց հարազատության ու բարեկամության մասին, որով ամրացավ կեցության սոցիալիստական ոճը։ «Իմ հարազատները» բազմազան հետաքրքրություններով, լայն շնչով, զգացմունքներով հարուստ գիրք է։ «Երկրի ճամփաները» բանաստեղծուհուն գրավում են ոչ թե ինչ-ինչ էկզոտիկ հատկանիշներով, այլ առօրյայի գեղեցկությամբ, ժամանակակիցների հոգեկան գծերի հարստությամբ, աշխատանքի ստեղծարար բովանդակությամբ։

Ս. Կապուտիկյանի ստեղծագործության լավագույն էջերից մեկը սիրա-

յին քնարն է, որով նա բարոյական բարձր չափանիշներ տվեց երիտասարդ ընթերցողին։

Անհատական ապրումների աղնվությամբ աչքի ընկավ նաև Մ. Մարգարյանի «Փշատենի» (1953) գիրքը։

Պոեզիայում ռեալիստական արտահայտչությունն ու ժողովրդական կենդանի ոճը վերակենդանացրեց Համո Սահյանը, 1955 թվականին ասպարեզ բերելով «Բարձունքի վրա» ժողովածուն։ Բնությանը նվիրված ոտանավորներով և բանկարներով նա արտահայտում է ժամանակակիցների տագնապներն ու երազանքները, մանկության կարոտն ու հավատարմությունը հայրենի հողին։ Ազգային-ժողովրդական ավանդներով իր ճաշակը կրթած բանաստեղծը տվեց լեռնային բնության այնպիսի ներշնչված պատկերներ, որոնք կարելի է դասել բնանկարչության դասական արժեքների շարքը։

Գրականագիտության զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցավ 1952 թվականին կազմակերպված բանավեճը, որը նվիրված էր «միասնական հոսանքին»։ Անցյալի գրողների ու մտածողների արդիական նշանակության պրոբլեմի գիտական քննության փոխարեն՝ այդ բանավեճում ասպարեզ բերվեցին նրանց ժառանգության ժխտման վնասակար միտումներ։ Ազգային-ազատագրական շարժումների դեմոկրատական բովանդակության և անցյալի մի շարք խոշոր գործիչների (Րաֆֆի, Ստ. Նազարյան, Դ. Պատկանյան) ժառանգության հակագիտական մեկնաբանություններից բացի բանավեճում միտումնավոր քննադատության ենթարկվեցին մի շարք ականավոր գիտնականների (Մ. Աբեղյան, Ա. Տերտերյան) գրականագիտական աշխատությունները։

Չնայած աննպաստ պայմաններին՝ աղանդավորական կաշկանդումներին, գրականագիտությունը դրական արդյունքների հասավ մասնավորապես մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի և հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի ժառանգությունը հետազոտելու ասպարեզում։

Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի և Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի հոբելյանները, որոնք տոնվեցին համամիութենական ծավալով, նրանց գրական ու հրապարակախոսական ժառանգության ուսումնասիրման նոր փուլի սկիզբ դարձան։ Հրապարակված գրքերից գրականագիտական լուրջ արժեքներ են Ա. Տերտերյանի «Աբովյան» մենագրությունը և Ա. Ինճիկյանի «Մ. Նալբանդյանի կյանքի տարեգրությունը»։

Ծտպատերազմյան առաջին տասնամյակում դրական գործ արվեց հայ մարքսիստական գրաքննադատության հիմնադիրներ Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ժառանգությունը մասսայականացնելու ուղղությամբ։ Մ. Ա. բեղյանի անվան գրականության ինստիտուտը ավարտեց պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի երկերի հրատարակությունը։

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայ սովետական գրականության արդի շրջանը (1956—1968) աչքի ընկավ նոր միտումներով, գրականության կենսական բովանդակության խորացման ու արտահայտչական ձևերի նորացման ընդգծված հատկանիշներով։

Գրականության բոլոր ժանրերի զարգացման համար բարերար նշանակություն ունեցավ սովետական հասարակության կյանքում Լենինյան դեմոկրատիայի սկզբունքների հաղթանակը։

Մարդու հոգեբանության ճանաչման տեսանկյունը և իրականության սոցիալական կապերի վերլուծման սկզբունքը՝ մեծ ու բովանդակալից արվեստի վճռական չափանիշները, դարձան գրականության ուղեցույց նշանաբաններ։ Թոթափելով աղանդավորական կաղապարները և իր էության սխոլաստիկական մեկնաբանությունները, սոցիալիստական ռեալիզմի մեթոդը վերստին հաստատեց բազմամյա փորձով ստուգված չափանիշների կենսունակությունը։ Սոցիալիստական ռեալիզմը գիտակցվեց որպես իրականության հակասությունները բացահայտող, հասարակական զարգացման օրինաչափությունները իմաստավորող, գրականությունը բազմաղան ձևերով ու ոճերով հարստացնող մեթոդ։

Հայաստանի գրողների երրորդ (1954, հուլիս) և չորրորդ (1959, հունվար), ինչպես և սովետական գրողների համամիութենական երկրորդ (1954, դեկտեմբեր) և երրորդ (1959, մայիս) համագումարները, ամփոփելով ետպատերազմյան գրականության դրական արդյունքները և բացահայտելով գրականության զարգացումը կաշկանդող երևույթների պատճառները, արդյունավետ ուղիներ նշեցին ժողովրդի և կյանքի հետ գրականության կապերը խորացնելու, նրա բովանդակությունը հարստացնելու, գրական վարպետությունը բարձրացնելու համար։ Առաջնահերթ խնդիր համարվեց նախորդ տասնամյակի գրականության մեջ արտահայտված վնասակար երևույթների (իրականության գունազարդում, հակասությունների կոծկում, սխեմատիզմ և այլն) հաղթահարումը և ժամանակակիցների հոգեբանության հետազոտումը։

Արդի շրջանի գրականության զարգացման ցայտուն կողմերից մեկն այն է, որ երկար ճանապարհ անցած հեղինակների կողքին ստեղծագործական դիրքերում ամրապնդվեց բանաստեղծների ու արձակագիրների մի նոր, շնորհալի սերունդ։ Այս սերունդը բերեց ժամանակակիցների հոգեբանության մեջ խորանալու և գեղարվեստական ձևերը նորացնելու առողջ միտումներ։

Հասարակական գիտակցության մեջ կատարված էական տեղաշարժերը, մարդու գնահատման հումանիստական չափանիշները և ժողովրդի ստեղծագործ աշխատանքը այս շրջանում կյանքի կոչեցին վեպերի ու վիպակների, բանաստեղծությունների ու պոեմների, պատմվածքների ու դրամաների, ուղեգրական նոթերի ու մեմուարների մի վարար հոսանք։ Դա միայն քանակ չէ, այլև գեղարվեստական այնպիսի որակ, որ նշանավորում է գրականության առաջընթացը և գծում նրա զարգացման գրավիչ հեռանկարները։

Գրականության առաջընթացում բացառիկ արդյունավետ նշանակություն ունեցան տևական բաժանումից հետո նորից շարք վերադարձած Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի ավանդները։ Ե. Չարենցի հռչակած քաղաքացիական քնարի սկզբունքները և նրա պոեզիայի կենդանի չափանիշները արգասավորեցին ժամանակի գեղարվեստական մտածողությունը՝ կոչելով նրան դեպի մարդու իրական գիտակցության բացահայտում, դեպի ժամանակի սոցիալական այրող հարցերի ու ժողովրդի անցած ճանապարհի խոր իմաստավորում։ Ա. Բակունցի արձակի ավանդները կարևոր նշանակություն ունե-

ցան ժամանակակից գրականության ազգային նկարագիրը հաստատելու և ռեալիստական հայացքը խորացնելու մեջ։

Պատմական նոր իրադրության հանդեպ առանձնապես զգայուն գտնվեց հայ բանաստեղծների քնարը։ Հաղթահարելով նախորդ տասնամյակի հռետորական ընձերն ու ներբողագրական սխեմաները, պոեզիան դուրս եկավ զարգացման նոր բնագծեր։ Բանաստեղծական պատկերի ներքին հարստություն, հումանիստական բարձր հայացք, հոգեբանական խորացում, քաղաքացիական ներշնչանք, բանաստեղծական ձևերի ու կառուցվածքների բազմազանություն,—սրանք արդի շրջանի հայկական պոեզիայի այն հատկանիշներն են, որոնցով նա արժանացավ համամիութենական ճանաչման։

Պոեզիայի զարգացման մեջ վճռական դեր խաղաց այն ճշմարտության ըմբռնումը, որ մարդու իրական գիտակցության ու ներքին աշխարհի հարստության ճանաչումն է նրա առարկան,—դարերով հաստատված ճշմարտություն, որ մի որոշ ժամանակ փոխարինվեց «տիեզերական անհատին» փառաբանող օդաններով։

Զարգացման նոր ուղիները ճշտելու համար պոեզիան այս շրջանում հետադարձ մի հայացքով դարձավ իր անցած ճանապարհին։ Թե՛ տեսության մեջ, թե՛ բուն բանաստեղծության ներսում խոսակցություն բացվեց նրա առարկայի, հասարակական կոչման ու խնդիրների շուրջը։ Խոսակցության նյութ դարձան ոտանավորի հուզական և դատողական սկզբունքների համադրման, ավանդականի և նորարարականի, դասական կառուցվածքների և արտահայտչական նորագույն ձևերի հարաբերության, բանաստեղծական պատկերի յուրահատկության, պոեզիայի նախահիմքերի, նրա նորացման ու հարստացման աղբյուրների, իսկական ժողովրդայնության և ժողովրդական տարող հագած, բայց ըստ էության արխայիկ ոճաբանության հարցերը։ Անկախ ծայրահեղություններից ու սխալ դատողություններից, պոեզիայի շուրջը ծավալված վեճերը դրական նշանակություն ունեցան՝ հաստատելով մի շարք էական ճշմարտություններ։ Եվ դրանց թվում ամենաէական ճշմարտությունը, որ անհատական գույների և ընկալումների զանազանությամբ հանդերձ, բանաստեղծները պարտավոր են լինել իրենց ժամանակի ու ժողովրդի կյանքի արտահայտիչները, լուծելու «մարդու մարդկայնացման» հումանիստական խնդիրը։

Դատապարտելով ներբողագրական, անհույզ ու վերամբարձ բանաստեղծությունը, արդի շրջանի պոեզիան գնաց հոգեբանական խորացումների ու քաղաքացիական բովանդակության հարստացման ճանապարհով։

Հայ սովետական պոեզիայի վերելքին իրենց մասնակցությունը բերեցին թե՛ սվագ սերնդի բանաստեղծները (Ն. Զարյան, Գ. Սարյան, Վ. Նորենց, Ս. Տարոնցի, Գ. Մահարի, Սարմեն, Ա. Գրաշի), թե՛ միջին սերունդը, որ դարձավ արդի շրջանի գրականության առաջատար ուժը, և թե՛ ամման արագությունը վերցրած երիտասարդները։

«Արև և ստվեր» (1957) գրքից հետո, Ն. Զարյանը գրեց մի շարք նոր գործեր, այդ թվում «Ասք էության» (1967) հրապարակախոսական-բանավեճային պոեմը, որը ազգային շարժումների բովանդակության հակապատմական

մեկնաբանություններին հակադրեց ճշմարիտ հայացքը հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուղիների մասին։

Դատապարտելով ներբողական պոեզիային տված տուրքերը, Սարմենը իր նոր գրքերում («Բանաստեղծի աղբյուրը»—1961, «Կենաց բաժակ»—1963) դարձավ մարդու անհատական ապրումներին։

«Իմ սիրո պոեմը» (1954) և «Ծիածանի յոթ երգը» (1961) գրքերում հայրենի բնությունը երգեց Ա. Գրաշին։ Ուշադրության արժանի են հատկապես ծննդավայրին՝ Ղարաբաղին նվիրված բանաստեղծությունները։

«Քնար Հայաստանի» վերնագրված երկու հատորների (1958 և 1965) նոր ոտանավորներում Հ. Շիրազը բերեց ժողովրդի զգացմունքներով հարստացած խոսքը Հայաստանի վերածնության, նրա անցյալի և հայ ժողովրդի նվիրական երազանքների մասին։

Կյանքի երևույթների խորքը թափանցելու ձգտում, ապրումների մարդկայնացում, քաղաքացիական անհանգստություն, խնդիրների գեղարվեստական և ոչ թե թեմատիկ լուծումներ, զննողական տարերք, ոճական հարստություն,—արդի պոեզիայի այս հատկանիշները առավել ցայտունությամբ արտահայտվեցին Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961), Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» (1963), Համո Սահյանի «Հայաստանը երգերի մեջ» (1962), «Մայրամուտից առաջ» (1964), «Քարափների երգը» (1968), Գևորգ Էմինի «Երկու ճամփա» (1963), Վահագն Դավթյանի «Ամառային ամպրոպ» (1964), «Գինու երգը» (1966), Հրաչյա Հովհաննիսյանի «Հրաշալի այգեպան» (1957), «Ծովի լռությունը» (1963), Մարո Մարդարյանի «Ձնհալից հետո» (1965) ժողովածուներում։

Ստեղծագործական հնարավորություններով, գրական խառնվածքով ու նախասիրություններով տարբեր այս բանաստեղծները միանում են այն հանգույցում, որ կոչվում է ժամանակի և մարդու ճանաչում։ Նրանցից ամեն մեկը ձգտում է գտնել ժամանակի այրումներն ու ապրումներն արտահայտող բանաստեղծական խոսք։

Ուշադրության արժանի է Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» ժողովածուն։ Ելակետ ունենալով դարաշրջանի սոցիալական ու հոգևոր փորձի հարստությունը, Ս. Կապուտիկյանը դառնում է հերոսական մաքառման այն ուղիներին, որոնցով հայ ժողովուրդը հասավ ազգային վերածնության բարձունքին.

Մենք կառուցեցինք քառասուն տարի,
Բայց ուժով, հույսով, կուտակված լույսով քառասուն դարի՛։

«Մտորումներ ճանապարհի կեսին» գրքում Ս. Կապուտիկյանը ասպարեզ բերեց նաև անհատական ապրումների մասին պատմող բանաստեղծություններ, որոնք զգացմունքի ճշմարտության լեզվով ներկայացնում են ժամանակակիցների սերը, բարոյական ամրությունը, հումանիստական երազանքը։ Արտահայտման անկեղծությամբ ու խորությամբ է բացատրվում Ս. Կապուտիկյանի սիրային քնարի արտակարգ հաջողությունը։ Ինչպես գրում է ռուս բանաստեղծուհի Վերա Ինբերը, Ս. Կապուտիկյանի սիրերգությունը «մեր առաջ բացում է սրտի շռայլ աշխարհը», տառապանքն ու հրճվանքը, կարոտն

ու տագնապը։ Իր սիրային քնարով Ս. Կապուտիկյանը բանաստեղծությանն է վերադարձնում զգացմունքի ճշմարտությունը, զարգացնելով Ավ. Իսահակյանի և Վ. Տերյանի սիրերգության մի ինչ-որ տեղ ընդհատված ավանդները։

Արդի շրջանի պոեզիայում նշանակալից արժեքներ են Համո Սահյանի «Մայրամուտից առաջ» (1964) և «Քարափների երգը» (1968) ժողովածուները։ Իր բանաստեղծություններից մեկում Հ. Սահյանը գրում է.

Ամեն օր նոր է թվում աշխարհը...

Այս զգացողությամբ է բանաստեղծն ամրապնդում իր հոգեկան կապերը ժամանակի հետ, որոնելով նորացող աշխարհի գծերի ու գույների հարստությունն արտահայտող գեղարվեստական ոճը։

Նորացած ու ջահելացած, իր ապագայի վառ հավատով շնչող Հայաստանի կերպավորումից («Հայաստանը երգերում» շարքը) բացի, Հ. Սահյանը գրեց բնանկարչական բանաստեղծության այնպիսի էջեր, որոնք իրենց փիլիսոփայական խորությամբ ու զգացմունքների թարմությամբ նկատելի ավանդ են ամբողջ սովետական պոեզիայում։ Հ. Սահյանի բնանկարչությունը տարբերվում է և՛ բնությունն աստվածացնող պանթեիստների պատկերացումից, և՛ բնության անաղարտությունը քաղաքակրթությանը հակադրող ժամանակավրեպ հայացքներից։ Հ. Սահյանը բերում է բնության թեմայի ժամանակակից լուծումներ՝ իր երգերում մեծ տեղ տալով բնության ու քաղաքակրթության միասնության երազներին։

Հայրենի լեռների, կիրճերի, քարափների ու անտառների բանաստեղծական պատկերներով Հ. Սահյանը ժամանակակից պոեզիայում ամրապնդում է ռեալիստական արվեստի կենսունակ ավանդները։

Բանաստեղծուհի Մարո Մարգարյանը «Զնհալից հետո» (1966) նոր գրքում քնարական խոստովանություններով, դիմումներով ու կանչերով արտահայտեց ժամանակակիցների տագնապներն ու մտահոգությունները, երազանքներն ու բարոյական իդեալները։

Գ. Էմինի պոեզիայի բնորոշ հատկանիշները՝ զննողական տարերք, մտքի աֆորիզմային խտացում, բանաստեղծական ձևերի ինքնատիպություն, կյանքի երևույթների սուր ընկալում,— խորացան «Երկու ճամփա» գրքում (1963), վերստին հաստատելով նրա գրված արժանի տեղը ժամանակակից գրականության մեջ։

Հր. Հովհաննիսյանն իր վերջին ժողովածուներում («Հրաշալի այգեպան», «Ծովի լռությունը») ռոմանտիկական հուզառատ ոճով կերտում է հողի մարդու՝ հրաշալի այգեպանի կերպարը։ Նա պատմում է այգեպանի ապրումներից՝ ուրախություններից ու հոգսերից, դառնություններից ու վայելքներից, նվիրումներից ու լուռ ցավերից, ամբողջացնելով մի ներդաշնակ ու կենդանի մարդկային խառնվածք։

Ստեղծագործական դիրքերում ամրապնդվեց Վահագն Դավթյանը, գրելով «Ամառային ամպրոպ» և «Գինու երգը» ժողովածուները։ Առաջին հայացքից հանգիստ, բայց ներքուստ լարված չափատողերում Վ. Դավթյանը բերում է մարդու իրական հոգեբանությունը ներկայացնող պատկերներ։ «Գինու երգը»

շարքը համարձակ փորձ է արևմտահայ ու արևելահայ բանաստեղծական ավանդները մերձեցնելու ասպարեզում։

Պոեզիայի սկսված նորոգման ընթացքի ամենաբնորոշ արտահայտությունը Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» գիրքն է։ Քաջ գիտակցելով, որ ժամանակակից պոեզիայի նորացման աղբյուրը ժամանակակից մարդն է՝ իր բարդ ու հարուստ աշխարհով, Պ. Սևակը իր գրքի խոստովանություններում, ձոներում, ասքերում ու մենախոսություններում գնաց դեպի ապրումների առավել խոր անհատականացում և ժամանակի հետ ունեցած մարդու կապերի ավելի հիմնավոր բացահայտում։ Ընդհանրապես, վերացականորեն ըմբռնված մարդու և անառարկա ապրումների բանաձևերի փոխարեն, նրա գրքում ամրապնդվեց ժամանակակից մարդն իր բարդ մտածումներով ու զգացմունքների ամբողջական աշխարհով։

Պ. Սևակի նոր գրքի ոտանավորները կառուցված լինելով մետաֆորական բարդ զուգադրումների ու վերամարմնավորումների սկզբունքով, հայ պոեզիան հարստացրին լայն տարածում գտած այդ ոճով։ Յուրացնելով արդի պոեզիայում կիրառվող ազատ ոտանավորի հիմունքները, Պ. Սևակը շարունակեց Սիամանթոյի ու Չարենցի ընդհատված ավանդները։ Ազատ ոտանավորը, ինչպես երևում է Սևակի փորձից, մի շարք նոր հնարավորություններ է բացում՝ մարդու հոգեկան աշխարհի արտացոլման համար։

Քնարական ու խոհական-փիլիսոփայական բանաստեղծություններից բացի, պոեզիայում երևացին նաև մեծ կտավներ՝ պոեմներ։ Դրանց նշանակալի մասը, հատկապես այն պոեմները, որոնց նյութը քաղված էր ժամանակակից կյանքից, չդարձան «գրական եղանակ» ստեղծող գործեր։ Երևույթների մակերեսային ընկալումը, կյանքի հակասությունների մոտավոր իմացությունը, ժանրի գեղարվեստական առանձնահատկությունների պարզունակ ըմբռնումը եղան այն գլխավոր պատճառները, որոնք այդ պոեմները դատապարտեցին սոսկ «գրականության քարտարաններում» մնալու բախտին։

Եթե Հայաստանի ժամանակակից կյանքն արտացոլող պոեմները որևէ նորությամբ չհարստացրին այդ դժվարին ու անհրաժեշտ ժանրը, ապա դրանց կողքին գեղարվեստական հայտնություններ եղան այն պոեմները, որոնց նյութը քաղված է ժողովրդի պատմությունից։

1961 թվականին լույս տեսավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը»։ Դա գրականության մեջ ժամանակագրական նոր թվական հաստատող մի գործ է, որ բացառիկ արագությամբ տարածվեց թե՛ Սովետական Հայաստանի, թե՛ սփյուռքի ընթերցողների մեջ։ 1966 թվականին տպագրվեց պոեմի երկրորդ, վերամշակված տարբերակը, որի համար Պ. Սևակը արժանացավ Հայաստանի Պետական մրցանակի։ «Անլռելի զանգակատունը» նվիրված է մեր պատմության ամենաողբերգական ու լուսավոր դեմքերից մեկի՝ անմահ Կոմիտասի կյանքին, նրա պատմական գործի ու անհատականության գնահատմանը։

Չհեռանալով Կոմիտասի կյանքի գլխավոր դեպքերից, Պ. Սևակը սյուժետային պոեմի դասական կառուցվածքի փոխարեն ընտրել է ժամանակի էությունը բացահայտող փիլիսոփայական-քնարական էպոսի ձևը։

«Անլռելի զանգակատան» վեց համաղանգերը, ամբողջացնելով պոեմի ճարտարապետական կառուցվածքը, լուծում են մի շարք էական հարցեր, ինչպիսին են Կոմիտասի և ժողովրդի կապի, ստեղծագործական խոշոր անհատականության ու ժամանակի հարաբերության, ժողովրդի դառն ճակատագրի ու լուսավոր երազանքների հարցերը։ Պ. Սևակի վերակերտած Կոմիտասի կերպարում մարմնացել են ոչ միայն ժողովրդական երգի ազգային ոգին, այլև հայ ժողովրդի մոլեգնած խիղճը, նրա բարոյական աշխարհի վեհությունը, հաղվագյուտ կենսասիրությունն ու վերածնության անմար երազանքը։

Այս պոեմում, շարունակելով ազգային բանաստեղծական ավանդները՝ Գր. Նարեկացուց մինչև Հ. Թումանյան ու Սիամանթո, Պ. Սևակը, միաժամանակ, բերում է նոր որակ՝ ի մի ձուլելով արտահայտման ժողովրդական և գրական ինտոնացիաները, պաթետիկ դարձվածքներն ու փիլիսոփայական մտորումը, դրամատիկական պատկերն ու հրապարակախոսական դիմումը, խոսքամարտն ու կոնկրետ պատկերավորությունը։

Դրամատիկական պոեմի ժանրով է գրված Վահագն Դավթյանի «Թոնդրակեցիները», որը նույնպես լայն ճանաչում գտավ։ Պոեմի նյութը քաղված է միջնադարյան Հայաստանի սոցիալական շարժումներից։ Միջնադարյան կարգերի ու եկեղեցու դաղափարախոսության դեմ ուղղված Թոնդրակյան ազանդավորական շարժումը Վ. Դավթյանը մեկնաբանում է նախ և առաջ որպես դարերի ընթացքում ժողովրդի մեջ ձևավորված սոցիալական ինքնագիտակցության արտահայտություն։ Թոնդրակյան շարժման գաղափարախոսի ու ղեկավարի՝ Սմբատ Զարեհավանցու հոգեկան աշխարհի ձևավորումը բացահայտված է միջնադարի պատմական կոնկրետ հանգամանքներում։ Զարեհավանցին Դավթյանի պոեմում հանդես է գալիս որպես հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրն ու սոցիալական անհավասարության դեմ բարձրացած բողոքը մարմնացնող պատմական հերոս։ «Թոնդրակեցիներ» պոեմը աչքի է ընկնում դրամատիկական, քնարական և պատմողական արտահայտությունների միասնությամբ, գործողության հարստությամբ, պատմական երանգավորման զգացողությամբ, հերոսների հոգեկան աշխարհի խոր ներթափանցումով։

Ինչպես նախորդ տասնամյակում, այս շրջանում էլ արձակի զարգացման միտումները (թե լավ, թե վատ) ստանալ բնորոշությամբ արտահայտվեցին վեպի ժանրում։ Ռեալիստական գրականության հզոր տեսակը՝ վեպը, առանձնապես զգայուն գտնվեց հասարակական նոր իրադրության և ժամանակի նոր խնդիրների հանդեպ։ Դա արտահայտվեց և՛ նրանում, որ վիպագիրներն իրենց հայացքն ուղղեցին կենսական սուր պրոբլեմների կողմը, և՛ այն բանում, որ նրանք հանդես բերեցին ավանդական վեպի կառուցվածքը նորոգելու ձգտումներ, և՛ այն, որ հետամուտ եղան հոգեբանական խորացումների։

Զարգացման դրական նշանները երևացին թե՛ սովետական հասարակության անցյալ շրջաններին (20—30-ական թվականներ, Հայրենական պատերազմ), թե՛ ընթացիկ իրականությանը նվիրված վեպերում։ Սովետական հասարակության պատմությանն անդրադառնալը հետապնդում է, առաջին հերթին, ժողովրդի անցած ճանապարհի գեղարվեստական նկարագրությունը լրացնելու խնդիր։ Բնական է, որ այդ խնդիրը լուծելու համար ժամանակակից

վեպում պետք է ուժեղացվեին զարգացման հակասությունները ներկայացնող պատկերները, պետք է լայնանար մարդու ճանաչողությունը, վերանայվեին սովետական հասարակության կյանքի մասին ստեղծված հովվերգական պատկերացումները։

Այս հատկանիշները որոշակի ցայտունությամբ արտահայտվեցին Հայրենական պատերազմի անցքերին նվիրված վեպերում (Բ. Հովսեփյան՝ «Սերմնացանները չվերադարձան», Մ. Սարգսյան՝ «Կյանքը կրակի տակ», «Ճակատագրով դատապարտվածները», Խ. Գյուլնազարյան՝ «Ինչ-որ տեղ վերջանում էր հորիզոնը»)։ Տարբերվելով պատերազմը գունազարդող վիպական շարադրություններից, հիշյալ գրողները ավելի կենսական հիմքերի վրա դրեցին պատերազմի նկարագրությունը։ Նրանք իրենց գեղարվեստական խնդիրը համարեցին զինվորական խրամատի ու կենցաղի, պատերազմողի հերոսական վարմունքների ու ողբերգական վերապրումների, տառապանքի ու հոգեկան արիության պատկերումը։

Հայ արձակի լավագույն ավանդները շարունակելու միտումով և նրա թուլությունների դեմ ուղղված բանավեճային դիրքով բնորոշվում են նաև սովետական հասարակության 20—30-ական թվականների կյանքին նվիրված երկերը։ Հոգեբանական ճշմարտությամբ է շնչում խոսքի նշանավոր վարպետի՝ Ստ. Զորյանի «Ամիրյանների ընտանիքը» վեպը, որ նվիրված է 1921 թվականի փետրվարյան խռովությանը։ Ժամանակի պատմական դեպքերը այս վեպում ներկայացվում են մի ընտանիքի անդամների գիտակցության մեջ ունեցած բարդ անդրադարձումներով։ Դեմ-դիմաց կանգնած են հայրը և որդին՝ Հայաստանի ազատագրության ու նրա ապագայի վերաբերյալ իրենց առաջարկած տարբեր ծրագրերով։ Նրանք սոցիալական հակոտնյաներ և անհաշտ թշնամիներ չեն։ Երկուսին էլ հավասարապես մտահոգում է Հայաստանի վերածնության ու ժողովրդի փրկության խնդիրը։ Այսպիսի հավասարեցումը շատերին կարող է անընդունելի թվալ, բայց այն բարդ ժամանակաշրջանը, որին նվիրված է Ստ. Զորյանի վեպը, ուներ երկու հայտարար, որոնցից մեկի կրողը բոլշևիկ Արամն է, մյուսինը՝ մտավորական հայրը։ Նրանք հավասար էին իրենց ձգտումներով, բայց հավասարարժեք չէին պատմական հեռանկարի ըմբռնումներով։ Արամի հետ էր պատմության լավատեսական սկզբունքը. աղքի «գոյության հանելուկի» լուծումը նա կապում էր ազատագրության սոցիալիստական ուղիների հետ։ Եվ, հակառակը, հայրը դեմ էր որդու առաջարկած ծրագրերին։ Ստ. Զորյանը այս վեպում չի աղդարարում ոչ հաղթանակող գաղափարի ճշմարտությունը և ոչ էլ պարտվող գաղափարախոսության ողբերգական ընթացքը։ Այդ ամենը նա զգացնել է տալիս հերոսների հոգեբանության մեջ անդրադարձված պատմական ճշմարտությամբ։

Հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին նվիրված երկերից է նաև Հրաչյա Քոչարի «Նահապետը» վիպակը, որի համար գրողը ետմահու արժանացավ Հանրապետության Պետական մրցանակի։ Հրաչյա Քոչարի վիպական հերոսի կենսագրությունը մի դրվագ է հայ ժողովրդի պատմության արյունոտ էջից՝ ասորիլյան եղեռնից։ Նահապետը ողբերգական հերոս է։ Սիրելի մարդկանց կորուստները և հարազատ օջախի ավերումը, ճակատագրի անգութ հարվածներն ու գաղթի ճանապարհներով շարժվող մարդկանց քարավաններ-

ը նրան դարձրել են յուրահատուկ մենակյաց ու ողբերգական գալարումներով լցրել նրա հոգեկան աշխարհը։ Նա երես է թեքել աստծուց, բախտից, աշխարհից։ Նահապետը թողել է իր հայրենի եզերքը, մեն-մենակ, թափառականի ձեռնափայտով, եկել ու հաստատվել է Արագածի լանջերի գյուղերից մեկում։ Իր կյանքի ողբերգական ընթացքում Նահապետը մի անշիջանելի մտահոգություն է ունեցել՝ ամուր պահել հայրենի օջախի գաղափարը։ Այդ գաղափարն էլ դառնում է այն նախադրյալը, որի միջոցով ողբերգական տառապանքներով անցած մարդը ապրում է հոգեկան վերածնություն։

Գրող Ստ. Զորյան

Մնալով ռեալիստական ճշմարտության սահմաններում, Քոչարը բերում է կերպարի բանահյուսական մակնարանություն, ավանդավեպ է հյուսում իր ժողովրդի անցյալի ու վերածնության մասին։ Քոչարի արտահայտչության որոշ հատկանիշներ ծայր են առնում ժողովրդական ասացողների պարզ ու հյութեղ, արժանահավատ ու անզարդ ոճից։

«Կարապներ» վեպում Լ. Հուրունցը անդրադարձել է անհատի պաշտամունքի հետ կապված դեպքերին, առաջ քաշելով մարդու նկատմամբ վստահության և մարդու քաղաքացիական պարտականության պրոբլեմը, իսկ Շ. Թաթիկյանը «Նրա ճանապարհը» վեպում արծարծել է սովետական հասարակության համար կենսական մի շարք խնդիրներ, դրանց թվում՝ մեր ժամանակի երիտասարդ մարդու բնավորության ձևավորման խնդիրը։

Սովետահայ վեպը անդրադառնում է ոչ միայն արդեն կայունացած նյութին, այլև ժամանակակից կյանքի նոր երևույթներին։ Վիպագիրները նորից դիմում են աշխատանքի մարդկանց դժվարին բնագավառին, իմաստավորելու կյանքի նոր երևույթները, Հայաստանի բանվոր դասակարգի ու գյուղացիության աշխատանքը։ Առաքյալների և կյանքի փրկիչների փոխարեն նոր վեպերն են մտնում բնավորության կենդանի գծեր ունեցող, կյանքի հակասություններին ու դժվարություններին ծանոթ հերոսներ։ Այս իմաստով բնորոշ են Բոգդան Վերդյանի «Ինչպես է գալիս երջանկությունը» և Անժելա Ստեփանյանի «Ամառնամուտին» վեպերը։ Սրանք նույնպես ունեն էական թերություններ, բայց դրականն այն է, որ վիպագիրներն աշխատում են տարբեր հայացքների բախումներում գտնել իրենց դրական հերոսների անհատականությունը։ Ի դեմս Անիի կերպարի, Ա. Ստեփանյանը ժամանակի դրականությունը հարստացրեց սոցիալիստական պայմաններում ձևավորվող մարդկային նոր բնավորությամբ, ցույց տալով հասարակ հայ կնոջ կյանքի ուղին՝ շարքային ինժեներից մինչև խոշոր գործարանի ղեկավարի բարձրությունը։ Գեղարվեստական հետաքրքրություն է ներկայացնում Սերո Խանզադյանի «Քաջարան»

վեպը, որի նյութը սոցիալիստական հայ ազգի առաջատար ուժի՝ բանվոր դասակարգի ձևավորումն է։

Գյուղական իրականությունն արտացոլող վեպերում (Ան. Սեկոյան՝ «Ոսկե վազերի մեջ», Բ. Ուլուբաբյան՝ «Հայրենի հող», «Թարթառ», Քր. Թափալչյան՝ «Ոսկե հովիտ», Նոր-Այր՝ «Անապատի առավոտը» և այլն) հեղինակները խորացրել են մարդու պատկերումը, կոնֆլիկտները կառուցել ավելի լուրջ հակասությունների վրա, գծել ժամանակի ոգին մարմնացնող հերոսների կերպարներ։

Բարոյականության և ընտանեկան կենցաղի հարցեր արծարծող վեպերից առանձնացավ Անահիտ Սահինյանի «Խաչուղիներ» վեպի նոր տարբերակը, որը պատմում է սովետական հասարակության մի երկար ժամանակահատվածի՝ 20-ական թվականներից մինչև Հայրենական պատերազմը, տեղի ունեցած դեպքերի մասին։ Դիմելով այդ ժամանակաշրջանի իրականությանը՝ Սահինյանը իր ուշադրությունը կենտրոնացնում է մարդկանց բարոյա-էթիկական ըմբռնումների ձևավորման վրա։ Ա. Սահինյանը գրեց նաև «Ծարավ» վեպի առաջին գիրքը, որ արծարծում է հայ ժողովրդի ճակատագրի համար վիթխարի կարևորություն ունեցող ոռոգման պրոբլեմը։

Ժողովրդի քաղաքական ու կուլտուրական կյանքի հարուստ էջերի գեղարվեստական վերհանումը դիտակցվեց որպես կարևորագույն խնդիրներից մեկը։ Հայ պատմավեպի «հերոսական ուղղության» կողքին երևան եկան նոր ուղղություններ։

Ստ. Զորյանը գրեց «Հայոց բերդը» (1964) և «Վարազդատ» (1967) վեպերը, որոնք, ինչպես և «Պապ թագավորը», արծարծում են ուժեղ ու միասնական պետականության թեման։ Դիմելով Հայաստանի պատմության ամենադրամատիկական ժամանակաշրջաններից մեկին՝ IV դարի անցքերին, հեղինակն այդ վեպերում արտահայտեց հայրենի երկիրը խաղաղ ու միասնական տեսնելու այն բաղձանքները, որպիսիք եղել են ժողովրդի պատմության բնորոշ առանձնահատկությունը։ Միասնական պետականության դաղափարախոսն է Արշակ Երկրորդը, որ կանգնելով անկախության շարժման գլուխ և կառուցելով Արշակավան բերդաքաղաքը, ցանկանում էր նախարարական կենտրոնախույս տների դիմաց ստեղծել երկրի պաշտպանության ուժեղ հենարան։ «Կստեղծեմ իմ բերդը,—ասում է վիպական հերոսը,—որ լինի ամենքի բերդը, և լինի ավելի հզոր, քան նախարարաց բերդերը։ Դրանով ես կմիաբանեմ նոցա և այդ միաբանությունը կդառնա հայոց բերդ, անխորտակ բերդ. թշնամին անզոր կլինի կործանել նորան»։

Հայ գրականությունը հարստացավ ժողովրդի ռուսական կողմնորոշման՝ XVIII դարի ազատագրական շարժման մասին պատմող վեպերով (Մ. Արաղի՝ «Իսրայել Օրի», Ս. Խանզադյան՝ «Մխիթար սպարապետ», Ս. Այվազյան՝ «Ճակատագիրն հայոց»)։

XVIII դարեմուտը հայ ժողովրդի ազատագրական մաքառումների մեջ նշանավորվեց պատմական նոր հեռանկարներով։ Հասարակական դիտակցության և ժողովրդական լայն խավերի հոգեբանության մեջ խոր արմատներ նետեց օսմանյան դաժան լծից ազատագրվելու և ժողովրդի ճակատագիրը քրիստոնյա Ռուսաստանի հետ կապելու դաղափարը։

Ազգային-ազատագրական գաղափարախոսության նշանավոր գործիչ Իսրայել Օրու դիվանագիտական ապարդյուն հարաբերությունները եվրոպական տերությունների հետ մեկ անգամ ևս համոզեցին, որ «եվրոպական կողմնորոշումը» գործնական ոչ մի հեռանկար չի խոստանում քաղաքական և սոցիալական բռնության մեջ տառապող ժողովրդին։ Իսրայել Օրու և նրա համախոհների մշակած քաղաքական նոր ծրագիրը՝ «ռուսական կողմնորոշումը», ժողովրդի մեջ ամրապնդեց Հյուսիսից սպասվող ազատության գաղափարը։ XVIII դարի պատմական տեղաշարժերը գեղարվեստորեն իմաստավորելու համար Մովսես Արազին դիմեց ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրու կենսագրության վիպական շարադրությանը, իսկ Ս. Խանզադյանն ու Ս. Այվազյանը ստեղծեցին դարաշրջանի քաղաքական ու սոցիալական բարդ հարաբերություններն ընդգրկող լայնապլան պատմավեպեր։

Սյունիքի անկախության համար Դավիթ-Բեկի և նրա զորավարների գլխավորած շարժումը (1723—1729) դարձնելով «Մխիթար սպարապետ» վեպի նյութ, Ս. Խանզադյանը ժողովրդական հերոսապատումին բնորոշ ոճով բացահայտեց այդ շարժման համաժողովրդական բովանդակությունը և ազգային ինքնուրույնության համար ժողովրդի մղած դարավոր պայքարի բացառիկ նշանակությունը։

XVIII դարի ազատագրական շարժման համաժողովրդական բովանդակությունն է արտահայտում նաև Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» վեպը։ Թե՛ «Մխիթար սպարապետ», թե՛ «Ճակատագիրն հայոց» պատմավեպերը այդ ժանրի «հերոսական ուղղության» սկզբունքներով են գրված։ Իրենց նյութին լավ ծանոթ հեղինակները ներկայացրել են հայրենասեր հերոսների մի շարք հաջողված կերպարներ, ինչպիսիք են Դավիթ-Բեկի դինակից Մխիթարը և Իսրայել Օրին։

Պատմավեպի «հերոսական ուղղությունը» հայ գրականության անցյալում ուներ հարուստ ավանդներ։ Պատմավեպերում անհամեմատ քիչ էր արծարծվել հայ ժողովրդի հոգևոր կյանքի և մշակույթի խոշոր ներկայացուցիչների գործունեությունը։ Միակ փորձը Ա. Բակունցի «Խաչատուր Աբովյան»-ն էր. այս անավարտ երկը սկիզբ դրեց պատմավեպի մի նոր ուղղության, որ երկար ժամանակ ընդհատվեց։ Այս ուղղությունը վերստին շարունակվեց վերջին տասնամյակում։

Կյանքի վերջին տարիներին Դ. Դեմիրճյանը գրեց «Մեսրոպ Մաշտոց» վեպը, որից առանձին հատվածներ հրատարակվեցին գրողի մահից հետո։ Հայկական նշանագրերի գյուտը, ասում է Դեմիրճյանը նոր վեպում, ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում նույնպիսի հզոր ուժ էր, ինչպես Ավարայրի ճակատամարտը։ Մեսրոպ Մաշտոցն ու Վարդան Մամիկոնյանը, մեկը՝ գրով, մյուսը՝ սրով, կատարում էին պատմական միևնույն գործը՝ բարձրացնում էին ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը։

Հովհ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» վեպը (1964) նվիրված է հայ ժողովրդի կուլտուր-լուսավորական շարժման կարևոր իրադարձությանը՝ հայկական գրքի տպագրությանը։ Վեպի հիմքում հայ տպագրիչներից մեկի՝ Ոսկան Երևանցու կյանքի ոդիսականն է, նրա անձնվեր ու տոկուն մաքառումը՝

օտար հորիզոններում տպարան ստեղծելու և գրքի միջոցով ժողովրդի հայրենասիրական ոգին անշեջ պահելու համար։

Զ. Դարյանը «Սայաթ-Նովա» վեպում (առաջին հատորը լույս տեսավ 1961 թվականին, երկրորդը՝ 1963 թվականին), հեռանալով մեծ գուսանի կենսագրությունը «վիպականացնելու» սկզբունքից, բացահայտում է XVIII դարի անդրկովկասյան իրականության ու Սայաթ-Նովայի ստեղծագործական աշխարհի առնչությունները։ Հենվելով պատմական ստուգված փաստերի ու պատմականորեն արդարացված կռահումների վրա, Զ. Դարյանը լուծում է գեղարվեստական էական խնդիր։ Վիպասանի լուսաբանությամբ՝ Սայաթ-Նովան իր ժամանակի հոգևոր կյանքի խտացումն է։ Նրա անհատականության մեջ արտահայտվել է անցման շրջանի հոգեբանությունը՝ աշխարհիկ կյանքի և «քրիստոնեական խաչի» հակասությունը։

Հայ պատմավեպում նշանակալից երևույթ հանդիսացավ Վ. Խեչումյանի «Գիրք լինելության»-ը (1966)։ Շարունակելով Դ. Դեմիրճյանի («Գիրք ծպկանց») և իր իսկ ստեղծած պատմական նովելների ոճաբանությունը, Վ. Խեչումյանը ժողովրդից անբաժան թափառական մատենագրի կերպարի միջոցով արտահայտեց միջնադարյան Հայաստանի մարդկային կրքերի ու սոցիալական հոգեբանության բովանդակությունը։ Հայ ժողովուրդը, հաստատում է «Գիրք լինելության»-ը, իր գոյությունը պահպանել է ոչ միայն քաղաքական պայքարով ու հերոսական սխրանքներով, այլև իր ստեղծագործական ուժերի խոյանքով, բնավորության լայնախոհությամբ, զգացմունքների խորությամբ։

Հնադարից և միջնադարից բացի, պատմավեպի նյութ են դառնում նաև պատմության ավելի մոտակա շրջանի անցքերը։ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» (1958) վեպում Ն. Զարյանը ներկայացնում է Հայաստանի վիճակը դաշնակցության տիրապետության օրերին (1918—1920), երբ ժողովուրդը մի կողմից տառապում էր դաշնակցականների ավանտյուրիստական քաղաքականությունից, մյուս կողմից՝ թուրքերի բարբարոսություններից։ Ն. Զարյանը ցույց է տալիս պատմության մեջ հեռանկար չունեցող դաշնակցության քաղաքական սնանկությունը և ազատագրության սոցիալիստական ուղիների կենսունակությունը։

Ժամանակակից արձակում արդյունավետ զարգանում են նաև պատմվածքն ու ակնարկը, հուշագրությունն ու ճանապարհորդական նոթագրությունը։ Առանձնապես զգալի է պատմվածքի ժանրի աշխուժացումը։ Դասական հայ գրականության մեջ, ինչպես և սովետահայ գրականության պատմության նախորդ ժամանակաշրջաններում կատարելության հասած պատմվածքի ժանրի ավանդները մի որոշ ժամանակ ընդհատվեցին։ Պատմվածքը դիտվեց որպես գրականության «ուղեկից»։ Այս վերաբերմունքը «հիմնավորվում էր» տեսական այն մոլորությամբ, թե պատմվածքը չի կարող իր «նեղ» սահմաններում տեղավորել հասարակական զարգացման «վիթխարի» մասշտաբները, թե կարճ ձևը գրողին զրկում է դարաշրջանի կենսական խնդիրների արծարծման հնարավորությունից։ Այդ սխալի հետևանքը եղավ այն, որ աղպարեղ եկան անբովանդակ, արհեստականորեն ձգձգված, ճարպակալած «վեպեր», իսկ գրական քարտեզի վրա պատմվածքի տեղը մնաց թափուր։

Վերադնահատվեց պատմվածքի գեղարվեստական հնարավորությունների հարցը, և այդ կենսունակ ժանրը գրավեց իր արժանի տեղը գրականության ընթացքի մեջ։ Դիմելով գեղարվեստական արտահայտման բազմաղան եղանակների, արձակի ճանաչված վարպետներն ու երիտասարդ գրողներն ստեղծեցին ժամանակակից կյանքը ներկայացնող շատ պատմվածքներ։

Հայրենական պատերազմի հերոսական դրվագներ, աքսորի դժվարին տարիներ, հայրենի բնության պատկերներ, բարոյախոսական խնդիրներ, սեր և ընտանիք, գյուղ և քաղաք,—սրանք են հիմնականում այն թեմաները, որոնցից գրողները նյութ են քաղում պատմվածքի համար։

Գեղարվեստական նկատելի հետաքրքրություն են ներկայացնում Գ. Մահարու «Սև մարդը», Ռ. Արամյանի «Չթամբած ձիեր» հավաքածուն, Ս. Խանդաղյանի «Կորած արահետներ», Մ. Արմենի «Պատվիրեցին հանձնել ձեզ», Ս. Այվազյանի «Փրթոսի ընկուզենին», Խ. Գյուլնազարյանի «Փշալարից այն կողմը», Ա. Ավագյանի «Կարոտ», «Թախիծ», Վ. Արամյանի «Հպարտ սեր», Նոր-Այրի «Մահից ուժեղը», Մ. Սարգսյանի, Բ. Սեյրանյանի և մյուսների պատմվածքները։

Գեղարվեստական ակնարկի ժանրը թեև չունեցավ այնպիսի առաջընթաց, ինչպիսին պատմվածքը, բայց և այնպես այս բնագավառում ևս ձեռք բերվեցին որոշ հաջողություններ։ Հրապարակ եկան Գ. Էմինի «Ցոթ երգ Հայաստանի մասին» հրապարակախոսական ասքը, Զ. Դարյանի «Քասախ» գիրքը, Լ. Հուրունցի «Ղարաբաղ, հայրենի իմ եզերք» պատումը, Մ. Հակոբյանի «Անհայտ կորած մարդիկ» գիրքը, Ա. Արզումանյանի ակնարկները հայ գիտնականների մասին և այլն։

Նոթագրության ժանրում ընդգծվեցին Ն. Զարյանի «Ծաղկող բալենիների երկրում», Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» գրքերը, Հր. Քոչարի, Ս. Խանդաղյանի, Վ. Անանյանի, Ան. Սահինյանի ճանապարհորդական տպավորությունները։

Թեև հուշագրությունը մեծ քանակ բերեց, սակայն մնայուն արժեքներ դարձան Գ. Մահարու «Զարենց-նամեն» և Ստ. Զորյանի «Հուշերը»։

Դժվար է ցույց տալ մեկ ուրիշ ժամանակաշրջան սովետահայ գրականության անցած ճանապարհից, որ այնպես հարուստ լինի շնորհալի արձակագիրների ու բանաստեղծների նոր անուններով, ինչպես ներկա ժամանակաշրջանը։ Ճիշտ է, գրական «նորերը» երբեմն որդեգրում են գեղարվեստական անկայուն սկզբունքներ, երբեմն «ժամանակակից ոճի» անունից ժխտում են գեղարվեստական ստուգված ավանդությունները կամ հանուն ձևի զոհում բովանդակությունը, բայց նրանցից շատերի գրվածքներում ակներև է ինքնատիպությունը։

Արտահայտման ժամանակակից լեզվի հաստատման ընթացքը համեմատաբար դանդաղ է պոեզիայում։ Մի շարք շնորհալի բանաստեղծների կողքին (Վ. Կարենց, Լ. Դուրյան, Ա. Սահակյան, Ն. Միքայելյան), հատկապես ընդգծվեցին Ռազմիկ Դավոյանի քնարերգության մեջ խմորվող նոր գծերը՝ զուգորդական մտածողության գունագեղությունը, երևույթների փիլիսոփայական խորացումը։ Առաջին նմանողական ոտանավորներից Ռ. Դավոյանը աստի-

ճանաչար գնում է դեպի իր գեղարվեստական աշխարհի հաստատումը, որի վկայությունն է, մասնավորապես, նրա «Ռեքվիեմ» պոեմը։

Ավելի նկատելի են երիտասարդ արձակագիրների հաջողությունները։ Նրանցից ոմանք (Պ. Զեյթունցյան, Ռ. Հովսեփյան, Գ. Արշակյան, Մ. Մնացականյան, Ջ. Խալափյան, Հովհ. Մելքոնյան, Կ. Տոնոյան, Մ. Մանուկյան, Վ. Պետրոսյան) ասպարեզ են եկել իրենց ինքնատիպ ձեռագրով ու ստեղծագործական նախասիրություններով։

«Մենք ենք, մեր սարերը» վիպակով, «Օգոստոս», «Ալխո», «Մեսրոպը» և մյուս պատմվածքներով լայն ճանաչման արժանացավ Հրանտ Մաթևոսյանը։

Իրականության հակասությունները բացահայտելու և կերպարների հոգեբանությունը խորացնելու միտումով ընդգծվեց թատերագրության զարգացումը։ Նախադիր սխեմաների և բարեհաջող լուծվող կոնֆլիկտների, ներքին դրամատիզմից զրկված ու անսխալական «գործող անձանց» փոխարեն դրամաներում երևացին կենդանի ապրումներով, ներքին մտահոգություններով բնութագրվող կերպարներ։ Սա վերաբերում է ինչպես պատմա-հեղափոխական թեմայով գրված պիեսներին, այնպես էլ ժամանակակից կյանքի խնդիրներին նվիրված դրամաներին։

Հայ թատերագրության մեջ ավանդական դարձած պատմա-հեղափոխական թեմայում Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» և Ա. Արաքսմանյանի «Վարդեր և արյուն» դրամաները բերեցին ժողովրդի սոցիալական ազատագրության գաղափարը հերոսների հոգեկան աշխարհում կատարվող փոփոխություններով բացահայտելու տենդենց։ Դրանով է բացատրվում այդ պիեսների տևական կյանքը Հայաստանի թատրոններում։

Մարդու բարոյական ու քաղաքացիական նկարագրի արտահայտման խնդիրը բավարար լուծում ստացավ այն դրամաներում, որոնց նյութը քաղված էր ժամանակակից կյանքից (Գ. Տեր-Գրիգորյան՝ «Վերջին մեխակներ», «Գարնան անձրև», Գ. Յաղջյան՝ «Գարնանային շունչ», Գ. Բորյան՝ «Կամուրջի վրա», Ա. Արաքսմանյան՝ «Վաթսուն տարի և երեք ժամ»)։

Դրամայի հետ միասին, որ վերջին տասնամյակի թատերագրության տիրապետող ժանրն է, բեմական կյանք ստացան նաև մի շարք կատակերգություններ։

Դրամատիկական պամֆլետի արժեքավոր նմուշ է Գ. Տեր-Գրիգորյանի «Մեռնող ֆլորան», ուր դատապարտվում են սովետական հասարակության մեջ տեղ գտած մոլախոտերը՝ քաղաքական կարիերիստները, զրպարտիչները, շողոքորթներն ու կյանքից ետ մնացած աղանդավորները։ Կատակերգական դրությունները և զվարթ հումորով ողողված գործեր են Ժ. Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» և Ա. Պապայանի «Աշխարհն, այո՛, շուռ է եկել» պիեսները։ Ա. Պապայանը հայտնի է նաև իր վոդևիլներով, որոնցից մի քանիսը մրցանակներ են շահել կարճ պիեսների համամիութենական մրցույթներում։

Մեծ աշխատանք կատարվեց բազմադարյան հայ գրականության արժեքների գնահատման ուղղությամբ։ Դրա պերճախոս վկայություններն են նշանավոր գրողների հոբելյանական տարելիցների համաժողովրդական նշումները, գրքի տպագրության աննախընթաց ծավալը, գրական փոխհարաբերությունները

ների խորացումը, հայ գրողների երկերի թարգմանությունները օտար լեզուներով, համաշխարհային գրականության հուշարձանների թարգմանությունը հայերեն, գրականագիտական հետազոտությունների մեծ քանակը և այլն։

Լայնորեն նշվեցին հայ նոր գրականության սկզբնավորող Խ. Աբովյանի ծննդյան 150-ամյակը, հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի ծննդյան 125-ամյակը, ազգային քնարերգության վարպետ Ավ. Իսահակյանի ծննդյան 80-ամյակը, հեղափոխության բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակը։

1962 թվականին Սովետական Միությունում և սփյուռքում մեծ շուքով տոնվեց հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։ Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ 1963 թվականի աշնանը աշխարհի շատ երկրներում նշվեց հանճարեղ դուսան և բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։ Այդ հոբելյանները վերածվեցին կուլտուրական մեծ տոների։

1965 թվականի աշնանը Մոսկվայում կայացավ հայ գրականության ու արվեստի երկրորդ տասնօրյակը։ Գրական տասնօրյակներ ու շաբաթներ անցկացվեցին Էստոնիայում, Ուզբեկստանում, Լենինգրադում, Ցարոսլավլում և այլուր։ Ուժեղացան գրական կապերը ոչ միայն սովետական հանրապետությունների, այլև Չեխոսլովակիայի, Բուլղարիայի և Լեհաստանի հետ։

Թարգմանչական ավանդներով հարուստ Հայաստանում լայն ծավալ ստացավ համաշխարհային գրականության լավագույն հուշարձանների թարգմանությունը։ Պուշկինի (5 հատոր), Լերմոնտովի (3 հատոր), Մ. Գորկու (10 հատոր), Շեքսպիրի (3 հատոր), Բալզակի (10 հատոր), Ջեկ Լոնդոնի (12 հատոր), Հոմերոսի, Դանթեի, Բոկկաչիոյի, Գյոթեի, Շիլլերի, Սերվանտեսի, Հայնեի, Հյուգոյի, Դրայզերի, Ռ. Ռոլանի, Գոգոլի, Դոստոևսկու, Լ. Տոլստոյի, Եսենինի, Մայակովսկու, ինչպես և ժամանակակից արտասահմանյան, ռուս և եղբայրական մյուս ժողովուրդների գրողների բազմաթիվ գրքեր դարձան հայ ընթերցողի սեփականությունը։

Աննախընթաց չափերի հասավ հայ գրականության հրատարակությունը։ «Հայաստան» հրատարակչությունը մեծ տպաքանակով լույս ընծայեց դասական հեղինակների՝ Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Մուրացանի, Բաֆֆու, Ալ. Շիրվանզադեի, Նար-Դոսի, Ռ. Պատկանյանի, Գր. Զոհրապի, Ե. Օտյանի, Վ. Փափազյանի, Ավ. Իսահակյանի երկերի բազմահատորյակները։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը իրագործեց մի շարք դասականների գիտական հրատարակությունը։ Ավարտվեց Խ. Աբովյանի (10 հատոր), Մ. Նալբանդյանի (4 հատոր), Գ. Սունդուկյանի (4 հատոր), Հովհ. Թումանյանի (6 հատոր), Հովհ. Հովհաննիսյանի (4 հատոր), Հ. Հակոբյանի (4 հատոր), Ե. Չարենցի (6 հատոր) երկերի հրատարակությունը։ Շարունակվում էր Հ. Պարոնյանի (10 հատոր) և Ռ. Պատկանյանի (8 հատոր) երկերի տպագրությունը։ Այս հրատարակությունների ընթացքում ձևավորվեց հայագիտության ճյուղերից մեկը՝ գիտական տեքստաբանությունը։

Վերացվեցին այն սահմանափակումները, որ գոյություն ունեին արևմտահայ և սփյուռքահայ գրողների հանդեպ։ Առաջին անգամ մայր հայրենիքում հրատարակվեցին Սիամանթոյի, Երուխանի, Ռ. Զարգարյանի, Թլկատինցու,

Շ. Շահնուրի, Կ. Զարյանի, Վ. Շուշանյանի, Ա. Ծառուկյանի, Գ. Ադդարյանի, Գ. Սևանի, Վ. Մավյանի, Ա. Դարյանի և ուրիշ հեղինակների գործերը։

Սկիզբ դրվեց հայ սովետական գրականության աչքի ընկնող ներկայացուցիչների (Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ա. Բակունց, Գ. Սարյան, Ն. Զարյան, Գ. Մահարի, Հր. Քոչար, Սիրաս, Մ. Արմեն, Գ. Սևունց, Վ. Անանյան, Ս. Խանզադյան) երկերի ժողովածուների հրատարակությանը։

Գրական ժառանգության՝ սկզբնաղբյուրների, ձեռագրերի, արխիվային նյութերի հրատարակումներին զուգընթաց, գրականագիտությունը լայն ճակատով աշխատանքներ սկսեց բազմադարյան հայ գրականության զարգացման ուղիները հետազոտելու համար։ Մեծ թափ ստացավ ինչպես նոր և նորագույն շրջանների, այնպես էլ հին և միջնադարյան գրականության ու ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը։

Տևական ընդմիջումից հետո բանասերները վերստին հնարավորություն ստացան բազմակողմանիորեն զբաղվելու հին և միջնադարյան գրականության կարոտ խնդիրներով։ Պատմիչների (Եղիշե, Կիրակոս Գանձակեցի), միջնադարյան քնարերգուների (Հովհ. Երզնկացի, Կ. Երզնկացի, Գր. Աղթամարցի, Հովհ. Թլկուրանցի, Ն. Հովնաթան և այլն) քննական տեքստերից բացի, հրատարակվեցին մի շարք մենագրություններ։ Գիտական արժեքավոր աշխատություններ են Մ. Մկրյանի «Գրիգոր Նարեկացի» և Գր. Հակոբյանի «Ներսես Շնորհալի» գրքերը, որոնցում խորը վերլուծության է ենթարկվում միջնադարյան գրականության հանճարեղ դեմքերի ստեղծագործությունը։ Բանասերները եռանդով զբաղվում էին միջնադարյան արձակի ժանրերի ուսումնասիրությամբ, մի բնագավառ, որը դուրս էր մնացել ավանդական բանասիրության տեսադաշտից։

Հենվելով հայագիտության ավանդներին, բանագիտությունը ծավալում էր ժողովրդական բանահյուսության անմեռ գանձերը հավաքելու, հրատարակելու և հետազոտելու գործը։ Լույս տեսան «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի վեց հատորը, Ա. Ղանալանյանի «Հայկական առածանի», «Հայկական ավանդապատում», Ս. Հարությունյանի «Հայկական ժողովրդական հանելուկներ» մեծարժեք հավաքածուները՝ համապատասխան գիտական քննություններով։ «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության բնագավառում նոր խոսք է ակադեմիկոս Հ. Օրբելու «Հայ հերոսական էպոսը» գիրքը։ Բացահայտելով հայ ազգային էպոսի ժողովրդական ու համամարդկային բովանդակությունը, Հ. Օրբելու գիրքը նոր ուղիներ է բացում բանագիտության այդ ճյուղի խորացման համար։

Ազատագրվելով XIX—XX դարերի հայ նշանավոր գրողներին դասակարգային նեղ կաղապարներում պարփակելու գռեհիկ սոցիոլոգիական հայացքներից և նրանց պատմական թուլությունները «մեղսագործություն» դիտող մտայնությունից, գրականությունը նախընթացը չունեցող գործ կատարեց նոր շրջանի գեղարվեստական կյանքը հետազոտելու ուղղությամբ։ Հրատարակվեցին մի շարք արժեքավոր մենագրություններ հայ գրականության խոշոր դեմքերի մասին (Հր. Թամրազյան՝ «Շիրվանզադե», «Սիամանթո» Վ. Թերզիբաշյան՝ «Պետրոս Դուրյան», Վ. Պարտիզունի՝ «Վահան Տերյան», Գ. Աբով՝ «Գաբրիել Սունդուկյան», Էդ. Ջրբաշյան՝ «Թումանյանի պոեմները», Լ. Հախ-

վերջյան՝ «Թումանյանի աշխարհը», Պ. Հակոբյան՝ «Խաչատուր Աբովյանի կենսագրությունը», Դ. Հովհաննիսյան՝ «Ավ. Իսահակյանի արձակը», Գ. Ստեփանյան՝ «Հակոբ Պարոնյան», Ս. Սարինյան՝ «Ռաֆֆի» և այլն), որոնց մեջ ժամանակակից չափանիշներով գնահատվեց գրականության պատմության մեջ նշանակալի դեր խաղացած խոսքի վարպետների ժառանգությունը։

XIX դարի 50—60-ական թվականների հասարակական-քաղաքական մտքի պատմության, ինչպես նաև ժամանակաշրջանի գրական կյանքի ու հարաբերությունների վերլուծությունն է ներկայացնում Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» կապիտալ աշխատությունը։ Հեղինակը այս մենագրությամբ հաստատում է հայ ժողովրդի մասնակցությունը համաշխարհային քաղաքակրթությանը։

Գրական ուղղությունների պատմությունը և տեսությունը հետազոտելու տարբերում ներդրում է Ս. Սարինյանի «Հայկական ռոմանտիզմը» գիրքը, ուր տրված է հայ գրականության մեջ զարգացման տեսական ընթացքը ունեցած այդ ուղղության գաղափարական հիմքերի քննությունը։

Այս շրջանում հայ նոր գրականության ուսումնասիրությունը հարստացավ նոր ուղղություններով։ Մասնավորապես խորացավ հայ-ռուսական և հայ-եվրոպական գրական հարաբերությունների պատմության հետազոտումը։ Լույս տեսան Ս. Արեշյանի «Հայ գրականությունը և ցարական գրաքննությունը» ինքնատիպ աշխատությունը, Ռ. Հովհաննիսյանի, Գ. Հովնանի, Ս. Դանիելյանի, Ղ. Այվազյանի, Ա. Բաբայանի, Լ. Մկրտչյանի գրքերը։ Հայ իրականության մեջ մարքսիստական գրականագիտության սկզբունքների վերհանմանն են նվիրված Արտ. Ոսկերչյանի հետազոտությունները։

Հասունացան նաև նոր գրականության պատմության ստեղծման նախադրյալները։ Այդ գործը իրականացնում էր Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։ «Հայ նոր գրականության պատմության» հինգ հատորյակի արդեն տպագրված երեք հատորները գիտական շրջանառության մեջ են մտցնում գրական-պատմական նոր նյութեր և XIX դարի հասարակական ու գեղարվեստական մտքի զարգացմանը վերաբերող նոր, ավանդականից տարբերվող մոտեցումներ։

Գիտական հետազոտության առարկա է դարձել նաև սովետահայ գրականության անցած կեսդարյա ճանապարհը՝ իր բարդ ուղիներով ու օրինաչափություններով։ Հ. Հակոբյանին, Ե. Չարենցին, Ա. Բակունցին, Ստ. Զորյանին, Դ. Դեմիրճյանին, Զ. Եսայանին, Ն. Զարյանին, Գ. Սարյանին և մյուս գրողներին նվիրված մենագրություններից, սովետահայ գրականության առանձին պրոբլեմներին ու ժանրերին նվիրված աշխատություններից բացի, լույս տեսավ «Սովետահայ գրականության պատմության» երկհատորյակ։ 1966 թվականին «Նաուկա» հրատարակչությունը (Մոսկվա) ռուսերեն հրատարակեց «Սովետահայ գրականության պատմությունը» ստվար հատորը։

Գրականագիտության աճման ցուցանիշներից մեկն էլ տեսության հարցերի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքն է։ Հրատարակվեցին Հ. Մամիկոնյանի «Մարդու կերպարը գրականության մեջ», Ար. Գրիգորյանի «Գեղարվեստական ոճի պրոբլեմները» գրքերը, Էդ. Ջրբաշյանի «Գրականության տեսություն» բուհական ձեռնարկը։

Հայաստանում մեծ դոր է արվում միջազգային գրականության ուսումնասիրման բնագավառում։ Հայտնի են Հ. Համբարձումյանի հոմերագիտական հետազոտությունները, Ռ. Զարյանի գրքերը՝ Շեքսպիրի ստեղծագործությունների մասին։ Հայաստանը դարձավ իր մեծ բարեկամի՝ Վ. Բրյուսովի ժառանգության գիտական ուսումնասիրման կենտրոն։ Պարբերաբար կազմակերպվող «Բրյուսովյան ընթերցումներին» ակտիվ մասնակցություն են ցուցաբերում սովետական մյուս հանրապետությունների ու արտասահմանյան գիտնականներ։

Ընդարձակվեցին սովետահայ գրականության տարածման միջազգային շառավիղները։ Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի, Արազու, Ստ. Զորյանի, Վ. Թոթովենցի, Ն. Զարյանի, Հ. Շիրազի, Վ. Անանյանի, Գ. Սևունցի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Գ. Սարյանի և ուրիշ հայ գրողների երկերը թարգմանվեցին աշխարհի բազմաթիվ լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, լեհերեն, չեխերեն, հունգարերեն, չինարեն, արաբերեն և այլն։ Թարգմանվեցին նաև դասական գրականության և ժողովրդական բանահյուսության նշանավոր երկեր։ Անգլերեն և ֆրանսերեն լեզուներով՝ Լ. Սյուրմելյանի և Ֆր. Ֆեյդիի թարգմանությամբ, հրատարակվեց «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի համահավաք բնագիրը։

Արդի ժամանակաշրջանում սովետահայ գրականությունը դուրս եկավ զարգացման նոր բնագծեր։ Գրականության մեջ սկսվեց ստեղծագործական որոնումների մի շարժում, որը տանում է դեպի սոցիալիստական ռեալիզմի հնարավորությունների ավելի լայն ըմբռնում, իրականության խոր արտացոլում և գրական վարպետության բարձրացում։

Այս արմատական խնդիրների վրա առանձնահատուկ ուշադրություն դարձվեց Հայաստանի գրողների հինգերորդ (1966, նոյեմբեր) և սովետական գրողների չորրորդ (1967, մայիս) համագումարներում։ Գրողների համամիութենական համագումարին հղած իր ուղերձում ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն գրականության կարևորագույն խնդիրը համարեց 50-ամյա ճանապարհ անցած սովետական ժողովրդի պատմական կյանքի նոր գծերի արտացոլումը՝ սոցիալիստական ռեալիզմի սկզբունքներով։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԱՐՎԵՍՏ

1. ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԿԻՆՈՆ

1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի պատմական հաղթանակը և խաղաղ ստեղծագործական աշխատանքին անցնելը նոր խնդիրներ դրեցին արվեստի բնագավառում։

Հաղթանակած մարդը իրեն ուժեղ է զգում ներքին կյանքի թերություններին սրտաբաց մոտենալու և հաղթահարելու համար։ Սակայն ասպարեզ եկած անկոնֆլիկտային դրամատուրգիան միաժամանակ արգելակեց ժամանակակից իրականության լիարժեք արտացոլումը։ «Հրաշալի դանձ», «Խիզախում», «Անհանգիստ մարդիկ» և այլ պիեսներ ոչինչ չունեին հանդիսատեսին տալու։ Եվ թատրոնը անկաշկանդ գործելու հնարավորությունը փնտրեց դասական երկերի բեմադրություններում։

Այդ տարիներին առանձին ուժգնությամբ հնչեց ռուս դասական դրամատուրգիան։ Ամենից ցայտուն ներկայացումները Ա. Սուխովո-Կոբիլինի «Կրեչինսկու հարսանիքն» էր՝ Լենինականի և Ա. Օստրովսկու «Անօժիտը»՝ Սունդուկյանի անվան թատրոններում, որոնք բարձր գնահատականի արժանացան 1946 թվականին կայացած ռուս դասական դրամատուրգիայի համամիութենական ստուգատեսում։ Հետաքրքրությամբ դիտվեցին Դ. Ֆոնվիզինի «Տհասը» (Պատանի հանդիսատեսի թատրոնում), Մ. Գորկու «Մերուկը» և Ա. Օստրովսկու «Անտառը» (Ստանիսլավսկու անվան թատրոնում), Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորները» (Կիրովականի Հ. Աբելյանի անվան թատրոնում) և «Գայլերն ու ոչխարները» (Ամո Խարազյանի անվան շրջիկ թատրոնում)։

Դասական թատերգություններից հետպատերազմյան ժամանակաշրջանում առանձին ուժով հնչեցին նաև Գ. Սունդուկյանի «Քանդած օջախը», Մ. Գորկու «Թշնամիները»՝ Լենինականի թատրոնում։ Ռեժիսյոր Մ. Աբարյանի, գլխավոր դերակատարներ Ա. Փաշայանի, Ե. Դուրյան-Արմենյանի, Ա. Աղնաուրյանի, Ժ. Թովմասյանի, Արծ. Հարությունյանի ստեղծագործական համառ որոնումների շնորհիվ այդ հանրահայտ երկերը ստացան սոցիալական վառ արտահայտչականություն և ժամանակակից շունչ։

Այս ամենի կողքին պատմա-հայրենասիրական թեման շարունակում էր գերակշռել հայ բեմի խաղացանկում։ «Արա Գեղեցիկ»-ը դրա լավագույն արտահայտությունն էր (Լենինականի թատրոն)։

«Դրամատիկական թատրոնների խաղացանկի և այն բարելավելու միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը (1946) խթան հանդիսացավ վճռական շրջադարձ կատարելու դեպի ժամանակակից թեմատիկան։ Այդ տեսակետից գեղարվեստական ու դաստիարակչական խոշոր նշանակություն ունեցավ Ա. Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա» վեպի բեմականացումը։ Այն մեծ հաջողությամբ բեմադրեցին Հայաստանի չորս թատրոններ։ Ընթացիկ խաղացանկից Վ. Վաղարշյանի «Վանքաձոր», Գ. Յաղջյանի «Զոյա», Գ. Բորյանի «Բարձունքներում», Բ. Ջիրսկովի «Հաղթողները» ինչպես և այլ ներկայացումներ հանդիսականին պատմում էին հայրենիքի պաշտպանության հերոսամարտերի մասին, գովերգում թիկունքի մարդկանց անձնվեր աշխատանքը։

Հայ դերասանական արվեստը բարձր դրսևորում գտավ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրված Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ», Մ. Գորկու «Արևի զավակները», Ա. Չեխովի «Բալենու այգին» ներկայացումներում։ Դրանց գեղարվեստական մեծ հնչեղությունը էապես պայմանավորված էր նախ ավագ սերնդի վարպետների՝ Վ. Փափազյանի, Հր. Ներսիսյանի, Օ. Գուլազյանի, Ա. Ավետիսյանի, ռեժիսյոր Ա. Գուլակյանի և ապա՝ նրանց հաջորդող ու երիտասարդ սերնդի, այդ թվում Դ. Մալյանի, Ա. Արազյանի, Մ. Սիմոնյանի, Մ. Մուրադյանի դերասանական ակներև նվաճումներով։

Իր գոյության առաջին տասնամյակում նկատելի վերելք ապրեց երաժշտական կոմեդիայի թատրոնը։ Մի շարք դասական օպերետների կողքին այստեղ բեմ հանվեցին «Մորգանի խնամին», «Աղբյուրի մոտ», «Հին հիվանդություն», «Շողոքորթը», «Եվ այլն կամ նոր Դիոգենես» և ուրիշ գործեր։ Այստեղ զգալի հաջողություն ունեցան Թ. Սարյանը, Հ. և Ի. Դանդաս ամուսինները, Հ. Բաղալյանը, Կ. Խաչվանքյանը, Է. Համբարձումյանը և ուրիշներ։ Երաժշտական կոմեդիայի թատրոնը դարձավ ինքնուրույն դրամատուրգիայի ստեղծման ու պրոպագանդման մի նոր օջախ, որի համար երաժշտական երկեր էին գրում նաև ժամանակակից կոմպոզիտորները։ Հետագայում այդ թատրոնը համալրվեց մի խումբ երիտասարդ, շնորհալի դերասաններով (Մ. Համամջյան, Ս. Գրիգորյան, Ս. Քալանթարյան, Մ. Կարագյոզյան)։

ՍՄԿԿ XX համագումարից հետո մեծ աշխուժություն նկատվեց նաև հայ թատրոնի կյանքում։ Լենինյան նորմաների վերականգնումը երկրի հասարակական կյանքում նպաստեց նաև դրամատուրգիայի ու թատրոնի զարգացմանը։ Ստեղծվեց քննադատական առողջ մթնոլորտ, ընդլայնվեց կապը եղբայրական ժողովուրդների արվեստների հետ։ Թատրոնն ավելի մոտ կանգնեց ժողովրդի կյանքին, դարձավ աշխատավորական լայն խավերի ձգտումների ու երազանքների կենդանի արձագանքը։ Դրա վառ ապացույցը 1956 թվականին Մոսկվայում կայացած հայկական արվեստի և գրականության երկրորդ տասնօրյակն էր։ Օպերային թատրոնի հետ միասին, տասնօրյակին մասնակցեցին երեք դրամատիկական թատրոն։

Մայրաքաղաքի խստապահանջ հանդիսականը և կենտրոնական մամուլը գոհունակությամբ ընդունեցին Սունդուկյանի անվան թատրոնի «Ժայռ», «Նամուս», «Պաղտասար աղբար», «Էլի մեկ զոհ» ներկայացումները, որոնք հայ

դասական դրամատուրգիայի թարմ մեկնաբանության օրինակելի նմուշներ էին, ինչպես նաև «Եգոր Բուլըչովը և ուրիշները», «Օթելլոն»՝ երկուսն էլ նոր բեմադրությամբ։

Մի շարք դերակատարումներ ոչ միայն հայ թատրոնի, այլև ազգային մշակույթի կյանքում խոշոր իրադարձություն հանդիսացան։ Դա Վ. Փափազյանի Օթելլոն էր, Վ. Վաղարշյանի Բուլըչովը, Հր. Ներսիսյանի Պաղտասար աղբարը, Օ. Գուլազյանի Սոլոմեն, Գ. Ջանիբեկյանի Գրիգոր աղան։ «Նամուս» ներկայացման մեջ լիաթոք հնչեց երիտասարդ դերասաններ Մ. Սիմոնյանի, Մ. Մկրտչյանի, Խ. Աբրահամյանի, Ս. Սարգսյանի, Հ. Հովհաննիսյանի և մյուսների ձայնը։

Լենինականի Ա. Մռավյանի անվան թատրոնը, որի խաղացանկում ժամանակակից դրամատուրգիան միշտ պատվավոր տեղ է գրավել, Մոսկվայում ցուցադրեց Վ. Վաղարշյանի «Օղակում» և Ն. Զարյանի «Փորձադաշտ» պիեսները։ Այդ ներկայացումներում իրենց բեմական ակնարև ձիրքը դրսևորեցին թատրոնի լավագույն դերասաններ Ա. Արզումանյանը, Ժ. Էլոյանը, Հ. Ղաղարյանը և ուրիշներ։



ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Հ. Ներսիսյան

Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնը հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը ամրապնդող կարևոր օջախներից մեկն է։ Տասնօրյակի ժամանակ ուշադրության կենտրոնում էին այդ թատրոնի ցուցադրած Շիրվանզադեի «Պատվի համար», Մ. Գորկու «Քաղքենիներ», Ն. Պոգոդինի «Կրեմլյան կուրանտներ», Մ. Օվչիննիկովի «Շրջադարձ» դրամաների բեմադրությունները։ Թատրոնի հիմնադիր ուժերին՝ ռեժիսյոր Լ. Քալանթարին, դերասաններ Զ. Գուլևիչին, Վ. Դոբրովոլսկուն, Ն. Կեմարսկայային փոխարինելու էին եկել նույնքան կարող ստեղծագործողներ՝ Ա. Սուդբինինը, Գ. Գենը, Ն. Տեր-Սեմյոնովը, Յու. Վանովսկին, Ն. Եգորովան, Ա. Ջիգարխանյանը և ուրիշներ։

Տասնօրյակի կապակցությամբ թատերական շատ աշխատողներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։ Վահրամ Փափազյանին և Հրաչյա Ներսիսյանին շնորհվեց Սովետական Միության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում։ Հետագայում նույն կոչման արժանացան նաև Ավետ Ավետիսյանը և Վարդան Աճեմյանը։

Երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության կարևոր ո-

չախներից մեկը՝ Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնը հասավ գեղարվեստական բարձր մակարդակի։ Թատրոնում երկար ժամանակ գործել և գործում են թատերական արվեստի աչքի ընկնող այնպիսի ուժեր, ինչպիսիք են Տ. Շամիրխանյանը, Ն. Մանուչարյանը, Պ. Սանթրոսյանը, Հր. Ղափլանյանը, Է. Վարդանյանը, Մ. Թամրազյանը, Ա. Ղազարյանը, Ն. Դալլաքյանը և ուրիշներ։ Իր լավագույն աշխատանքների ցուցադրմամբ հաճախ մասնակցելով մանկա-պատանեկան թատրոնների համամիութենական ստուգատեսներին, թատրոնը ձեռք է բերել լայն ճանաչում։ «Ոսկի քաղաք», «Հորձանուտ», «Երաժշտախումբը», «Հանուն հեղափոխության», «Գիշերային հրաշք» և այլ ներկայացումներ պատիվ կարող են բերել յուրաքանչյուր մանկա-պատանեկան թատրոնի։

Հայ բեմարվեստի զարգացմանը զուգահեռ աճեց և ժամանակակից հայ դրամատուրգիան։ Գ. Տեր-Գրիգորյանի «Վերջին մեխակներ», Ա. Արաքսմանյանի «Քո սրտի կրակը», Գ. Յաղջյանի «Գիշերային հրաշք», Գ. Բորյանի «Նույն հարկի տակ» պիեսները թարգմանվեցին ռուսերեն և բեմադրվեցին Մոսկվայի թատրոններում։

Եռպատերազմյան ժամանակաշրջանում ընդարձակվեցին սովետահայ թատրոնի մշակութային կապերը։ Վ. Փափազյանը, Հր. Ներսիսյանը, Դ. Մալյանը մեկնեցին Ռումինիա և Բուլղարիա, հանդես եկան տեղի հայաբնակ քաղաքներում։ Հայ բեմի խաղացանկը հարստացավ ուկրաինական, բելոռուսական, ուզբեկական, էստոնական, ադրբեջանական դրամատուրգիայի նշանավոր երկերով։ Դրանցից ուշագրավ են Ի. Ֆրանկոյի «Գողացված երջանկությունը», Յա. Գալանի «Սերը լուսաբացին», Վ. Մինկոյի «Առանց անունները տալու», Ա. Մակայոնոկի «Կոնդրատի կինը ուղեծրում», Ա. Կոխարի «Մեռաքսե սյուզանե», Ա. Յակոբսոնի «Գիշերվա և ցերեկվա սահմանում», Ջ. Ջաբարլիի «1905 թվականին» և այլ դրամաների բեմադրություններ։ Գեղարվեստական-թատերական ինստիտուտը բացեց դարձինական հատուկ ստուդիա, ուր տարիներ շարունակ պրոֆեսոր Վ. Վարդանյանի մասնագիտական ղեկավարությամբ կրթություն էին ստանում Հյուսիսային Կովկասի ժողովուրդների զավակները։ Անդրկովկասյան թատերական ընկերությունների նախաձեռնությամբ կազմակերպվեցին թատերական հարցերին նվիրված հատուկ կոնֆերանսներ։ Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնն իր լավագույն ներկայացումները 1960 թվականին ցուցադրեց Մոսկվայի Կրեմլյան թատրոնում, այնուհետև՝ Բաքվում և Թբիլիսիում։ Երաժշտական կոմեդիայի, Լենինականի, Կիրովականի, Արտաշատի թատրոնները ներկայացումներով հանդես եկան Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Սուխումիում, Ստեփանակերտում, Կիրովաբադում և այլուր։ Սկսեցին հաճախ Հայաստան ժամանել Մոսկվայի լավագույն թատրոնները։ Երևանում ներկայացումներով հանդես եկան նաև Փարիզի «Ատելյե» և Մաղլեն Ռոբինսոնի թատերախմբերը։

Առաջին անգամ իր պատմության մեջ 1963 թվականին Երևան ժամանեց Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը։ Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Դ. Բերիաշվիլու «Ուտիները Քուչ այինն», Լոպե դե Վեգայի «Հնարամիտ տարիուհին» և այլ ներկայացումներ հանդիսացան թատրոնի ստեղծագործական աճի վառ ապացույցը։ Թատրոնն ունի

դերասանների և փորձված ռեժիսյորների մի ստվար խումբ, որն ընդունակ է լուծելու ստեղծագործական բարդ խնդիրներ։

Վերջին տարիների հայ թատերական կյանքը բնորոշվում է թեմատիկայով բազմազան և ձևով արդիական մի շարք ներկայացումներով։ Ամերիկյան նշանավոր արձակագիր-դրամատուրգ Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» դրամայի, Ե. Չարենցի տեքստով կազմված «Դեպի ապագան» բեմականացման, Ա. Միլլերի «Սալեմի վհուկները» պիեսի բեմադրությունները Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, Ա. Արբուզովի «Իրկուտսկյան պատմությունը»՝ Լենինականի թատրոնում, Ե. Չարենցի «Կապկաղ թամաշան» և Բ. Բրեխտի «Երեք գրոշանոց օպերա»-ն՝ երաժշտական կոմեդիայի թատրոնում, Մ. Գորկու «Բաղքենիները», Յ. Օտչենաշեկի «Ռոմեոն, Ջուլիետան և խավարը»՝ Պատանի հանդիսատեսի թատրոնում, Կոգոուտի «Այդպիսի սերն» ու Լոպե դե Վեգայի «Սևիլյայի աստղը»՝ Կիրովականի թատրոնում—այս ամենը ստեղծագործական առաջընթացի հաստատուն ապացույցներ են։ Թատերական գործիչների ավագ սերնդի կողքին աճեցին շնորհալի նոր ուժեր՝ ռեժիսորներ Հր. Ղափլանյանը, Զ. Տատինցյանը, Ս. Աքմաքչյանը, Գ. Մկրտչյանը, Մ. Մարինոսյանը, դերասաններ Բ. Ներսիսյանը, Մ. Սիմոնյանը, Վ. Վարդերեսյանը, Մ. Մարտիրոսյանը, Լ. Հովհաննիսյանը և ուրիշներ։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Վ. Փափազյան

Ետպատերազմյան շրջանում զգալի զարգացում ապրեց նաև հայ թատերագրական միտքը։ Հրապարակ եկան բազմաթիվ ուշագրավ աշխատություններ, որոնք նվիրված են թատրոնի պատմության և տեսության հարցերին։ Պետք է հատկապես նշել Գ. Գոյանի «Հայ թատրոնի 2.000 տարին», Գ. Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», Ռ. Ջորյանի «Ադամյան» և «Սիրանույշ», Ս. Մելիքսեթյանի «Հովհաննես Աբելյան» մեծածավալ ուսումնասիրությունները, ինչպես նաև Լ. Քալանթարի «Արվեստի մայրուղիներում» ժողովածուն, Վ. Փափազյանի «Հետադարձ հայացք»-ը և «Իմ Օթելլոն»։ Լույս տեսան բազմաթիվ գրքեր ու ալբոմներ՝ նվիրված սովետահայ թատրոնի պատմության այս կամ այն ժամանակաշրջանին, տասնյակ մենագրություններ՝ ժամանակակից հայ դերասանների մասին։

1966 թվականին Երևանում շահագործման հանձնվեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նորակառույց շենքը, որն իր ճարտարապետական կառուցվածքով և տեխնիկական սարքավորմամբ Սովետական Միության լավագույն

թատերական շենքերից է։ Նույն թվականի վերջերին Գ. Սունդուկյանի անվան թատրոնը մեկ ամսով հյուրախաղերի մեկնեց Մերձավոր Արևելք՝ Լիբանան և Սիրիա։ Բեյրութում, Հալեպում և Դամասկոսում ցուցադրած «Արա Գեղեցիկ», «Իմ սիրտը լեռներում է», «Նամուս», «Ժայռ» և «Պաղտասար աղբար» ներկայացումները մեծ խանդավառությամբ ընդունվեցին տեղի հայրենակցական հայության շրջաններում։

Սովետական Հայաստանի թատերական արվեստը ապրում էր նոր զարգացում։ Պրոֆեսիոնալ թատրոնների կողքին արդյունաբերական և ուսումնական մի շարք հաստատություններին կից, շրջանային կենտրոններում և գյուղական վայրերում գործում էին բազմաթիվ ժողովրդական թատրոններ, որոնք քաղաքի և գյուղի ազգաբնակչությանը մատչելի էին դարձնում ոչ միայն ինքնուրույն դրամատուրգիայի երկերը, այլև նրանց մերձեցնում դասական ստեղծագործություններին։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի
Գ. Դասպարյան

Որոշ առաջընթաց տեղի ունեցավ կինոյի բնագավառում։ Պատմական և ժամանակակից փաստերի գեղարվեստական յուրացման տեսակետից հայ կինեմատոգրաֆիայի համար «Երկիր Հայրենին» բախտորոշ նշանակություն ունեցավ, իսկ ռազմաճակատային նկարահանումների ընթացքում ձեռք բերված փորձը նպաստեց հայկական կինոարվեստի առաջընթացին։ Թերևս այդ էր պատճառը, որ հետպատերազմյան առաջին տարիների Հայկինոյի արտադրության ամենաբեղմնավոր բնագավառը կապված է փաստագրական և վավերագրական նկարահանումների հետ։ Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները արձագանք գտան գլխավորապես վավերագրական նկարների մեջ։ Հայրենադարձության թեման արտացոլվեց «Վերադարձ», «Օվկիանոսի մյուս ափից», հանրապետության էներգետիկայի ընդլայնման մեծ աշխատանքները՝ «Էներգետիկա», «Սևանի ջրերը», արդյունաբերության, շինարարության և մշակույթի հարցերը՝ «Սովետական Հայաստան» և ուրիշ ֆիլմերում։

Չնայած այդ հաջողություններին, սակայն շրջանում գեղարվեստական կինեմատոգրաֆիան անհրաժեշտ զարգացում չապրեց։ Նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ թույլ էր կապը գրականության հետ, քիչ ուշա-

դրություն էր դարձվում կինոյի համար նոր կադրերի ստեղծման վրա, անբավարար էր տեխնիկական բազան և այլն։

Հայկինոյի ստեղծագործական աշխատանքներն առանձնապես աշխուժացան 50-ական թվականների կեսերից, ՍՄԿԿ XX համագումարից հետո։ Ընդլայնվեց թեմատիկան։ Ժամանակակից իրականությունը և անցյալի ակնառու պատմական դեմքերը գեղարվեստական առավել հստակ արտացոլում գտան, իսկ հայ դասական գրողների երկերը շարունակում էին մնալ ռեժիսյորների և կինոսցենարիստների հետաքրքրությունների ոլորտում։ Մեկը մյուսի ետևից էկրան բարձրացան «Պատվի համար», «Արևածագից առաջ», «Տժվժիկ», «Մոսյո Ժակը և ուրիշները» ֆիլմերը, որոնք հետաքրքրական էին ամենից առաջ դերասանական կատարումներով։ Նոր լույսի տակ դիտվեցին պատմական անցյալն ու հեղափոխական իրադարձությունները։ «Հյուսիսային ծիածան» (ռեժիսյոր՝ Ա. Հայ-Արտյան) ֆիլմը նվիրված է հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը, իսկ «Անձամբ ճանաչում եմ» և «Հատուկ առաջադրանք» (ռեժիսյորներ՝ Է. Քարամյան և Ս. Կեվորկով) կինոնկարները պատմում են հայ մեծանուն հեղափոխական Կամոյի լեգենդար կյանքի մասին։ Ժամանակակից թեմայով և տարբեր ժանրերով ստեղծված գործերի մեջ բարձր գնահատականի արժանացան նաև «Ծնված են ապրելու համար» և «Առաջին սիրո երգը» նկարները։ Այս ֆիլմերն էլ առաջ քաշեցին կինոռեժիսյորների, որոնցից համեմատաբար արգասավոր գործունեություն ծավալեցին Գ. Մելիք-Ավագյանը, Լ. Վաղարշյանը։ Կինոարվեստի բնագավառ մուտք գործեց երիտասարդ շնորհալի դերասանների նոր սերունդ (Խ. Աբրահամյան, Մ. Մկրտչյան և ուրիշներ)։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Վ. Վաղարշյան

Ժամանակակից մարդու հոգեբանությունը, նրա բարոյական կերպարի մարմնավորումը իր վսեմ արտահայտությունը գտավ «Բարև, ես եմ» ֆիլմում (ռեժիսյոր՝ Ֆ. Դովլաթյան)։ Ա. Ջիգարխանյանը, դերասաններ Ռ. Բիկովը, Տ. Տերեխովան ստեղծել են դրամատիզմով հագեցված, լիրիկական, հուզիչ կերպարներ։ Դա նոր խոսք էր Հայկինոյի (այժմ՝ Հ. Բեկ-Նազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա) ետպատերազմյան շրջանի պատմության մեջ և պատահական չէ, որ համամիութենական էկրանում հաջողություն գտնելուց

հետո, 1966 թվականին այն ցուցադրվեց նաև Կաննի միջազգային կինոֆեստիվալում։

Պետք է նշել, որ Հայկինոյի գործունեության մեջ տեղ են գտել նաև արհեստական բախումների, գրական մերկ սխեմաների վրա կառուցված նկարներ, ինչպիսիք են՝ «Թռիչք անդունդի վրայով», «Դժվար անցում» և այլն։ Հայաստանի կինոգործիչներին դեռևս կաշկանդում է ժանրային սահմանափակությունը, ստեղծագործական համարձակության պակասը, թույլ կապը գրական և թատերական ուժերի հետ։

Վերջին տասնամյակում նկատելի զարգացում ապրեցին նաև վավերագրական, գեղարվեստական կինո-ակնարկի ժանրերը։ Հանրապետության շինարարության, արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակութային կյանքի նոր, առավել բարձր թափը, հայրենի բնության ու պատմական հուշարձանների հետ միասին, լայն արտացոլում գտան ժապավենի վրա։ Ստեղծվեցին նաև բազմաթիվ գիտահանրամատչելի գունավոր նկարներ։ «Ցոթ երգ Հայաստանի մասին», «Մարտիրոս Սարյան», «Լեռնային պարեկ», «Հարազատ երգեր», «Հայաստանի ճարտարապետությունը» և այլ ֆիլմեր բարձրացրին ազգային կինոարվեստի հեղինակությունը։

Ազգային կինոարվեստը գնալով ավելի լայն ժողովրդականություն է վայելում։ 1958 թվականին Երևանում հիմնադրվեց Հայաստանի սովետական կինեմատոգրաֆիստների միությունը, որը պրոպագանդիստական աշխատանք է տանում աշխատավորության լայն շրջաններում։ Օրըստօրե աճում է կինոցանցը։ Այժմ Հայաստանում կինո-սարքավորումների և կինո-թատրոնների թիվը մոտենում է հազարի։

2. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Ետպատերազմյան տարիներին իսկական բարգավաճում է ապրում ազգային կատարողական արվեստը։ Վերաստեղծվում, գեղարվեստական բարձր մակարդակի են հասնում սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Մ. Մալունցյան), պետական երգչախումբը (գեղարվեստական ղեկավարներ՝ Ա. Տեր-Հովհաննիսյան, Հ. Չեքիջյան)։ Կազմակերպվում են կատարողական նոր կոլեկտիվներ՝ ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ երկրորդ նվագախումբը, ֆիլհարմոնիայի կամերային նվագախումբը, ջութակահարների անսամբլը և այլն։

Ստեղծագործական վերելք են ապրում ժողովրդական արվեստը պրոպագանդելու կոչված կոլեկտիվները։ Վերակառուցվեց ռադիոյի և հեռուստատեսության ժողովրդական գործիքների նվագախմբի (ղեկավար՝ Ա. Մերանգուլյան, դիրիժոր՝ Ս. Զրբաշյան) աշխատանքը։ Հիմք ընդունվեց կատարման բազմաձայն սկզբունքը, ուշագրավ փորձեր կատարվեցին ժողովրդական երաժշտության և դասական երաժշտական արվեստի ստեղծագործությունները գործիքավորելու ուղղությամբ։ Վերակառուցման շնորհիվ նվագախմբի գեղարվեստական ընդհանուր մակարդակը զգալիորեն բարձրացավ։ Նվագախմբի հետ ելույթ էին ունենում Ա. Տեր-Աբրահամյանը, Ա. Գյուլզադյանը,

Օ. Համբարձումյանը, Հ. Բաղալյանը, որոնք նվաճեցին ունկնդիրների սերն ու համակրանքը։ Ավելի ընդլայնվեց հանրապետության վաստակավոր կոլեկտիվի՝ հայկական երգի-պարի անսամբլի ժողովրդականությունը։ Այդ ժամանակվա ընթացքում անսամբլը պատրաստեց մի շարք ուշագրավ ծրագրեր, որոնց մեջ երգային արվեստի հին նմուշների կողքին լայնորեն ներկայացված է նաև սովետական ժամանակաշրջանի ժողովրդական ստեղծագործությունը։ Մեծ ծառայությունների համար անսամբլի գեղարվեստական ղեկավար Թաթուլ Ալթունյանին շնորհվեց Պետական մրցանակ և ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում։

Նոպատերազմյան տարիներին կազմակերպված կատարողական նոր կոլեկտիվներից աչքի ընկավ Հայաստանի պարի անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Է. Մանուկյան), որը հասել էր գեղարվեստական բարձր կատարելության։

Միջազգային մրցանակաբաշխություններում փայլուն հաղթանակ նվաճեցին մի շարք երիտասարդ կատարողներ։ Միջազգային երեք մրցանակաբաշխությունների դափնեկիր դարձավ դաշնակահար Յուրի Հայրապետյանը։ Հասունությամբ և վարպետությամբ աչքի է ընկնում ջութակահար Ժ. Տեր-Մերկերյանի արվեստը, որը Փարիզում շահեց Մարգարիտ Լոնգի և Ժակ Տիբոյի անվան մրցանակը։ Հիանալի սկսեց իր ուղին պատանի ջութակահար Ռ. Ահարոնյանը, որը 18 տարեկան հասակում արժանացավ Չայկովսկու անվան միջազգային մրցանակաբաշխության դափնեկրի կոչման։ Համերգային երգիչներից իր ուրույն տաղանդով աչքի ընկավ Ա. Այդինյանը։

Ծաղկում ապրեց Զարուհի Դոլուխանյանի՝ արդի ժամանակաշրջանի մեծագույն երգչուհիներից մեկի, տաղանդը։ Նա վոկալ արվեստի սովետական վարպետներից առաջինն արժանացավ Լենինյան մրցանակի։ Բացառիկ է նրա ձայնը՝ հազվադեպ պատահող կոլորատուրային մեցցո-սոպրանոն։ Դոլուխանյանի կատարմանը հատկապես բնորոշ են ձայնին տիրապետելու անթերի կատարելությունը, պարզությունը, մեկնության վսեմությունն ու բանաստեղծականությունը։ Նրա արվեստը, իրավամբ, համաշխարհային ճանաչում է նվաճել։

Մի շարք առաջնակարգ բեմադրություններով հարստացավ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի խաղացանկը։ Հատուկ տեղ են գրավում ազգային օպերային և բալետային նոր ներկայացումները։ Թատրոնում աճեցին հիանալի դերասանների նոր կադրեր։ Հանրապետության սահմաններից շատ հեռու է տարածվել Սովետական Միության ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանի՝ օպերային խաղացանկի լիրիկական կոլորատուրային դերերի անզուգական կատարողի հռչակը։ Գոհար Գասպարյանի երգը ուշագրավ է զարմանալիորեն հստակ և գեղեցիկ ձայնով, տարբեր ոճի ու բնույթի ստեղծագործությունների խոհուն ու նուրբ մեկնությամբ։

Իր ստեղծագործական ճանապարհին բարձր նվաճումների էր հասել վոկալ և բեմական վառ տաղանդով օժտված, Սովետական Միության ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սաղանդարյանը։ Օպերային բեմում մի շարք անմոռանալի կերպարներ են կերտել մեծահռչակ երգիչներ, ՍՍՀՄ ժողովրդա-

կան արտիստներ Պ. Լիսիցյանը և Ն. Հովհաննիսյանը, հանրապետության ժողովրդական դերասան Շարա Տալյանը և ուրիշներ։

Հայաստանի երաժշտական կյանքում հուժիչ իրադարձություն էր 1956 թվականի հունիսին Մոսկվայում կայացած հայ արվեստի և գրականության տասնօրյակը, որին մասնակցում էին նաև Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնը, բազմաթիվ երաժշտական կոլեկտիվներ ու առանձին կատարողներ։ Օպերային թատրոնը հանդես եկավ «Անուշ», «Արշակ Երկրորդ», «Պիկովայա դամա», «Դավիթ-Բեկ» օպերաների և «Սևան» բալետի բեմադրություններով։ Այդ ներկայացումները, ինչպես և հանրապետության երաժշտական առաջատար կոլեկտիվների համերգները ջերմորեն ընդունվեցին Մոսկվայի խստապահանջ հասարակայնության կողմից և արժանացան մամուլի բարձր գնահատականին։ «Մենք ուրախ ենք,—գրել է սովետական բալետի ականավոր մենակատար Գալինա Ուլանովան,—որ «Սևան» բալետը այդ ժանրի ասպարեզում նոր թեմա բեմականացնելու անդուլ որոնումների վկայությունն է... Ներկայացման գործող անձինք մեր ժամանակակիցներն են՝ իրենց զգացմունքներով, այսօրվա բերկրանքով ու տխրություններով»։ «Արշակ Երկրորդ»-ը թատերական բարձր կուլտուրայի ներկայացում է»,—նշել է կոմպոզիտոր Վ. Էնկենն։ Մեծ թատրոնի գլխավոր ռեժիսյոր Բ. Պոկրովսկու կարծիքով կոմպոզիտոր Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ» օպերան գրված է «խորաթափանց մեծ վարպետությամբ։ Օպերայում զարմանալիորեն միաձուլվել են ձևերի հերոսական մոնումենտալությունը և մարդկային իրական ջերմ զգացմունքները»։

Հայկական երաժշտական արվեստի զարգացմանը մատուցած ակնառու ծառայությունների համար երաժշտական գործիչների մի մեծ խումբ պարգևատրվեց շքանշաններով ու մեդալներով։ ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչման արժանացան դիրիժոր Մ. Թավրիզյանը, երգչուհիներ Տ. Սազանդարյանը և Գ. Գասպարյանը։

Ստալինյան շրջանում հանրապետությունում հետագա զարգացում ստացավ երաժշտական կրթությունը։ 1966 թվականին Հայաստանում գործում էր ավելի քան 40 երաժշտական դպրոց և 4 երաժշտական ուսումնարան. սովորողների թիվը 11 հազարից ավելի էր։

Երաժշտական կադրեր պատրաստելու գործում մեծ է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դերը։ 1950—1960-ական թվականներին կոնսերվատորիան՝ հանրապետության հնագույն ուսումնական հաստատություններից մեկը, զգալիորեն ընդարձակեց իր գործունեությունը և այժմ կադրեր է պատրաստում երաժշտական բոլոր հիմնական մասնագիտությունների գծով։ Բարձրացավ ուսման որակը, հստակորեն ձևավորվեց կոնսերվատորիայի ադդային դեմքը։

Ամբողջությամբ գնահատելով հայկական երաժշտական կյանքի զարգացման տենդենցները, հարկ է առանձնապես շեշտել երաժշտական արվեստի ժողովրդականացման, սովետական եղբայրական հանրապետությունների և աշխարհի տարբեր երկրների հետ երաժշտական կապերի ըստ ամենայնի ամրապնդման ու ուժեղացման ձգտումը։ Այդ կապակցությամբ կարելի է նշել երգի ժողովրդական տոների պարբերաբար կազմակերպումը Հայաստանի

տարբեր քաղաքներում (Կիրովական, Լենինական, Ստեփանավան, Երևան), ժողովրդական համալսարանների, ժողովրդական կոնսերվատորիայի, ժողովրդական ֆիլհարմոնիայի ստեղծումը, երաժշտական ինքնագործունեության ստուգատեսները, որոնց մասնակցում են բազմահազար կատարողներ։

Նշանակալից իրադարձություն էին ռուսական երաժշտության տասնօրյակը (1966), էստոնական գրականության և արվեստի շաբաթը (1964), «Անդրբրկովկասյան երաժշտական գարուն» փառատոնը (1958 և 1965)։ Վերջինը կայացավ եղբայրական երեք հանրապետությունների մայրաքաղաքներում՝ Բաքվում, Երևանում և Թբիլիսիում։ Փառատոնին ներկա էին նաև միութենական այլ հանրապետություններից և ժողովրդական դեմոկրատիայի երկրներից ժամանած բազմաթիվ հյուրեր։ Փառատոնի մասնակիցները և հյուրերը հնարավորություն ունեցան ծանոթանալու Անդրբրկովկասի կոմպոզիտորների նոր ստեղծագործություններին, երաժշտական լավագույն կոլեկտիվների կատարողական արվեստին։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Ա. Խաչատրյան

Նկատելիորեն ուժեղացել են նաև հայ երաժիշտների միջազգային կապերը։ Սոցիալիստական երկրների մշակութային ամրապընդվող կապերի վառ ցույցի վերածվեցին Բուլղարիայի, Չեխոսլովակիայի և Հունգարիայի արվեստների 1965, 1966 և 1968 թվականներին Հայաստանում կայացած տասնօրյակները, ինչպես և հայ արվեստի գործիչների պատասխան ելույթները այդ երկրներում։ Հիացմունքով ընդունվեցին հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի և պարի անսամբլի ելույթները Եվրոպայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում։ Աշխարհի շատ երկրների ունկնդիրների վրա մեծ տպավորություն թողեց Կոմիտասի անվան կվարտետի, երգիչներ Զ. Դոլուխանյանի, Պ. Լիսիցյանի, Գ. Գասպարյանի, Տ. Սազանդարյանի և բազում այլ տաղանդավոր հայ երաժիշտների ոգեշունչ արվեստը։

Եռապատերազմյան տարիներին հայ կոմպոզիտորների ստեղծագործությունը անցել է մեծ, բեղմնավոր զարգացման ուղի, թեև այդ ուղին զերծ չէր նաև որոշ դժվարություններից ու հակասություններից։

Հայ, ինչպես և սովետական ողջ երաժշտության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1948 թվականի որոշումը

վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին։ Որոշումն իրավացիորեն ընդգծում էր սովետական երաժշտությունը ռեալիզմի և ժողովրդականության ուղիով զարգացնելու անհրաժեշտությունը, վերստին հիշեցնում է դասական ժառանգության մնայուն արժեքի մասին։ Այդուհանդերձ, որոշումը զերծ չէր առանձին սխալ, անարդարացի գնահատականներից ու դրույթներից, որոնք հետագայում նշվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի մայիսի 28-ի՝ «Մեծ բարեկամություն», «Բոգդան Խմելնիցկի» և «Ամբողջ սրտով» օպերաների գնահատման գործում թույլ տված սխալներն ուղղելու մասին» որոշման մեջ։ Նույնպիսի սխալներ թույլ տրվեցին նաև Հայաստանում։ Մի շարք կոմպոզիտորներ (Հ. Ստեփանյան, Տ. Տեր-Մարտիրոսյան և ուրիշներ) Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1948 թվականի մայիսի 25-ի որոշմամբ անարդարացիորեն մեղադրվեցին ֆորմալիզմի մեջ։

ՌՍՖՍՀ և ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Զ. Դոլուխանյան

Մեծ ուշադրություն նվիրվեց երաժշտական թատրոնին, արդիական թեմայով ազգային օպերաներ և բալետներ ստեղծելու գործին։ Այդ ուղղությամբ կատարված մի շարք փորձերից հետո (Հ. Ստեփանյանի «Հերոսուհին», Ա. Տեր-Ղևոնդյանի «Արևի ցոլքերում», Յու. Գևորգյանի «Խարույկ» օպերաները, Է. Խաղագործյանի «Սոնա» բալետը) հասարակայնության ճանաչումը գտան։ Թատրոնի խաղացանկում մնացին Դ. Եղիազարյանի «Սևան» բալետը և Ա. Բաբաևի «Արծվաբերդ» օպերան։ Այս երկու ստեղծագործությունները նվիրված են մեր ժամանակակիցներին, պատմում են կոլտնտեսային գյուղի աշխատավորների մասին։ «Սևան» բալետի ժողովրդական տեսարաններում ամբողջ հմայքով հառնում են Հայաստանի ազգային պարերը—կանանց՝ նազելի ու հեզաճկուն, տղամարդկանց՝ սրընթաց ու կրակոտ։ Օգտագործելով ժողովրդական մեղեդիները, դրանց սիմֆոնիկ մշակումով հեղինակը հասել է մեծ արտահայտչականության և գունագեղության։

«Արծվաբերդ» օպերայի գործողությունը ծավալվում է աշխույժ ու դինամիկ, հանդիսատեսին փոխադրելով Հայաստանում կոլտնտեսային շինարարության սկզբնական ժամանակաշրջանը։ Երաժշտությունը ճշմարտացիորեն վերարտադրում է սուր պայքարով հագեցված իրադարձությունների դրամա-

տիպը և նոր, յուսավոր կյանք կառուցելու իրենց իրավունքը պաշտպանող հերոսների ներքնաշխարհի թնարական ներշնչանքը։ Ա. Բաբաևի մեղեդիները հիացնում են իրենց բնականությամբ, հոգեկան մեծ ջերմությամբ։ «Արծվաբերդ» օպերան, որը բեմադրվել է նաև սովետական այլ քաղաքների թատրոններում, հայկական օպերայի բեմում արդիականությունը մարմնավորելու դգալի առաջընթաց քայլ էր։ Բոցաշունչ հայրենասերի, հայ նոր գրականության հիմնադրի կերպարը անձնավորելու ուշագրավ փորձ կատարեց Գ. Արմենյանը «Խաչատուր Աբովյան» օպերայով։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ
Մ. Թավրիզյան

Այդ տարիների գեղարվեստական խոշորագույն նվաճումն է Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը (1954), որն արժանացավ Լենինյան մրցանակի։ Դիմելով հին Հռոմի ստրուկների ապըստամբության պատմությանը, մեծ կոմպոզիտորը կերտել է արդիականությանը համահնչյուն գործ։ Բալետի հերոսին՝ Սպարտակին, Ա. Խաչատրյանը ներկայացրել է որպես ազատագրական պայքարի խորհրդանիշ, պայքար, որ մեր օրերում մղում են ճնշված ժողովուրդները գաղութատիրության դեմ, հանուն իրենց ազատության և ազգային անկախության։ «Սպարտակ» բալետը մոնումենտալ, պատմա-հերոսական բնույթի, դրամատիկ վառ հակադրություններով հագեցված ստեղծագործություն է։ Խաչատրյանի երաժշտությունը շլացնում է զգացմունքների բոցավառությամբ և գեղեցկությամբ, բազմերանգ գույների հոյակապ շռայլությամբ։ Բալետի դրամատուրգիայում տպավորիչ է հնչեղության հարաճուն թափը, որն ընդգծում է բեմի վրա ծավալվող իրադարձությունների դրամատիկ սրությունը և լարվածությունը։

Ազգային բալետի զարգացման գործում զգալի է կոմպոզիտոր Է. Հովհաննիսյանի ավանդը։ Նրա գրչին են պատկանում «Մարմար» և «Հավերժական կուռք» հեքիաթային բնույթի բալետները (վերջինս արժանացավ հանրապետական մրցանակի), ինչպես նաև «Երկնագույն նոկտյուրն» մեկ գործողությամբ բալետը, որը պատմում է իր կոչումը որոնող ժամանակակից նկարչի մասին։ Է. Հովհաննիսյանի ստեղծագործությանը բնորոշ են հոգեբանական խորությունը, երաժշտական կերպարների արտահայտչականությունը և գեղարվեստական նուրբ ճաշակը։

60-ական թվականների վերջին օպերային թատրոնի խաղացանկը հարստացավ նոր բեմական գործերով. Ա. Տերտերյանի «Կրակե օղակ», Գ. Ար-

մենյանի «Խորտակում», Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերաներով և Է. Արիստակեսյանի «Պրոմեթևս» (բեմադրվել է նաև Լենինականում), Դ. Հախինյանի «Երեք նվվելներ», Կ. Օրբելյանի «Անմահություն» բալետներով։

Որոշ ժամանակ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ առաջատար տեղ էր գրավում վոկալ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտությունը։ Հատկապես շատ էին կանտատային ժանրի գործերը (Հ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի, Վ. Տալյանի, Գ. Չերոտարյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Արմենյանի և այլոց կանտատները)։ Դրանցից աչքի է ընկնում Ա. Հարությունյանի «Հայրենիքի մասին» կանտատը, որն արժանացել է Պետական առաջին մրցանակի։ «Հայրենիքի մասին» կանտատը սովետական երաժշտության պայծառ, կենսահաստատ ստեղծագործություններից է։ Գրավիչ անմիջականությամբ հեղինակը բացահայտում է սովետական մարդկանց բոցաշունչ սերը սոցիալիստական հայրենիքի նկատմամբ, արտացոլում մեծ սխրանքներով ու հերոսական գործերով լի մեր ժամանակի հոտն, լավատեսական ոգին։ Կանտատի երաժշտության արժեքը նրա ազգային վառ որոշակիությունն է։

Վոկալ-սիմֆոնիկ երաժշտության զարգացումը շատ բանով հարստացրեց ազգային երաժշտական մշակույթը, նպաստեց արդիական հրատապ թեմատիկայի ակտիվ հաստատմանը։

Սակայն լուրջ, բովանդակալից ստեղծագործությունների կողքին այդ տարիներին ստեղծվեցին նաև ոչ սակավ գորշ, դժգույն կանտատներ։ Որոշ հանդամանքներում կյանքի կոչված արտաքին տոնականությունը այդ գործերում զուգակցվում էր ստեղծագործական չեզոքության, դեղարվեստական խնդիրների լուծմանը միատիպ մոտեցում ցուցաբերելու հետ։

Երգարվեստի բնագավառում առավել վառ ստեղծագործական դեմք է կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը։ Մեծ տարածում գտած նրա բազմաթիվ երգերը օրգանապես կապված են հայ ժողովրդական երաժշտության հետ, միևնույն ժամանակ լի են արդիականության աշխույժ զգացումով։ Հուզաթաթավ անկեղծությամբ հեղինակն արտացոլել է նոր ժամանակը, նոր կյանքը, բացահայտել սովետական մարդու հոգեկան հարստությունն ու կենսասիրությունը։ Այդպիսիք են նրա «Արարատյան հովտի երգերը», «Խաղաղության երգը», «Ես իմ անուշ Հայաստանի...» և շատ ուրիշ երգեր։

50-ական թվականների երկրորդ կեսից լայն տարածում ստացավ էստրադային երգը։ Այդ ժանրում հաջողությամբ ստեղծագործում են կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանը, Կ. Օրբելյանը, Է. Բաղդասարյանը։ Նրանց լավագույն երգերում ազգայինը հմտորեն զուգակցվում է ժամանակակից ջազի բնորոշ և արժեքավոր տարրերի հետ։

1950—1960-ական թվականներին քնարական երգեր և ռոմանսներ են գրել Կ. Զաքարյանը, Հ. Ստեփանյանը, Ա. Դոլուխանյանը, Վ. Կոտոյանը, Ա. Աճեմյանը, Խ. Ավետիսյանը, Գ. Զրթչյանը, Տ. Մանսուրյանը և ուրիշներ։

Հայ երաժշտական արվեստի զարգացումը բնորոշվում է նաև կամերային-գործիքային և սիմֆոնիկ երաժշտության զարգացմամբ։ Ավագ և միջին սերընդի կոմպոզիտորների հետ միասին, այդ ժանրերում եռանդուն աշխատանք է կատարում նաև ստեղծագործող շնորհալի երիտասարդությունը։

Ռոմանտիկ շնչով, զգացմունքների անմիջականությամբ հմայում է Առնո Բաբաջանյանի երաժշտությունը։ Նվագախմբի ու դաշնամուրի համար գրած նրա «Հերոսական բալլադը» հուժիչ մի պոեմ է սովետական երիտասարդության, նրա խիզախումների, սխրանքների, գեղեցիկ գործերի ու խոհերի մասին։ Իր բնույթով դրամատիկ տրիոն զմայլում է երաժշտության անկեղծությամբ ու մարդկայնությամբ։ Նորարարական ձգտումներով են աչքի ընկնում «Ջութակի սոնատը» և դաշնամուրի համար գրված «Պատկերները»։ Տաղանդավոր կոմպոզիտորի ստեղծագործությունները լայն ճանաչում են գտել նաև մեր հայրենիքի սահմաններից դուրս։

Հայ կամերային երաժշտության ակնառու ստեղծագործություններից են Է. Միրզոյանի կվարտետը, Է. Հովհաննիսյանի կվինտետը, Մ. Փիրումյանի, Կ. Օրբելյանի կվարտետները։ Այդ ասպարեզում հայ կոմպոզիտորների ստեղծագործական նվաճումներն այնքան նշանակալի են, որ դրանց շնորհիվ հայ կամերային երաժշտությունը դարձավ ետպատերազմյան ժամանակաշրջանի սովետական երաժշտական արվեստի ամենաուշագրավ և վառ երևույթներից մեկը։ Այդ մասին են վկայում նաև 1957 թվականին Մոսկվայում կայացած համամիութենական մրցանակաբաշխությունում հայ երիտասարդ կոմպոզիտորների խոշոր հաջողությունները։ Կամերային լավագույն երկերի համար նրանց շնորհվեց ինը մրցանակից չորսը (Է. Հովհաննիսյան, Կ. Օրբելյան, Ա. Փիրումյան, Ջ. Տեր-Թադևոսյան)։

Նախորդ տարիների համեմատությամբ հայ կոմպոզիտորներն ավելի մեծ ուշադրություն են նվիրում սիմֆոնիկ ժանրի՝ դասական և սովետական երաժշտության առաջատար ժանրերից մեկի, զարգացմանը։ Այդ ժանրն ունի իրականությունը խոր և ընդհանրացված արտացոլելու գրեթե անսահման հնարավորություններ։ Եվ այն փաստը, որ հայ կոմպոզիտորներից շատերը դիմեցին այդ ժանրին, անտարակույս, 1950—1960-ական թվականների հայ երաժշտական արվեստի հարստության և հասունության, սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործական մեծ հնարավորությունների վկայությունն է։ Գլխավորապես հենց սիմֆոնիաներում են առավել ակնհայտությամբ դրսևորվում սովետահայ երաժշտության զարգացման բնորոշ տենդենցները, որոնք կապված են ժամանակակից ազգային երաժշտական ոճի, մեր իրականության հրատապ թեմաները մարմնավորելու հետ։

Հայկական նոր սիմֆոնիաների այդ ուրույն շրջանի սկիզբը դրեցին 1950-ական թվականների վերջին գրված Ա. Հարությունյանի և Ջ. Տեր-Թադևոսյանի գրավիչ ու հուզաթաթավ գործերը։ Դրանց հետևեցին Գ. Եղիազարյանի «Հրազդան», Է. Հովհաննիսյանի, Կ. Օրբելյանի, Ա. Աճեմյանի և շատ ուրիշների սիմֆոնիաները։ Բացառիկ էր Է. Միրզոյանի ծնծղաների և լարային նվագախմբի համար գրված սիմֆոնիայի (1961) հաջողությունը։ Այն արդարացիորեն գնահատվեց որպես այդ ժամանակաշրջանի սովետական երաժշտության ակնառու սիմֆոնիկ երկերից մեկը։ Միրզոյանի սիմֆոնիան բազմիցս կատարվել է Սովետական Միության շատ քաղաքներում և արտասահմանյան երկրներում։ Ներդաշնակորեն կատարյալ, հստակ մտահղացմամբ այդ երկը դյուրում է զգացմունքների լուսավորությամբ և վճիռությամբ։

Սովետական Հայաստանում մեծ ուշադրություն է հատկացվում նաև երաժշտագիտության զարգացմանը։ Հայ երաժշտագետների ջանքերով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում երկար տարիներ աշխատանք է տարվում ժողովրդական երաժշտության հավաքման և ուսումնասիրման, ինչպես նաև ժողովրդական երգերի հրատարակման ուղղությամբ։ Վերջին տարիներին (հատկապես 1950-ական թվականների կեսերից) հրատարակվել են հայ երաժշտության արմատական խնդիրներին նվիրված երաժշտագիտական արժեքավոր աշխատություններ։ Հիշատակության արժանի են Ք. Կուշնարյանի «Հայ միաձայն երաժշտության պատմության և տեսության հարցերը», Ա. Շահվերդյանի «Կոմիտաս» և «Ակնարկներ հայ երաժշտության պատմության», Գ. Տիգրանովի «Հայ երաժշտական թատրոնը» և այլ հետազոտություններ։ Ավարտվում է Ալ. Սպենդիարյանի երկերի 11 հատորանոց ժողովածուի հրատարակությունը։ Սկսվեց Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը։

Սովետական իշխանության տարիներին բուռն զարգացում է ապրել երաժշտությունը։ Նրանում լայնորեն ներկայացվել են ժամանակակից երաժշտական արվեստի բոլոր ժանրերն ու տեսակները՝ պարզից մինչև ամենաբարդը, երգից մինչև օպերան, բալետը, սիմֆոնիան։ Նման հարստություն և բազմազանություն հայ երաժշտական մշակույթը չի ունեցել իր ողջ պատմության ընթացքում։

3. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո հայ ժողովուրդը, Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, թևակոխեց տնտեսական ու կուլտուրական կյանքի խաղաղ զարգացման շրջան, որն իր արտացոլումը գտավ նաև կերպարվեստի մեջ։ Սովետահայ կերպարվեստն ապրեց վերելքի նոր փուլ։ Գեղարվեստական կյանքը դարձավ ավելի աշխույժ և հարուստ։ 1945 թվականին Երևանում հիմնադրվեց գեղարվեստական ինստիտուտ։ Մայրաքաղաքում կառուցվեց նկարչի տուն՝ մեծ ու լուսավոր ցուցասրահներով, ուր պարբերաբար կազմակերպվում են հանրապետական ու անհատական ցուցահանդեսներ։ Հայաստանի նկարիչներն ու քանդակագործները մասնակցում են համամիութենական և միջազգային գեղարվեստական ցուցահանդեսներին. նրանց լավագույն ստեղծագործություններն արժանացել են պարգևների և խրախուսանքների։ Մ. Սարյանը, Դ. Նալբանդյանը, Հ. Զարդարյանը, Գ. Խանջյանը և քանդակագործ Ա. Սարգսյանը ընտրվեցին ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ կամ թղթակից-անդամ։ 1961 թվականին Մ. Սարյանի «Իմ հայրենիքը» նկարաշարն արժանացավ Լենինյան մրցանակի։ 1963 թվականին Մ. Սարյանին շնորհվեց ՍՍՀՄ ժողովրդական նկարչի կոչում։

Ծտպատերազմյան ժամանակաշրջանում զգալի չափով մեծացավ Սովետական Հայաստանի կերպարվեստագետների միության ստեղծագործական կոլեկտիվը։ 1966 թվականին նրա անդամների թիվը անցնում էր 300-ից։ Միության բաժանմունքներ են ստեղծվել Լենինականում և Կիրովականում։

Բազմահազար հայերի թվում սիրյուրքից Սովետական Հայաստան են ներգաղթել մի շարք նկարիչներ ու քանդակագործներ, որոնք հայրենիքում ստեղծագործական նոր վերելք են ապրում։ Նրանցից քանդակագործ Գ. Ահարոնյանը, նկարիչներ Բ. Վարդանյանը, Հ. Գալենցը և ուրիշներ արժանացան հանրապետության վաստակավոր նկարչի կոչման։

1958 թվականին Մոսկվայում տեղի ունեցավ Սովետական Միության նկարիչների առաջին համագումարը։ Ստեղծվեց ՍՍՀՄ նկարիչների միություն, որն իր առաջնակարգ խնդիրը համարեց՝ «ընթանալ կյանքի ճշմարտության ճանապարհով, ոգեշնչվել նոր կյանք կառուցողի՝ ժողովրդի հերոսական պայքարով»։

Սովետահայ նկարիչներն ու քանդակագործները, լավ հասկանալով ժողովրդի ու կուսակցության պահանջը, ձեռնամուխ եղան կերպարվեստի հետագա զարգացմանը, այն ծառայեցնելով կոմունիզմի կառուցմանը։ Նրանք ավելի համարձակորեն լծվեցին արդի կարևոր թեմաների կատարմանը, ստեղծեցին ժողովրդի կյանքում տեղի ունեցող հեղափոխական մեծ վերափոխումներն արտացոլող և սովետական մարդու հոգեկան աճը ցուցադրող պատկերներ, քանդակագործական կոմպոզիցիաներ և գրաֆիկական նկարաշարքեր։

Ըստ առանձին բնագավառների, սովետահայ կերպարվեստը ետպատերազմյան ժամանակաշրջանում ներկայացնում է հետևյալ պատկերը. սոցիալիստական ռեալիզմի մեթոդը և սովետական իրականության ճշմարիտ արտացոլման պահանջը նպաստեցին նկարչության հիմնական ժանրի՝ թեմատիկ պատկերի արագ զարգացմանը։ 1950-ական թվականներից սկսած թեմատիկ-սյուժետային նկարչությունն արդեն դարձավ հիմնական, առաջատար ժանրը սովետահայ արդի կերպարվեստի մեջ։

Ստեղծվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողների կյանքն ու կենցաղը արտացոլող, ինչպես նաև Հայաստանի գեղատեսիլ բնության ու պատմական անցյալի թեմաներով բազմաթիվ պատկերներ։

Գունանկարչության մեջ խոշոր և առաջատար դեր է կատարում մեր ժամանակի մեծանուն արվեստագետ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը։ Չնայած պատկառելի տարիքին, հանճարեղ նկարիչը ապրում է ստեղծագործական բուռն վերելք։ Նա ստեղծել և ստեղծում է ժամանակակից կյանքն արտացոլող բազմաթիվ նոր բնանկարներ, դիմանկարներ և նատյուրմորտներ։ Հանրահայտ են Մ. Սարյանի «Ծաղկած ծառեր», «Տեսարան Արագածի բարձունքից», «Վալվար», «Կեսօր», «Բյուրական», «Գառնիի ձորը», և մյուս բնանկարները, որոնց համար բնորոշ են մարդուն շրջապատող աշխարհի կենսուրախ, գունագեղ ընկալումը և կենսահաստատ լավատեսությունը։ Հատկանշական է «Իմ հայրենիքը» պատկերաշարը, որը, ինչպես նշվեց, արժանացավ Լենինյան մրցանակի։ 1965 թվականին Մ. Սարյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Մեր ժամանակի առաջավոր մարդու ընդհանրացրած կերպարներ են նաև Մ. Սարյանի կերտած լավագույն դիմանկարները։ Խորությամբ բացահայտելով մարդկային բնավորության հատկանշական կողմերը, Մ. Սարյանն ստեղծել է ժողովրդական արտիստ Հ. Խարազյանի, գրող Ն. Տիխոնովի, բանվոր-բրիգադավար Մաթևոսյանի, գիտնական Ա. Հովհաննիսյանի, նկարչուհի

Տ. Յարլոնսկայայի կենդանի, արտահայտիչ կերպարները, «Իմ ժամանակի երիտասարդ մտավորականները» դիմանկարների շարքը, որոնք մտել են սովետական կերպարվեստի ոսկե գանձարանը։

Մեծ նկարչի ծննդյան 80-ամյակի առթիվ 1960 թվականին Երևանում, այնուհետև Թբիլիսիում, Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Պրագայում, Բեռլինում և Բուդապեշտում կազմակերպված նրա անհատական ցուցահանդեսներում առանձնապես մեծ հաջողություն գտան դիմանկարներն ու բնանկարները։

Լուսեղ ու պայծառ են Մ. Սարյանի նատյուրմորտները։ Սովետական մարդկանց կենսուրախ կյանքի, նյութական ու հոգևոր հարստության գաղափարն են արտահայտում նրա «Երևանյան աշնանային նատյուրմորտ», «Մայիսյան ծաղիկներ», «Ոսկե աշուն» և բազմաթիվ այլ գործեր։

Մարտիրոս Սարյանը հայրենի բնության և սովետական մարդկանց խանդավառ երգիչն է նկարչության մեջ։ Նրա արվեստը խորապես մարդկային է։ Նրա ստեղծագործությունները հարստացնում են մարդու հոգեկան աշխարհը, իրենց ներգործուն մեծ ուժով նպաստում մասսաների գեղարվեստական դաստիարակությանը։ Դրանք մեծարժեք ներդրում են սովետական արվեստի մեջ։

Հայաստանի կանաչավետ լեռնային բնության ու կոլտնտեսային աշխատանքի հոյակապ տեսարաններ է պատկերել ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանը։ Նրա ստեղծած «Ազատ գետը Գառնիում», «Գարունը Հայաստանում», «Այրիվանքի դաշտերում» և մանավանդ «Հայկական պեյզաժ» ընդհանրացնող պատկերները սովետական բնանկարչության առաջնակարգ ստեղծագործություններից են։ Նկարչի գործերում կարևոր տեղ են գրավում Սևանի բնության և արդյունաբերական օբյեկտների տեսարանային պատկերները («Անդորրը Սևանում», «Ալավերդի» և «Կիրովական»), որոնց մեջ ինդուստրիալ մոտիվը վարպետությամբ կապելով շրջապատի բնության հետ, նա ուժեղացնում է ստեղծագործության հասարակական հնչեղությունը։ Գ. Գյուրջյանի պատկերները կոլորիտային են, զգայողական և իրենց մեջ կրում են հերոսական մեծ շունչ։ Նա բնանկար-պատկերի խոշոր վարպետ է և անցյալի ազգային նկարչության ռեալիստական լավագույն ավանդները շարունակող ու հարստացնող արվեստագետներից մեկը սովետահայ նկարչության մեջ։

Բնության տեսարանների պատկերման և ժամանակակիցների դիմանկարների հետ մեկտեղ մի շարք նոր ու մեծակտավ թեմատիկ-սյուժետային պատկերներ է ստեղծել հանրապետության ժողովրդական նկարիչ Դ. Նալբանդյանը։ «Իշխանությունը ժողովուրդներին», «Ապասիոնատա», «Վ. Ի. Լենինը 1919 թվականին», «Բաումանի թաղումը», «Վ. Ի. Լենինը և Մ. Գորկին Կապրի կղզում» և պատմա-հեղափոխական թեմաներով մյուս ստեղծագործություններում Դ. Նալբանդյանը գեղարվեստորեն բացահայտում է Վ. Ի. Լենինի և հեղափոխական զանգվածների դերը սոցիալիստական հասարակարգի ստեղծման, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման գործում։ Նրա լավագույն բազմաֆիգուր սյուժետային պատկերները դրական նշանակություն ունեցան սովետահայ կերպարվեստի մեջ պատմա-հեղափոխական ժանրի հետագա զարգացման համար։

Գլխավորապես այդ ժանրի բնագավառում է ընթանում վաստակավոր նկարիչ Հ. Ավետիսյանի և ժողովրդական նկարիչ Էդ. Իսաբեկյանի գործունեությունը։ Վերջինիս «Դավիթ-Բեկ», «Ավարայրի ճակատամարտը», «Հաղպատի գյուղացիների ապստամբությունը 1903 թվականին» մասսայական տե-



Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ
Մ. Սարյան

սարաններ ներկայացնող և մանավանդ «Պատասխան Հազկերտին» մեծակտավ, բազմաֆիգուր-սյուժետային պատկերները արտացոլում են հայրենիքի անկախության և ժողովրդի ազատության համար մղված հերոսական պայքարը։ Այդ մոտիվն իր արտահայտությունը գտավ նաև մի շարք երիտասարդ նկարիչների ստեղծագործություններում։

Հայրենի բնության, կոլտնտեսային և արդյունաբերական աշխատանքի, ժողովրդի կյանքի ու կենցաղի թեմաներով բազմաթիվ նոր պատկերներ ստեղծեցին հանրապետության ժողովրդական նկարիչներ Մ. Աբեղյանը, Խ. Եսայանը, Ա. Բեքարյանը, Հ. Զարդարյանը և ուրիշներ։ Հ. Զարդարյանի «Սևանի

հիդրոկայանի թունելի շինարարների հաղթանակը», Մ. Արեղյանի «Դեղձհավաք» և այլ պատկերներ ցույց են տալիս, որ կոլեկտիվ ու հանրօգուտ աշխատանքը մեր երկրում պատվի, փառքի և արիության գործ է։ Նրանց ստեղծագործություններում հպարտությամբ է դրսևորված սովետական մարդու բարոյական կերպարը, լավատեսական զգացումը և ժամանակի շունչը։

1950—1960-ական թվականներին կերպարվեստի մեջ մուտք են գործում Երևանի, Մոսկվայի և Լենինգրադի գեղարվեստական բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդ շատ գունանկարիչներ, որոնք սովետահայ նկարչությունը հարստացնում են ժամանակակից թեմաներով, նոր և թարմ ստեղծագործություններով։

Այդ ժամանակաշրջանի սովետահայ թեմատիկ-սյուժետային նկարչության լավագույն ստեղծագործություններից են Գ. Խանջյանի «Սևանի ափին» պատկերը, որը ներկայացնում է ձկնորսների կոլեկտիվ աշխատանքը, Ս. Մուրադյանի «Վերջին գիշերը» (Կոմիտասի կյանքից), ինչպես նաև Ա. Նալբանդյանի, Ս. Սաֆարյանի, Գ. Աղասյանի ճանաչում գտած ստեղծագործությունները։

Նկարչության մեջ որոշակի տեղ են գրավել երիտասարդ շնորհալի նկարիչներ Հ. Սիրավյանը, Լ. Կոջոյանը, Հ. Համբարձումյանը, նկարչուհիներ Լ. Բաժբեուք-Մելիքյանը, Ն. Գյուլիքեվխյանը և ուրիշներ։ Իրենց ոճական առանձնահատկություններով տարբեր երիտասարդ արվեստագետներին միավորում է սովետական նոր քաղաքացու կենսահաստատ աշխարհընկալումը և լավատեսությունը։

Նոր զարգացում ապրեցին գրաֆիկական նկարչության բոլոր հիմնական տեսակները։ Առանձնապես բարձր զարգացման հասան գրքի գրաֆիկան և փորագրության արվեստը։

Միավորելով գրաֆիկական բարձր վարպետությունը տպագրության տեխնիկայի հետ, ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանն ստեղծել է Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի կենդանի, հրապուրիչ կերպարները, կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի «Երկերի ժողովածու»-ի առաջնաթերթը, Մ. Գորկու «Աղջիկն ու մահը» պոեմի նկարազարդումները։ Գրաֆիկական նյութի վրա կատարված այդ աշխատանքներն աչքի են ընկնում կատարման վստահ ու համարձակ բնույթով։ Նրանց մեջ դրսևորված են ռեալիստական պատկերավորման ու կոմպոզիցիայի բարդ խնդիրների տիրապետման հեղինակի բարձր պրոֆեսիոնալ կարողությունները և արտահայտչականության ինքնատիպ միջոցները։ Ստեղծագործական մեծ երևակայությամբ հարուստ ու բազմօրինակ են «Հայկական ժողովրդական հեքիաթներ»-ի, Ստ. Զորյանի «Հեքիաթների» և Հ. Թումանյանի «Փարվանա» լեգենդի նրբաճաշակ նկարազարդումները։ Հ. Կոջոյանը սովետական գրաֆիկական արվեստի կարկառուն ներկայացուցիչն է։

Գրքի գրաֆիկայի բնագավառում իրենց լավագույն ստեղծագործություններով լայն ճանաչում գտան հանրապետության վաստակավոր նկարիչներ Ռ. Բեդրոսյանը, Կ. Տիրատուրյանը, Ա. Մամամջյանը, նկարիչներ Ա. Գասպարյանը, Մ. Սոսոյանը և ուրիշներ։

Գրքի գեղարվեստական ձևավորման ու նկարազարդման ասպարեզում նշանակալից աշխատանքներ են կատարել նաև մի շարք գունանկարիչներ։ Գրքի գրաֆիկայի առաջնակարգ ստեղծագործություններից են Հ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն», «Գիքորը», «Անուշ», Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» և Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքերի նկարազարդումները, որոնք կատարել է ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ Գրիգոր Խանջյանը։ Խորապես զգալով հայ դասական գրականության մարդասիրական ուժը և բանաստեղծական ոգին, Գ. Խանջյանը ստեղծել է հուզականությամբ լի, թարմ լիրիկական պատկերներ, որոնք կերպարային միջոցներով բացահայտում են գրական ստեղծագործությունների հիմնական գաղափարը և հերոսների հոգեբանությունը։ Գ. Խանջյանի նկարազարդումները նշանակալից ավանդ են սովետական գրաֆիկական արվեստի մեջ։

Խոր հուզականությամբ են հագեցած Մ. Աբեղյանի նկարազարդումները Հ. Թումանյանի «Ախթամար» լեգենդի թեմայով։ Արտահայտելով Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ի հերոսական ոգին և հայրենասիրությունը, Էդ. Իսաբեկյանը վեպի նկարազարդումներում ստեղծել է բազմաֆիգուր-սյուժետային դրամատիկ կոմպոզիցիաներ և հերոսների կենդանի կերպարներ, ավելի համոզիչ դարձնելով պատմական անցքերը։ Գրքի գրաֆիկայի ասպարեզ մտած նկարիչներից շնորհալի աշխատանք են կատարում Լ. Խանամիրյանը, Լ. Մանասերյանը, Բ. Մազմանյանը և ուրիշներ։

Կ. Տիրատուրյանը, Հ. Մնացականյանը և մի շարք ուրիշ գրաֆիկ նկարիչներ տարիներ շարունակ աշխատում են հայերեն տպագրական ու նկարչական տառատեսակների հետագա մշակման, դեղեցկացման, ավելի հստակ դարձնելու և, ընդհանրապես, տպատառերի գեղարվեստական կատարելագործման ուղղությամբ։

1950—60-ական թվականներին հաճախակի կազմակերպվող գրաֆիկական ստեղծագործությունների ցուցահանդեսներում ավելի մեծ տեղ է նվաճում դազգահային գրաֆիկան, մասնավորապես օֆորտը, լինոփորագրությունը և փայտագրությունը։ Անվանի գունանկարիչ Մ. Աբեղյանի՝ ժամանակակից կյանքն արտացոլող լինոփորագրությունները, վաստակավոր նկարիչ Վ. Այվազյանի աշխատանքային ու կենցաղային թեմաներով օֆորտները, Ռ. Բեդրոսյանի՝ Հայաստանի բնության տեսարաններ պատկերող փայտագրական աշխատանքները և հատկապես նրա գրքի նշանները հայտնի են նաև հանրապետության սահմաններից դուրս։ Գրաֆիկական նյութի վրա աշխատող Սովետական Հայաստանի բազմավաստակ վարպետներն իրենց բարձրարվեստ ստեղծագործություններով ուրույն տեղ են նվաճել սովետական գրաֆիկական արվեստի պատմության մեջ։

Ավագ և միջին սերնդի վարպետների հետ դազգահային գրաֆիկայի բնագավառում աշխատում են մի շարք շնորհալի ու խոստումնալից երիտասարդ նկարիչ-գրաֆիկներ։

Ետպատերազմյան շրջանում լայն տարածում գտան կերպարվեստի ամենամասսայական և մարտական տեսակները՝ պլակատը և ծաղրանկարչությունը։ Կոմունիստական շինարարության և խաղաղության թեմաներով ստեղծվեցին բազմաթիվ պլակատներ, որոնցից ուշագրավ են Հ. Կարալյանի, Գ.

Առաքելյանի, Խ. Գյուլամիրյանի աշխատանքները, երիտասարդ նկարիչներ Ռ. Նանուշյանի «Կորչի պատերազմը» և Ա. Ասլյանի «Ո՛չ» պլակատները։ Վերջինս 1959 թվականին Բեռլինի միջազգային ցուցահանդեսում արժանացավ խրախուսական դիպլոմի։

Ծաղրանկարչության զարգացմանը զգալիորեն նպաստեց «Ողնի» երգիծական հանդեսը, որն իր շուրջը համախմբելով շնորհալի նկարիչների մի ստվար կոլեկտիվ, պարբերաբար հրատարակում է քաղաքական ու կենցաղային թեմաներով ծաղրանկարներ։ Նշանակալից են Լևոն Դենչի, Սերգեյ Արուտչյանի և Հովհ. Շավարշի ստեղծագործությունները, որոնց գրաֆիկական աշխատանքների ժողովածուները հրատարակվել են առանձին գրքույկներով։ Խորապես արտահայտիչ, տիպական ու դաստիարակիչ են Սուրեն Ստեփանյանի կենցաղային թեմաներով ծաղրանկարչական կերպարները։ «Ողնի»-ի էջերում և գեղարվեստական ցուցահանդեսներում երկրի ներքին կյանքի և քաղաքական թեմաներով սրամիտ ծաղրանկարներ են հրապարակում Հ. Տեր-Ղազարյանը, Մ. Կարապետյանը, Վ. Պողոսոմոգովը և ուրիշներ։ Ծաղրանկարչությունը և պլակատը մեր օրերում խոշոր դեր են կատարում մարդկանց կենցաղում և գիտակցության մեջ դեռևս պահպանված հնի մնացուկների վերացման և նոր՝ կոմունիստական բարոյականության ու գաղափարախոսության ամրապնդման գործում։

Եռապատերազմյան ժամանակաշրջանում լայն տարածում գտավ մոնումենտալ-հուշարձանային քանդակագործությունը և դիմաքանդակը։ Դրան մեծ չափով նպաստեց ՍՍՀՄ կառավարության 1945 թվականի որոշումը, որով խնդիր դրվեց կերտել Սովետական Միության հերոսների, ինչպես նաև հեղափոխական և մշակույթի ականավոր գործիչների հիշատակին նվիրված քանդակագործական հուշարձաններ։ Սովետահայ քանդակագործության զարգացմանը խոշոր չափով նպաստեցին նաև պարբերաբար կազմակերպվող ստեղծագործական մրցանակաբաշխությունները, որոնցում առաջնություն շահած լավագույն նախագծերի հիման վրա կառուցվեցին քանդակագործական բազմաթիվ հուշարձաններ։

Սովետահայ քանդակագործության նշանակալից ստեղծագործություններից է հանրապետության ժողովրդական նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» մեծածավալ բրոնզե հուշարձանը, որը մարմնավորում է ազգային անկախության ու ինքնուրույնության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը։ Ժողովրդական հանճարեղ էպոսի ոգուն և նրա մարդասիրական գաղափարներին հարազատ հոյակապ այդ հուշարձանը միաժամանակ արտացոլում է մեր ժողովրդի անպարտելիությունը, նրա ստեղծագործական հզոր ուժը։

Ժողովրդական նկարիչ-քանդակագործ Արա Սարգսյանի կերտած Սովետական Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի կիսանդրի-հուշարձանը զարդարում է մայրաքաղաքի Ս. Մ. Կիրովի անվան զբոսայգին։ Ուշագրավ են Ա. Սարգսյանի կերտած Հովհ. Թումանյանի հուշարձանը Երևանում, Վ. Ի. Լենինի հուշարձանը Կամո քաղաքում և բազմաթիվ դիմաքանդակներ։ Վ. Ի. Լենինի զինակից, ականավոր հեղափոխական Սուրեն Սպանդարյանի, շախմատի աշխարհի չեմպիոն Տ. Պետրոսյանի դիմաքանդակները

կերտված են կերպարի լայն ընդգրկումներով ու հոգեբանական բնութագրությամբ։

Հայ մեծ լուսավորիչ ու դեմոկրատ, գրող Խ. Աբովյանի նոր կերպարն է ներկայացնում ժողովրդական նկարիչ-քանդակագործ Սուրեն Ստեփանյանի քանդակած հուշարձանը Երևանում։ Նրա ստեղծագործություններից լայն ճանաչում են գտել Վ. Ի. Լենինի մեծածավալ հուշարձանը Գորիսում, գրող Դ. Դեմիրճյանի, կոմպոզիտոր Օրդոյանի դիմաքանդակները, ինչպես նաև առողջ ու գեղեցիկ, ֆիզիկապես ուժեղ և հոգեպես ամուր երիտասարդ մարդու ընդհանրացված կերպարներ պատկերող «էստաֆետա» և «Բասկետբոլիստուհիներ» բրոնզե խմբաքանդակները։

Իր բարձրարվեստ ստեղծագործություններով լայն ճանաչում է գտել Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ-քանդակագործուհի Այծեմիկ Ուրարտուն։ Նրա կերտած բանվոր-բրիգադավար Ղարագյոզյանի և անվանի գիտնական Աշոտ Հովհաննիսյանի խորապես հոգեբանական դիմաքանդակները վարպետորեն վերարտադրում են այն նորը, որը ձևավորվում է մեր ժամանակի սովետական մարդու հոգեբանության մեջ։ Արտահայտիչ է նրա քանդակած Մովսես Խորենացու արձանը։ Ա. Ուրարտուն ստեղծել է կոլտնտեսային աշխատանքի թեմաներով բարձրաքանդակներ («Բերքահավաք», «Կոլտնտեսային բրիգադի հաշվետվությունը», «Առատություն»)։

Մշակույթի ականավոր գործիչների բարձրարվեստ դիմաքանդակներ է կերտել Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ և ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Կեպինյանը (Կեպինով)։ Վերջին տարիներին նրա ստեղծած դիմաքանդակները (արվեստաբան Մ. Ալպատով, ակադեմիկոս Ն. Սիսակյան, կոմպոզիտորներ Ա. Խաչատրյան, Մյասկովսկի, նկարիչներ Կորին և ուրիշներ) աչքի են ընկնում ինքնատիպությամբ, ոգեշնչվածությամբ ու գեղարվեստական մեծ հրապույրով։

Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ, հայրենադարձ Գրիգոր Ահարոնյանը, որը մինչև Սովետական Հայաստան վերադառնալը հայտնի էր Բուլղարիայում ստեղծած մի շարք հուշարձաններով, հայրենիքում կերտեց հայ, ռուս և բուլղար ժողովուրդների արժանավոր զավակներ Ալ. Մյասնիկյանի, Ա. Պուշկինի, Ա. Չեխովի, Պ. Յավորովի կիսանդրիները, որոնք դրվել են Երևանի համապատասխան դպրոցներում։ Գեղարվեստական հետաքրքրություն են ներկայացնում հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի արձանը և Հայաստանում սովետական կարգերի համար մղված մարտերում զոհված հերոսների հիշատակին նվիրված 26 մետրանոց հուշարձանը Սիսիանում։

Դիմաքանդակի ասպարեզում լուրջ հաջողությունների է հասել հանրապետության վաստակավոր նկարիչ-քանդակագործ Ն. Նիկողոսյանը։ Նրա ստեղծագործություններից նշանավոր են Սովետական Միության մարշալ Հովհ. Բաղրամյանի, Ավ. Իսահակյանի, ֆրանսիացի գրող Լուի Արագոնի, Մոսկվայի Մեծ թատրոնի մենապարուհի Մայա Պլիսեցկայայի դիմաքանդակները։ Նիկողոսյանն աշխատում է նաև մոնումենտալ-հուշարձանային քանդակագործության բնագավառում։ Նրա ստեղծագործություններից են Մոսկվայի Ապստամբության անվան հրապարակի բարձրահարկ շենքի, Վարշավայի մշակույթի պալատի 16 մեծածավալ քարե արձանները։

Ստեղծագործական վերելք են ապրել ավագ և միջին սերնդի արվեստագետները, վաստակավոր նկարիչ-քանդակագործներ Ս. Մանասյանը, Թ. Զորեքչյանը, Կ. Մեծատուրյանը և ուրիշներ։ Աճում են երիտասարդ, շնորհալի մի խումբ քանդակագործներ։

Մի շարք հայ քանդակագործներ ապրում և ստեղծագործում են եղբայրական մյուս հանրապետություններում։ Իրենց բեղմնավոր ու բարձրարվեստ ստեղծագործություններով նրանք լայն ճանաչում են գտել։ Առանձնապես նշանավոր է Վ. Թերզիբաշյանը (Մոսկվա), որը ստեղծագործել է Սովետական Միության հերոսներ Զայցևի և Պլոտնիկովի հուշարձանները Կոլոմնա և Բարնաուլ քաղաքներում, Լենինի մեծածավալ հուշարձանները Կադիևկա և Զիմքենդ քաղաքներում։ Քանդակագործության մեջ կարևոր ներդրում են կատարել Մ. Ինթիզարյանը (Ավստրիայի ազատագրական մարտերում զոհված սովետական զինվորների հիշատակին նվիրված և Վիեննայում կանգնեցված հուշարձանի հեղինակ), փոքր ձևերի քանդակագործության անվանի վարպետ Ս. Եվանգուլյանը, Հ. Ավետիսյանը (Բուլղարիայի Շիպկա ամրոց-քաղաքի մարտերի հերոս Կ. Խրիցկու հուշարձանի հեղինակ), Օ. Բարաշյանը (Ռոստով), Ա. Հովսեփյանը, Լ. Գալումյանը (Մոսկվա) և ուրիշներ։

Սովետահայ կերպարվեստի զարգացման լավագույն ստուգատես հանդիսացավ 1956 թվականին Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակը։ ՍՍՀՄ մայրաքաղաքում բացված սովետահայ կերպարվեստի ցուցահանդեսը ջերմ ընդունելություն գտավ և լայն ճանաչում բերեց Հայաստանի նկարիչներին ու քանդակագործներին։

Վերջին տարիներին Երևանում կազմակերպված էստոնական գրաֆիկական նկարչության, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի և սոցիալիստական մյուս երկրների կերպարվեստների ցուցահանդեսները, ինչպես նաև Հայաստանի նկարիչների ստեղծագործությունների փոխադարձ ցուցահանդեսները Էստոնիայում, Չեխոսլովակիայում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում և այլ երկրներում ավելի ուժեղացրին սովետահայ կերպարվեստի միջազգային կապերը։

Սովետահայ կերպարվեստի վերելքին զուգընթաց զարգացում է ապրել նաև արվեստագիտությունը։ Եռապատերազմյան ժամանակաշրջանում ստեղծվեցին մի շարք աշխատություններ սովետական ժամանակաշրջանի կերպարվեստի պատմության, սովետահայ ականավոր նկարիչների ու քանդակագործների կյանքի ու գործունեության մասին։ Լուրջ աշխատանքներ են տարվում անցյալի կերպարվեստագետների ժառանգության ուսումնասիրության բնագավառում։

Զևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետահայ կերպարվեստը զարգանում է սոցիալիստական ռեալիզմի ուղիով։ Նրա նվաճումները պայմանավորված են ժողովրդի ստեղծագործական ուժերին ազատություն տվող նոր, սոցիալիստական հասարակարգով և այն հոգատարությամբ, որ ցուցաբերում են սովետական պետությունը և կոմունիստական կուսակցությունը արվեստի զարգացման նկատմամբ։

4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենական մեծ պատերազմից հետո մեր երկրում տեղի ունեցավ գործարանների և ֆաբրիկաների, քաղաքների ու ավանների զանգվածային կառուցապատում, էներգետիկ ու հիդրոտեխնիկական կառուցվածքների մեծ շինարարություն։ Դա բարենպաստ պայմաններ էր ստեղծում ճարտարապետության զարգացման համար։

Արդյունաբերական և քաղաքացիական մեծածավալ շինարարությունը պահանջում էր վերանայել քաղաքների գլխավոր հատակագծերը։ Այդ ամենից ավելի վերաբերում էր հանրապետության մայրաքաղաքին։ Թեև 1939 թվականի գլխավոր հատակագծով դեռ քիչ բան էր իրականացված, այնուամենայնիվ, ստեղծված իրադրությունը թելադրեց նոր հատակագծի անհրաժեշտությունը, որի մշակումը կատարվեց Երևանի քաղսովետի գործկոմի ճարտարապետական բաժնում՝ Մարկ Գրիգորյանի ընդհանուր ղեկավարությամբ և Նորայր Զարգարյանի հեղինակությամբ։

1941 թվականին հաստատված Երևանի հատակագծման այս երրորդ նախագիծն ընդգրկում էր զարգացման հիսունհինգ տարվա հեռանկար։ Տերիտորիայի որոշ ընդլայնումից բացի, նախագծում հաշվի էր առնված նաև արդեն յուրացված տարածության նպատակահարմար օգտագործումը և շինարարության մեջ թույլ տրված սխալների շտկումը։

Ետպատերազմյան տարիներին կազմվեցին նաև մի շարք քաղաքների ու շրջանային կենտրոնների գլխավոր հատակագծեր։ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր ճարտարապետական գործերի վարչությունը նախաձեռնեց Ալավերդու, Ղափանի, Ջերմուկի, Հրազդանի, Սևանի, Դիլիջանի, Թումանյան ավանի և այլ բնակավայրերի հատակագծման նախագծերի պատրաստումը։

Բնակարանային շինարարության ծավալումը, քաղաքների հետագա զարգացման կապակցությամբ, պահանջում էր կատարել խիտ կառուցապատում և բնակելի տների հարկայնության բարձրացում։

Ճարտարապետները և կառուցողները, կուսակցության և կառավարության որոշումներին համապատասխան, բռնեցին կառուցապատման խոշորացման, բնակելի զանգվածների կոմպլեքսային իրականացման ուղին։

Նման շինարարության առավել ցայտուն օրինակներից է Երևանի Կիևյան փողոցը, որը քաղաքի կենտրոնական մասը, Հրազդանի վրա ձգված կամարակապ կամուրջով, կապում է Աջափնյակի և Շահումյանի շրջանի հետ։

Ետպատերազմյան ժամանակաշրջանի սովետահայ ճարտարապետության ոճական առանձնահատկությունների զարգացման տեսակետից առավել հետաքրքրական է Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակը, որի ձևավորումը սկսվել էր դեռևս պատերազմից առաջ։ Հրապարակը շրջապատող շենքերի ճարտարապետական կերպարը ստեղծված է անցյալի ժառանգության յուրացման հիման վրա։ Այդ հանգամանքը բոլոր կառույցներն ի մի է բերում ոճական առումով։ Վ. Ի. Լենինի անվան հրապարակը զարդարում են կառավարական տունը (Ալ. Թամանյան), վարչական շենքը (Ս. Սաֆարյան, մասնակցությամբ Վ. Արևշատյանի և Ռ. Իսրայելյանի), պատմության թանգարանի, «Արմենիա»

հյուրանոցի, միությունների տան և կապի մինիստրության շենքերը (Մ. Գրիգորյան և է. Սարապյան)։

Կառավարական տան պարզ ու ռացիոնալ հատակագծումը հիմք է ծառայում տարածական հավասարակշիռ հորինվածքի համար, որը զբաղեցնում է հրապարակահայաց ողջ թաղամասը։ Այստեղ պատի, իբրև շենքի կոնստրուկտիվ ու դեղարվեստական հենքի, դրսևորումը ճարտարապետության ազգային բնույթի կարևոր հատկությունն է։ Միաժամանակ այդ պատը նոր որակ է ձեռք բերել։ Ի հայտ է եկել ճարտարապետական այնպիսի մոտիվ, որին ենթարկվել է ճակատի ռիթմիկ մասնատված կոմպոզիցիան, մի բան, որ չի եղել հայկական հուշարձաններում, ուր բարակ սյուների վրա ընկած կամարաշարը բացահայտորեն ու բացառապես դեկորատիվ միջոց է։ Ձևերի անկրկնելիության և դեղարվեստական բազմազանության սկզբունքը կառավարական տան մեջ ընդլայնվել և կարմիր թելի պես անցնում է ամբողջ շենքի միջով։

Ակադեմիկոս Ալ. Թամանյանը զարգացրել է նաև ազգային ժառանգության մեկ ուրիշ բնորոշ հատկանիշ՝ կոնստրուկցիայի և դեկորի հստակ մասնատումը։ Թեև անցյալում վարպետները երբեմն դիմում էին շենքի բացահայտ զարդարմանը, բայց նրանք կոնստրուկտիվ ձևից դեկոր չէին ստեղծում։ Այդ հատկանիշն իր մարմնացումն է գտել կառավարական տան մեջ, որը շքեղորեն հագեցված է բազմազան ու հյութեղ դեկորներով ու միաժամանակ ներծ է զարդամոլությունից։

Ազգային և համաշխարհային ճարտարապետության առաջադիմական հատկանիշների քննադատական յուրացման և նորովի բացահայտման անհրաժեշտությունը Ալ. Թամանյանի ստեղծագործության կարևոր դասերից է։

Լենինի հրապարակի անսամբլի կազմավորման հաջորդ փուլը կապված է կառավարական տանը սիմետրիկ տեղադրված վարչական շենքի կառուցման հետ։ Այս կառույցի հեղինակը ճիշտ է ընտրել կառավարական տան այն հատկանիշները, որոնք պետք էր կրկնել միասնական անսամբլ ստեղծելու համար։ Սակայն ճարտարապետական ստեղծագործությունը, ինչպես ասվում է, իր դարի զավակն է։ Ս. Սաֆարյանը հետևելով կառավարական տան կենտրոնական մասի կառուցվածքի ու ձևերի բնույթին, միաժամանակ չի կարողացել հաշտվել երկրորդ և երրորդ հարկերի միջև ծավալված անխուսափելի կորստի հետ, մի բան, որ թույլ է տվել Ալ. Թամանյանը հանուն լավ համաչափությունների։ Դա ոչ միայն տնտեսական կարգի հարց է, այլև ճարտարապետության նկատմամբ արդիական հայացքի արտահայտություն։ Այստեղ էլ առաջացել է միջանկյալ հարկ՝ փոքր լուսամուտներով, մասամբ վերին սյունաշարի բարձրության կրճատման հաշվին։

Լենինի հրապարակի հարավ-արևմտյան մասի իրականացումը արտացոլում է ճարտարապետության զարդացման այն ժամանակաշրջանը, երբ վարպետության հետագա աճը և կոմպոզիցիոն ձևերի կատարելագործումն ուղեկցվում էին նաև այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսիք են շենքերը դեկորով և զարդաքանդակով ծանրաբեռնելը, զարդամոլության միտումները և այլն։

Հրապարակի այդ հատվածի շենքերում («Արմենիա» հյուրանոցը, միու-

թյունների տունը և կապի մինիստրության շենքը) շարունակվում է հրապարակի կառուցապատման ավանդույթը, միաժամանակ հանդես են գալիս նոր հատկանիշներ։ Ընդհանուր ծավալային հորինվածքի անկյունների լուծման պլաստիկ բնույթի առումով, հարազատ մնալով կառավարական տանը, Մ. Գրիգորյանը և Է. Սարապյանը վարչական շենքից փոխ են առել միջանկյալ հարկի ներմուծումը։ Հենց դա էլ որոշ չափով պայմանավորել է շենքերի տեսողական խմբավորումը հրապարակի վրա, որի առկայությամբ կառավարական տունը, ասես, մեկուսացված է մնում։ Մյուս կողմից, կամարաշարի հիմնական մոտիվի մեկնաբանությունն առանձնապես շեշտում է հրապարակի օվալի հարավ-արևմտյան կեսը։ Կառավարական տան և վարչական շենքի սյուների հզոր փնջերի վրա իջնող կամարներին այստեղ պատասխան են տալիս հարուստ շրջանակներ ունեցող կամարային խոշոր պորտալները։

1915 թ. մեծ եղեռնի զոհերի հուշարձանը Երևանում

Հարավ-արևմտյան մասի շենքերում հստակապես ցայտուն կերպով է արտահայտվել հրապարակի ճարտարապետական մի առանձնահատկությունը, որն առաջացել է կառավարական տան կողային դիրքի հետևանքով։ Այդ շենքերի կերպարները ավելի մեծ չափով թելադրված են հրապարակի վրա ունեցած դիրքով, քան իրենց ներքին բովանդակությամբ։ Այստեղ արտաքին, քաղաքաշինական-գեղագիտական նկատառումները դառնում են գերակշռող, ամբողջովին իրենց ենթարկելով ֆունկցիոնալն ու տնտեսականը։ Այս հանգամանքը շենքերին ինչ-որ չափով դեկորատիվ բնույթ է տալիս։

Վ. Ի. Լենինի անվան հրապարակի կառուցապատումը արտացոլումն է 30-ական թվականների ճարտարապետական մտածողության։

Ետպատերազմյան ժամանակաշրջանի սովետահայ ճարտարապետության նվաճումներն իրենց մարմնացումն են գտել նաև մի շարք ուրիշ կառույցներում։ Ահա դրանցից մի քանիսը։

Երևանի կենտրոնական ծածկած շուկայի շենքը (Գ. Աղաբաբյան, ինժեներ՝ Հ. Առաքելյան) հետաքրքրական է իբրև ճարտարապետական-կոնստրուկտիվ խնդիրները օրգանապես լուծելու հաջող օրինակ։ Մուտքի վիթխարի կամարն այցելուին հրավիրում է առևտրական ընդարձակ դահլիճ։ Այստեղ երկաթբետոնե բարակ կորածածկը իրականացված է այնպես, որ թեթևության տպավորություն է ստեղծում։ Դրան նպաստում է կողքի պատուհաններից առատորեն ներթափանցող լույսը։ Այս կառույցի կոնստրուկտիվ լուծման հիմ-

քում ընկած է կենտրոնական և կողային ծավալների համադրումը։ Ավելի ցածր երկյարաբանի սրահներն, իբրև դիմհարներ, իրենց վրա են առնում գլխավոր դահլիճի կորածածկի ծանրությունը։ Սրանք ենթակա դիրք են գրավում նաև իրենց ֆունկցիոնալ նշանակությամբ։ Նույն փոխադարձ կապակցությունը հստակորեն արտահայտված է ծավալատարածական հորինվածքում, որը համապատասխան լուծում է գտել ճակատների վրա։ Այս պարզ համադրությունը, որը բնականորեն բխում է շենքի բովանդակությունից, ֆունկցիայից, մարմնացում է գտել և՛ կոնստրուկցիայի, և՛ ճարտարապետական գաղափարի մեջ։ Գլխավոր մուտքի վիթխարի ցանցաճաղը զարդարված է հասկերի, մրգերի, թռչունների և ձկների հյութեղ նախշերով, օրգանապես կապված է շենքի հետ և հարստացնում է գլխավոր դահլիճի ներքին տեսքը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի շենքը (Մ. Գրիգորյան) մայրուղու վրա կառուցված եզակի բնույթի շենքի հաջող օրինակ է։ Նրա հատակագծի լուծումը, որն ապահովում է հարմարավետ շահագործում, թելադրում է մասնատել այն երեք ծավալի՝ կենտրոնական և ճակատին ուղղահայաց երկու կողային մասերի։ Այս ծավալները տեղամասի խորքը քաշելով, ճարտարապետը դրանք կենտրոնի հետ կապել է լայնական միջանցքով՝ հնարավոր նվազագույնի հասցնելով սենյակների խմբերի միջև ընկած տարածությունը։ Ուշագրավ է, որ նախագծի այսպիսի նպատակասլաց ֆունկցիոնալ հիմքը միաժամանակ արտահայտչականության նախադրյալներ է ստեղծում շենքի տարածական հորինվածքի համար։ Այսպես, հեռավոր դիտակետից ընկալելու նկատառումը, ինչպես նաև գլխավոր ճակատի հյուսիսային կողմնորոշումը, պայմանավորել են ծավալային խոշոր մասնատման նաև գեղարվեստական արդարացումը։ Մյուս կողմից, մասնատման շնորհիվ է, որ համեմատաբար փոքր բլրի վրա տեղ գտած խոշոր շենքը մասշտաբային աններդաշնակություն չի ստեղծում բլրի հետ, չի ճնշում նրան։ Այնուհետև, շենքի թևերը տեղամասի խորքը տանելով, հեղինակը հասել է ոչ միայն սենյակների հարմարավետ փոխադարձ կապի և աշխատանքային լավ պայմանների ստեղծման, այլև կարողացել է ապահովել կենտրոնական ծավալի գերիշխող դիրքը, մի ծավալ, որ մեծ չէ չափերով, բայց կարևոր է իր բովանդակությամբ։

Ընդհանուր առմամբ համանման սկզբունքներով են լուծված Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության և նրա համալիրում գտնվող գիտահետազոտական ինստիտուտների շենքերը՝ կառուցված նույն մայրուղու՝ Բարեկամության փողոցի վրա (Ս. Սաֆարյան)։ Սակայն, եթե Հայաստանի կոմկուսի Կենտկոմի շենքը խորքում տեղադրելը հնարավորություն է տվել խուսափել փողոցի երկայնական զգալի թեքության և նրան ուղղահայաց զարգացող առանցքային սիմետրիկ հորինվածքի հակադրությունից կամ, հստակեցնենք դեպս, մեղմացնել այն, ապա այստեղ հեղինակը ոչ միայն չի խուսափել այդ հակադրությունից, այլև ընդգծել է այն։ Հատակագծի լուծումը պարզ է և սեղմ։ Շենքի կենտրոնում տեղադրված նիստերի դահլիճը շրջապատված է ընդարձակ միջանցքներով, ուր միաժամանակ բացվում են աշխատասենյակների մուտքերը։ Այսպիսի դասավորությունը, որ զրկել է դահլիճը կողային բնական լուսավորությունից (այն լուսավորվում է ապակեպատ առաստաղից),

հնարավորություն է ընձեռել խուսափելու ներքին ծավալի կորստից, դրա հետ մեկտեղ ստեղծելու չմասնատված, կուռ և արտահայտիչ կառույց։ Սակայն, ընդհանուր առմամբ հաջողված այս շենքի հորինվածքի ոչ բոլոր հանգույցներն են լիովին համապատասխանում նրա շահագործման առանձնահատկություններին։



Մատենադարան

Ծտպատերազմյան ժամանակաշրջանի հասարակական կարևոր կառույցներից է Մատենադարանի շենքը Երևանում (Մ. Գրիգորյան)։ Բաղմադարյան հայ մշակույթի գրավոր հուշարձանների պահպանման, ուսումնասիրության ու ցուցադրման համար նախատեսված այս գիտական հիմնարկի ճարտարապետական կերպարը, հարկավ, պետք է ստեղծվեր ազգային ավանդների զարգացման հիման վրա։ Մյուս կողմից, շենքի տեղադրումը Լենինի պողոտայի վերջավորության վրա, սարալանջին, պայմանավորում էր նրա քաղաքաշինական դերը մայրաքաղաքի կառուցապատման մեջ։ Այս նախապայմանների կարևորության գիտակցությամբ է մոտեցել հեղինակը նախագծի մշակմանը, ստեղծելով չմասնատված, կուռ կառույց, որ պողոտային է նայում խուլ պատի վրա երկու զույգ խորշերով երիզված միակ կենտրոնական բացվածքով։

Արզնի առողջարանում կառուցված լողարանային շենքի (Հ. Մարգարյան՝ Ն. Բաժբեուքի մասնակցությամբ) մտահղացման հիմքը կառույցի ֆունկցիան է։ Շենքի տեղադրումը մեծ թեքություն ունեցող տեղանքի վրա թույլ է տվել, ներքին միասնությունը պահպանելով, նրա այդ հատվածներին տալ շահագործման համար նպաստավոր որոշ ինքնուրույնություն։ Միաժամանակ, դա թելադրել է տարածական հետաքրքիր լուծում, որը հարստացնում է կառույցի տեսողական ընկալումը։

* * *

1954 թվականի դեկտեմբերին Մոսկվայում կայացավ շինարարության հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցություն։ Նշելով Սովետական Միությունում ծավալված շինարարության վիթխարի հաջողությունները, հատկապես ետպատերազմյան շրջանում, խորհրդակցությունը միաժամանակ բացահայտեց շինարարության գործում առկա թերությունները։

Երկար տարիներ շինարարության տնտեսական կողմը ճարտարապետների ուշադրության կենտրոնում չէր։ Քիչ մտահոգվելով շենքի ներքին հարմարություններով, նախագծողները հաճախ իրենց խնդիրը տեսնում էին ճակատները ճարտարապետական ձևերով և մանրամասներով (սյունաշարեր, կամարներ, բարդ քիվեր, զարդարանքներ) շռայլորեն ծանրաբեռնելու մեջ։ Նախագծերը հաստատող օրգանները ևս արդյունավետ պայքար չէին մղում նախագծային լուծումների խնայողության համար։ Ավելին, որոշ դեպքերում նրանց որոշումները ճարտարապետներին մղում էին դեպի մասսայական շինարարության կառույցներին անհարիր մոնումենտալություն և փարթամություն հաղորդելու պրակտիկան։

Անհրաժեշտ էր ամուր կարգ ու կանոն հաստատել քաղաքաշինության գործում։

Բնակելի կառուցապատման լիարժեք և տնտեսապես շահեկան լուծումը ամենից նպատակահարմար է ազատ տարածության վրա։ Այս առումով ուշագրավ է Երևանի Շահումյանի շրջանում, Հրազդան գետի աջ ափին կառուցված նոր բնակելի զանգվածը (նախագծողների խմբի ղեկավար Մ. Մազմանյան)։ Այս զանգվածը, որը Հայաստանում կոմպլեքսային կառուցապատման առաջնեկն է, սոցիալիստական քաղաքաշինության հաջող օրինակ է։ Քաղաքաշինական հաջողություն է նաև Նորքի նոր բնակելի զանգվածի շինարարությունը Երևանում։

Լենինականում գլխավոր հատակագծի հիման վրա (Հ. Խաչբեկյան, Ս. Կարապետյան, Փ. Մանուկյան և ուրիշներ) նոր միկրոշրջաններ են ստեղծվել «Անտառային» կոչվող վայրում, Մարալիկի և Ախալքալաքի խճուղիների շրջանում։ Քաղաքի կենտրոնում կառուցվել է Արագածի փողոցը։

Մեծ քիմիայի քաղաք Կիրովականը հանրապետության արագ աճող բնակավայրերից է։ «Դիմաց» թաղամասում, ինչպես նաև Մյասնիկյանի, Մարքսի, Շահումյանի և Սովետների փողոցների միջև ընկած թաղամասերում ստեղծվել են բնակելի միկրոշրջաններ, տիպային շենքերի համալիրներ՝ տեղանքի բարեկարգումով։ Կիրովականի վերջին գլխավոր հատակագծում, որն արդեն իրագործվում է, մեծ տեղ է տրված քաղաքի գեղատեսիլ բնության օգտագործմանը։

Ճարտարապետական առաջադիմական գաղափարների մարմնացումը առավել ակնհայտ է նոր քաղաքների կառուցապատման պրակտիկայում։ Արդեն նշմարվում են Հրազդան և Ջարենցավան արդյունաբերական քաղաքների ճարտարապետական ուրվագծերը։ Յուրահատուկ ձևով կիրագործվի Աբովյան քաղաքի կառուցապատումը։ Համաձայն նախագծի (Ա. Թարխանյան, Ս. Խա-

չիկյան, Հ. Պողոսյան և ուրիշներ), այստեղ կառուցվելիք շենքերը առավել չափով կհամապատասխանեն բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկմանը։ Կառուցվելու են խոշոր համալիրներ, որոնք ընդգրկելու են 8—14 հարկանի մի քանի շենք։

Երևանի կենտրոնը, որը հիմնականում ընդգրկում է քաղաքի խիտ կառուցապատված մասը, համեմատաբար սակավ նախադրյալներ ունի ժամանակակից առաջադիմական քաղաքաշինության սկզբունքներով ամբողջական համալիրներ իրականացնելու համար։ Ուստի այստեղ նոր շինարարությունը ընթանում է մեծ մասամբ գոյություն ունեցող մայրուղիների վերակառուցման ճանապարհով։ Այսպիսի օրինակներից է Աբովյան փողոցի մի զգալի հատվածի վերակառուցումը, որտեղ իրենց արտահայտությունն են գտել սովետահայ ճարտարապետական-շինարարական պրակտիկային բնորոշ գծերը։ Ճարտարապետների կոլեկտիվը Ֆ. Դարբինյանի ղեկավարությամբ, կարողացել է մայրուղում ստեղծել ամբողջական արտահայտիչ կերպար, հարստացնել նրա գունային լուծումը և այն դարձնել ավելի կենսուրախ։

Սովետահայ ճարտարապետության աչքի ընկնող նվաճումներից է Սունդուկյանի անվան թատրոնի նոր շենքը (հեղինակ՝ Ռ. Ալավերդյան, կոնստրուկտոր՝ Ռ. Բաղալյան, մասնակցությամբ Ս. Բարխուդյանի և Գ. Մնացականյանի)։ Այս լավագույն ստեղծագործությունը, որ նախագծվել ու իրականացվել է տեղանքի բարդ պայմաններում, հատկանշական է թատերական շենքի ֆունկցիոնալ լուծման և նրա ճարտարապետական հորինվածքի ներդաշնակ միասնությամբ։ Շենքը զարդարում է լայնանիստ ճակատամուտքը (քանդակագործ՝ Ա. Հարությունյան)։ Ճեմասրահում, նրա ամբողջ լայնությամբ, պատկերված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» եռանկարը (տեղում կատարել է Հ. Սիրավյանը)։

Գեղեցիկ տեսարան է ստեղծում թատրոնի ներսի «ճմեռային» այգին։ Ուշագրավ են մշտադալար կանաչը, ինչպես նաև ապակին, տուֆի հարթությունն ու մարմարե ավազանը՝ ձկնիկներով, կերամիկայով պատած սյուներն ու աստիճանները։ Իր վառ դեկորատիվ բնույթով այս տեսարանն ընկալվում է որպես թատերական բեմադրության մի դրվագ։

Ուսանողական հանրակացարանների խոշոր համալիր է կառուցված Երևանի Զեյթուն թաղամասում (Գ. Քոչար և Շ. Ազատյան)։ Մի քանի բազմահարկ շենքերի փոխադարձ ուղղահայաց դասավորումը և նրանց միացումը ընդհանուր աստիճանավանդակներով ոչ միայն համապատասխանում է շահագործման նպատակահարմարությանը, այլև նպաստում է կերպարի արտահայտչականությանը։

Սովետահայ ճարտարապետության նվաճումներից է Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակին նվիրված ճարտարապետական-քանդակագործական խոշոր տարածական համալիրը (ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, քանդակագործներ՝ Ա. Հարությունյան, Ս. Մանասյան, Ա. Շահինյան)։ Հայրենասիրության գաղափարը այստեղ մարմնավորված է հերոսական շնչով։ Անսամբլի հուզական ներգործությունը պայմանավորված է նաև կերպարային լուծման ժողովրդայնությամբ։ Դա ոչ միայն կենդանացնում է 1918 թվականի իրադար-

ձուլությունների պատմությունը, այլև կրում է ժողովրդի կողմից նրա՝ որպես հերոսական անցյալի էջերից մեկի, գնահատման կնիքը։

Հայրենասիրության թեման ուրույն ձևով է արտահայտված Հաղթանակի կոթողում (Ռ. Իսրայելյան)։ Հայրենական պատերազմի պատմության թանգարանի ուղղաձիգ ծավալը պսակվում է Մայր Հայաստանի պղնձակոփ արձանով (քանդակագործ՝ Ա. Հարությունյան)։ Հուշարձանի վերսլաց ուրվագիծը,



Սարդարապատի հերոսամարտի հուշարձանախմբի մի մասը

նրա կերպարային լուծումը միանգամայն արդիական է։ Միաժամանակ նա հարազատ է ազգային ոճին։ Հյութեղ ու նրբաճաշակ զարդաքանդակները, հատկապես գլխավոր մուտքը երիզող 19 չկրկնվող վարդերը, լրացնում են այս բարձրարվեստ կոթողի գեղարվեստական նկարագիրը։

1915 թվականի եղեռնի զոհերի հուշարձանի (Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան, նկարիչ՝ Հ. Խաչատրյան) հորինվածքը կառուցված է հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող վերսլաց կոթողի և հատած բուրգի ձև ունեցող ծավալի հակադրության վրա։ Դրա հետ մեկտեղ առանձին մեծածավալ քարերից կազմված այդ հուշակառույցը, որի ներսում վառվում է անշեջ հուրը, դիտողին ներշնչում է կերպարային հեռավոր ասոցիացիաներ։ Այդ ասոցիացիաները ո՛չ որոշակի են, ո՛չ էլ միարժեք։ Նրանք կարող են տանել և՛ դեպի գմբեթի կերպարը, և՛ դեպի դամբարան, և՛ դեպի ժողովրդական ճարտարապետության հնագույն կառուցվածքները։ Այսպիսով, հուշարձանի թարմ ու նորարարական հորինվածքը ստանում է իր գաղափարա-գեղագիտական նշանակությանը համապատասխան ավանդույթային երանգավորում։

Վաթսունական թվականներին մայրաքաղաքում կառուցվեցին նաև «Դինամո» ընկերության սպորտային դահլիճը (Կ. Հակոբյան և Ն. Ալավերդյան), պետական համալսարանի կենտրոնական շենքը և նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի համալիրը (Է. Տիգրանյան), ժողովրդական տնտեսության նվաճումների հանրապետական ցուցահանդեսի տաղավարները (Լ. Գևորգյան, Ֆ. Դարբինյան, Ջ. Թորոսյան, կոնստրուկտորներ՝ Ռ. Մանուկյան և ուրիշներ), Աշտարակի ռադիո-էլեկտրոնիկայի ինստիտուտը (Ս. Գուրզադյան և Մ. Մանվելյան), շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտի շենքերի համալիրը Երևանում (Մ. Միքայելյան) և այլն։



Էրեբունի—Երևան

Շինարարության հարցերի վերաբերյալ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշումներում մշտապես ընդգծվել է, որ ճարտարապետների գլխավոր խնդիրը տիպային ռացիոնալ նախագծերի ստեղծումն է։

Հայաստանում տիպային նախագծման գործը սկիզբ է առել Հայրենական պատերազմից հետո։ Մասսայական շինարարությունը տարվում է տիպային նախագծով։ Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի շինարարության ինդուստրացման համար։ Սովետահայ ճարտարապետության պրակտիկայում նոր երևույթ է հավաքովի շենքերի կառուցումը։ Ինդուստրիալ շինարարության այդ մեթոդը առաջ քաշեց մի շարք ճարտարապետական բարդ խնդիրներ, որոնց ճիշտ լուծումից է կախված այդպիսի շենքերի ֆունկցիոնալ և գեղագիտական լիարժեքությունը։

Ճարտարապետների և շինարարների առջև նոր խնդիրներ ծառացան նաև արտադրական շենքերի նախագծման և կառուցման բնագավառում։ Ելնելով առաջավոր տեխնոլոգիայի և տնտեսական նպատակահարմարության պահանջներից, անհրաժեշտ էր խոշորացնել շենքերի ծավալները, ընդհանուր ծածկի տակ միավորելով մի շարք աշխատամասեր, երբեմն՝ ամբողջ գործարան։ Հայաստանի ճարտարապետները կարողացան ավելի մոտենալ գործարանային շենքի ռեալիստական կերպարին, նրա հարմարավետ հատակագծային լուծմանը։ Այդ բնագավառի հաջողված գործերի թվին կարելի է դասել,

օրինակ, Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի էլեկտրաշարժիչների մեքենայացված և ավտոմատացված արտադրական տեղամասը, գինեթթվի գործարանը, էլեկտրալամպերի գործարանի վարչական շենքը, էջմիածնի գինու գործարանի թորման արտադրամասը, պանրի սառցա-պահեստը Երևանում և այլն (կառուցված են «Հայարդնախագիծ» ինստիտուտի նախագծերով)։

Զգալի նվաճում է ացետատային մետաքսի խոշորագույն գործարանի նախագծումն ու կառուցումը Կիրովականում։ Քսան հեկտար տարածության վրա տեղադրված այդ խոշոր ձեռնարկությունը կառուցված է տեխնիկայի վերջին խոսքով։ Միասնական ծավալով լուծված, հիմնականում միահարկ հսկայական շենքն ընդգրկում է գրեթե բոլոր արտադրամասերը, ինչպես նաև կենցաղային սպասարկման սենյակները։

Պատերազմից հետո ծավալված բազմաթիվ մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը (Գյումուշի, Երևանի և այլ կայաններ, Տ. Մարությանի նախագծով) հիմք դարձավ արդյունաբերական ճարտարապետության այդ յուրահատուկ ճյուղի արագ զարգացման համար։

Այսպիսով, ետպատերազմյան տարիներին, կոմունիստական շինարարության ծավալման շնորհիվ, նոր զարգացում ապրեց սովետահայ ճարտարապետությունը։